



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

ԲԱՆԲԵՐ

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(70)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2024

Բանբերը հրատարակվում է տարեկան երկու անգամ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Вестник издается два раза в год по решению ученого совета Государственного университета имени В. Брюсова.

Bulletin is published twice a year by the decision of Brusov State University Scientific Council.

Խմբագրական խորհուրդ՝

Գյուրջինյան Դավիթ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (*գլխավոր խմբագիր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան*)

Եղիազարյան Գայանե

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (*գլխավոր խմբագրի տեղակալ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան*)

Աբրահամյան Կարինե

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան*)

Գասպարյան Գայանե

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան*)

Համբարձումյան Դիանա

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան*)

Աբրահամյան Սուրեն

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան*)

Էթարյան Ելենա

բանասիրական գիտությունների դոկտոր (*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան*)

Սարգսյան Իննա

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան*)

Թովուզյան Արդա

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան*)

Խաչատրյան Կարեն	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ</i>)
Միքայելյան Միքայել	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր (<i>ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ</i>)
Օրդուխանյան Էմիլ	քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ</i>)
Սարվազյան Լիլիթ	փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ</i>)
Պախսարյան Նարայա	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Մոսկվայի պետական համալսարան, ՌԴ</i>)
Սերեբրյակովա Սվետլանա	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Հյուսիս-Կովկասյան ֆեդերատիվ համալսարան, Ռուսաստանի թարգմանիչների միության Ստավրոպոլյան մարզային բաժանմունք, ՌԴ</i>)
Միսկին Սերգեյ	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարան, ՌԴ</i>)
Կուդրյավցև Վլադիմիր	հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (<i>Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարան, Մոսկվայի հոգեվերլուծության ինստիտուտ, ՌԴ</i>)
Գլյուկովա Ժաննա	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>Էմանուել Կանյի անվան կրթության և հումանիտար գիտությունների ինստիտուտ, Կալինինգրադ, ՌԴ</i>)
Շահվերդյան Անուշ	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ (<i>Համաշխարհային բանկի կրթության գծով միջազգային խորհրդարան, Վաշինգտոն, ԱՄՆ</i>)

Խմբագրական կազմ՝

Թովմասյան Հրանուշ	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հեքեքյան Նարինե	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գևորգյան Լիլիթ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Բաղայան Լիլիթ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ղազարյան Դոնարա	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Սաֆարյան Լիանա	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Վեյլան Կարեն	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ռաֆայելովա Քրիստինե	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ապրեսովա Սոնյա	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ղարիբյան Դավիթ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հարությունովա Քրիստինա	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մուսեյան Ռուզան	բանասիրական գիտությունների թեկնածու

Տեխնիկական խմբագիր՝

Փիլավջյան Հասմիկ

Редакционный совет:

Գյորձջինյան Դավիթ	кандидат филологических наук, доцент (гл. редактор, Государственный университет имени В. Брюсова)
Էգուазարյան Գայանե	доктор филологических наук, профессор (зам. гл. редактора, Государственный университет имени В. Брюсова)
Աբրաамյան Կարինե	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)

Гаспарян Гаяне	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Амбардзумян Диана	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Абраамян Сурен	доктор филологических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Этарян Елена	доктор филологических наук (Государственный университет имени В. Брюсова)
Сарксян Инна	доктор педагогических наук, профессор (Государственный университет имени В. Брюсова)
Топузян Аида	доктор педагогических наук, профессор (Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна)
Хачатрян Карен	доктор исторических наук, профессор (Ереванский государственный университет, факультет истории)
Микаелян Микаел	доктор экономических наук, профессор (Институт экономики имени М. Котаняна НАН РА)
Ордуханян Эмиль	кандидат политических наук, доцент (Институт философии, социологии и права НАН РА)
Сарвазян Лилит	кандидат философических наук, доцент (Институт философии, социологии и права НАН РА)
Пахсарян Наталья	доктор филологических наук, профессор (Московский государственный университет, РФ)
Серебрякова Светлана	доктор филологических наук, профессор (Северо-Кавказский федеральный университет, Ставропольское краевое отделение Союза переводчиков России, РФ)

Мыскин Сергей	доктор филологических наук, профессор, (Московский городской педагогический университет, РФ)
Кудрявцев Владимир	Доктор психологических наук, профессор, (Московский государственный психолого- педагогический университет, Московский институт психоанализа, РФ)
Шахвердян Ануш	кандидат педагогических наук, доцент (Международный консультант Всемирного банка по образованию, Вашингтон, США)

Редакционная коллегия:

Товмасын Грануш	доктор филологических наук, профессор
Экекян Нарине	кандидат филологических наук, доцент
Геворгян Лилит	кандидат филологических наук, доцент
Бадалян Лилит	кандидат филологических наук, доцент
Казарян Донара	кандидат филологических наук, доцент
Сафарян Лиана	кандидат филологических наук, доцент
Велян Карен	кандидат филологических наук, доцент
Рафаелова Кристина	кандидат филологических наук, доцент
Апресова Соня	кандидат филологических наук, доцент
Гарибян Давид	кандидат филологических наук, доцент
Арутюнова Кристина	кандидат педагогических наук, доцент
Мусяян Рузан	кандидат филологических наук

Технический редактор:

Пилавджян Асмик

Editorial Council:

Gyurjinyan Davit	Candidate of Sciences (Philology), Associate Professor (<i>Brusov State University</i>)
Yeghiazaryan Gayane	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
Khachikyan Anaida	Doctor of Sciences (Philology), Professor (<i>Brusov State University</i>)
Abrahamyan Karine	Doctor of Sciences (Philology), Professor

<i>Gasparyan Gayane</i>	<i>(Brusov State University)</i> Doctor of Sciences (Philology), Professor <i>(Brusov State University)</i>
<i>Hambardzumyan Diana</i>	Doctor of Sciences (Philology), Professor <i>(Brusov State University)</i>
<i>Abrahamyan Suren</i>	Doctor of Sciences (Philology), Professor <i>(Brusov State University)</i>
<i>Etaryan Yelena</i>	Doctor of Sciences (Philology), <i>(Brusov State University)</i>
<i>Sargsyan Inna</i>	Doctor of Sciences (Pedagogy), Professor <i>(Brusov State University)</i>
<i>Topuzyan Aida</i>	Doctor of Sciences (Pedagogy), Professor <i>(Armenian State Pedagogical University after KH. Abovyan)</i>
<i>Khachatryan Karen</i>	Doctor of Sciences (History), Professor <i>(Yerevan State University, Faculty of History)</i>
<i>Mikaelyan Mikael</i>	Doctor of Sciences (Economics), Professor <i>(Institute of Economics after M. Kotanyan NAS RA)</i>
<i>Ordukhanyan Emil</i>	Candidate of Sciences (Political Sciences), Associate Professor <i>(Institute of Philosophy, Sociology And Law of NAS RA)</i>
<i>Sarvazyan Lilit</i>	Candidate of Sciences (Philosophy), Associate Professor <i>(Institute of Philosophy, Sociology And Law of NAS RA)</i>
<i>Pakhsaryan Natalya</i>	Doctor of Sciences (Philology), Professor <i>(Moscow State University, RF)</i>
<i>Serebryakova Svetlana</i>	Doctor of Sciences (Philology), Professor <i>(North-Caucasian Federal University, Stavropol Regional Department of the Russian Translator's Union, RF)</i>
<i>Mskin Sergey</i>	Doctor of Sciences (Philology), Professor <i>(Moscow City University, RF)</i>
<i>Kudryavtsev Vladimir</i>	Doctor of Sciences (Psychology), Professor <i>(Moscow City University, Moscow Institute of Psychchoanalysis, RF)</i>
<i>Glotova Zhanna</i>	Candidate of Sciences (Philology), Associate Professor <i>(Immanuel Kant Baltic Federal University, Kaliningrad, RF)</i>

Shahverdyan Anush Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor (*World Bank International Consultant on Education, Washington, USA*)

Editorial Board:

Tovmasyan Hranush Doctor of Sciences (Philology), Professor
Heqeqyan Narine Candidate of Sciences (Philology), Associate Professor
Gevorgyan Lilit Candidate of Sciences (Philology), Associate Professor
Badalyan Lilit Candidate of Sciences (Philology), Associate Professor
Kazaryan Donara Candidate of Sciences (Philology), Associate Professor
Safaryan Liana Candidate of Sciences (Philology), Associate Professor
Velyan Karen Candidate of Sciences (Philology), Associate Professor
Rafayelova Qristine Candidate of Sciences (Philology), Associate Professor
Apresova Sonya Candidate of Sciences (Philology), Associate Professor
Gharibyan David Candidate of Sciences (Philology), Associate Professor
Harutyunova Kristina Candidate of Sciences (Pedagogy), Associate Professor
Museyan Ruzan Candidate of Sciences (Philology)

Technical Editor:

Pilavjyan Hasmik

Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի 1(70): - Երևան, Լինգվա, 2024, 144 էջ:

Вестник Государственного университета имени В. Брюсова 1(70). - Ереван, Лингва, 2024, 144 с.

Bulletin of Brusov State University 1(70). - Yerevan, Lingva, 2024, 144 pages.

ISSN 1829-3107
© Լինգվա, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ
CONTENTS

Հորի Բարսեղյան Անգլերենի համացանցային նորաբանությունների բառակազմական առանձնահատկությունները	11
Зори Барсегян Словообразовательные особенности английских интернет неологизмов	
Zori Barseghyan Derivational Peculiarities of English Internet Neologisms	
Լիլիթ Գևորգյան Վ. Դավթյանի «Անխորագիր» վիպակ-էսսեի լեզվաոճական որոշ առանձնահատկություններ (ոճական կառույցներ և խոսքի կառուցվածքային բաղադրիչներ)	25
Лилит Геворгян Некоторые языковые и стилистические особенности повести- эссе В. Давтяна «Без названия» (стилистические структуры и структурные компоненты речи)	
Lilith Gevorgyan Some Linguistic and Stylistic Features of the Novella-Essay “Untitled” by Vahagn Davtyan (Stylistic Structures and Structural Components of Speech)	
Դավիթ Գյուրջինյան Սլավոնական լեզուների հայերեն անունների ընդհանուր նկարագրությունը տարժամանակյա մոտեցմամբ	48
Давид Гюрджинян Общее описание армянских названий славянских языков в диахроническом аспекте	
Davit Gyurjinyan General Description of Armenian Names of Slavic Languages from Diachronic Perspective	
Տոն Լին, Շիցի Ճոու, Օլգա Կեսարևա Չինարենում և ռուսերենում «𐌆(Քամի)» հասկացույթի զուգորդային-իմաստային դաշտի համեմատական վերլուծություն	91

Лин Дун, Шици Чжоу, Кесарева Ольга

Сопоставительный анализ ассоциативного семантического поля китайско-русского концептуального слова «风(ветер)»

Ling Dong, Shiqi Zhou, Olga Kesareva

Comparative Analysis of the Associative-Semantic Field of the Concept“风(Wind)”in Chinese and Russian

Արևհատ Խաչատրյան

Երևակայականի և իրապատումի փոխներգործությունը Ջուլիան Բարնսի «Էլիզաբեթ Ֆինչը» վեպում

Ареват Хачатрян

Взаимодействие воображаемого и действительного в романе Джулиана Барнса «Элизабет Финч»

Arevhat Khachatryan

Interaction of the Imaginary and the Real in “Elizabeth Finch” by Julian Barnes

103

Անահիդ Մովսիսյան

Մանկական գրականության թարգմանության առանձնահատկությունների մասին

Анаида Мовсисян

Об особенностях перевода детской литературы

Anaida Movsisyan

About the Peculiarities of Translation of Children's Literature

116

Ռուզան Մուսեյան

Անգլերեն «Հագուստ» բառիմաստային խմբի լեզվամշակութային վերլուծություն

Рузан Мусеян

Лингвокультуралагический анализ лексико-семантической группы «Одежда» в английском языке

Ruzan Museyan

Linguo-cultural Analysis of Lexico-Semantic Group "Clothes" in English

131

Տեղեկություններ հեղինակների մասին

Сведения об авторах

Information about the Authors

142

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԶՈՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում անդրադարձ է կատարվում անգլիալեզու համացանցային խոսույթի որոշ առանձնահատկություններին, ինչպես նաև կապի տեխնոլոգիաների ոլորտում նորաբանությունների առաջացման բառակազմական եղանակներին: Համացանցային նորաբանությունների ձևաբանական վերլուծությունը ցույց տվեց, որ նորաբանությունների ձևավորման համար օգտագործվում են այնպիսի բառակազմական եղանակներ, ինչպիսիք են ածանցումը, բառաբարդումը, բաղարկությունը, հապավումը, փոխառությունը, փոխարկումը, բառիմաստի ընդլայնումը: Ընտրված 180 բառային միավորների վերլուծության արդյունքում պարզվեց, որ նորաբանությունների կազմման առաջատար եղանակը բաղարկությունն է՝ 26 %:

Հիմնաբաներ՝ համացանցային խոսույթ, համացանցային հաղորդակցություն, բառակազմական միջոց, նորաբանություն, ածանցում, բառաբարդում, հապավում, փոխառություն:

Ներածություն

Այսօր համացանցը «ներխուժել» է հասարակության բոլոր բնագավառներ, ձեռք բերել օգտատերերի հսկայական զանգված և շարունակում է իր հաղթարշավը՝ ընդլայնելով գործունեության ոլորտները: Ակնհայտ է, որ թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում այն դարձել է բնակչության կենսակերպի անբաժանելի մաս: Համացանցը տեղեկատվություն որոնելու, միմյանց հետ հաղորդակցվելու ամենատարածված միջոցներից է: Այս համատեքստում ակնհայտ է, որ համացանցը՝ որպես հաղորդակցման յուրօրինակ միջոց, ունի «լեզվական վարքագծի» (linguistic behaviour) նոր կաղապարներ, լեզվի գոյության նոր ձևեր, որոնց ուսումնասիրությունը դեռևս ամբողջական և համապարփակ

չի կարող համարվել, քանի դեռ չի ավարտվել նորագույն տեխնոլոգիաների և դրանց հետ առնչվող իրողությունների զարգացումը:

Այնուամենայնիվ, համացանցի լայնատարած կիրառումը բոլոր ոլորտներում հանգեցրել է նոր լեզվի ի հայտ գալուն, և 2005 թվականից ի վեր համացանցային խոսույթն իր արժանի տեղն է զբաղեցրել լեզվաբանական ուսումնասիրությունների շրջանակում, մասնավորապես համացանցային լեզվաբանության մեջ (Մադոյան, 2020, էջ 5): Դեռ ավելին, այսօր համացանցը մշակույթի առանձին մաս է կազմում, որն ազդեցություն ունի մարդկային կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա: Այս ամենն իր հետ բերել է համացանցում հատուկ ցանցային էթիկայի (netiquette–համացանցային քաղաքավարություն) երևան գալուն, որը համացանցային բարեվարքության ամբողջություն է: Թվային տեխնոլոգիաների, համացանցի գոյությունը նպաստավոր պայմաններ է ստեղծել լեզվի կենսունակության պահպանման համար: Եվ որքան արագ է կյանքի առաջընթացը, այնքան լեզուն առավել է հարստանում նոր բառերով ու արտահայտություններով:

Դիտարկումները ցույց են տալիս, որ համացանցային խոսույթը չի սահմանափակվում մեկ գործառական ոճի շրջանակներում: Որոշ լեզվաբաններ խոսույթի այս տեսակը բնութագրում են որպես նոր, խառնածին (հիբրիդ) տարատեսակ, որն ունի և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքի տարրեր: Համացանցային հաղորդակցումը, որպես կանոն, տեղի է ունենում գրավոր ձևով, սակայն բանավոր խոսքին մոտ է շարադրանքի հուզականությամբ, արտահայտչականությամբ, պատկերավորությամբ, ժողովրդախոսակցական լեզվական միավորների առկայությամբ: Հետևաբար, համացանցային խոսույթը նախ և առաջ սերտ առնչություն ունի առօրյա–խոսակցական ոճի հետ: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ համացանցային անգլերենն անվանում են նաև լեզվի «հակառակ կողմը»: Դեռ ավելին, լեզուն ոչ թե հետընթաց է ապրում (ինչպես նշում են շատ լեզվաբաններ), այլ տեղափոխվում է մեկ այլ նոր մակարդակ: Ընդհանուր առմամբ, համացանցային խոսույթում լեզվական առանձնահատկությունները պետք է համարել համացանցային սլենգ և ուսումնասիրել որպես լեզվի ենթաշերտ:

Համացանցային նորաբանությունների բառակազմական առանձնահատկությունները

Լեզուն, որպես հաղորդակցման միջոց, գտնվում է մշտական փոփոխության և դինամիկայի մեջ՝ արտացոլելով շրջապատող իրականության բոլոր գործընթացներն ու երևույթները: Բառապաշարը, լինելով լեզվի «ամենագալստի» շերտը, արագ է արձագանքում

տեխնոլոգիայի և գիտության, ինչպես նաև մարդկային կյանքի սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտների բոլոր փոփոխություններին: Արդյունքում ի հայտ են գալիս նոր բառեր ու հասկացություններ՝ նորաբանություններ: Ըստ Ա. Մարությանի՝ (2000) նորաբանությունները լեզվի մեջ մտած, բայց դեռ ընդհանրացում չստացած այն նորակազմ բառերն են, որոնք լեզվի զարգացման տվյալ շրջանում պահպանում են թարմության, նորության կնիքը, իմատային-ոճական ինքնատիպությունը: Լ. Եզեկյանը (2003) նորաբանություններ է համարում բառային այն միավորները, որոնք լեզվի տվյալ փուլում գիտակցվում են իբրև նոր իրողություններ, դեռևս չեն մտել գործուն բառապաշարի մեջ, դեռևս չունեն ընդհանուր տարածում, լայն և հաճախակի կիրառություններ, իսկ առանձին դեպքերում նույնիսկ չեն արձանագրվում տվյալ լեզվի համապատասխան բառարաններում: Ռուս լեզվաբան Վ. Ս. Վինոգրադովը (2001) նորաբանություն է համարում լեզվում հաստատված նոր բառերն ու իմաստները, որոնք անվանում են նոր առարկաներ և մտքեր: Ի. Վ. Արնոլդն (2012) էլ կարծում է, որ նորաբանությունը ցանկացած բառ կամ արտահայտություն է, որը ստեղծվում է տվյալ լեզվի կենսունակ բառակազմական կաղապարների համապատասխան կամ փոխառված լեզվական միավոր է, որը գիտակցվում է խոսողների կողմից՝ որպես տվյալ լեզվի նոր բառաձևեր: Մենք համակարծիք ենք վերոնշյալ հեղինակների հետ և տվյալ հետազոտության շրջանակում որպես նորաբանություն դիտարկում ենք ձևով և բովանդակությամբ այն նոր բառերը, որոնք առաջացել են լեզվում արդեն գոյություն ունեցող բառակազմական կաղապարներով և ցույց են տալիս նոր երևույթներ ու հասկացություններ:

Անգլալեզու համացանցային խոսույթում նորաբանությունների ձևավորման առանձնահատկությունների վերլուծության համար անդրադարձել ենք համացանցային կայքերում, ֆորումներում զետեղված լեզվական նյութին: Դրանք են՝

<https://www.quora.com/>,
<https://www.pinterest.ru/homefeed/>,
<https://twitter.com/tweriod>,
<https://www.facebook.com/>,
<https://like4like.com/>,
<https://www.instagram.com/>,
<https://www.techradar.com/>,
<https://www.pcmag.com/>,
<https://www.digitalspy.com/>,
<https://www.urbandictionary.com/>,

<https://www.dictionary.com/>,
<https://www.computerworld.com/>,
<https://medium.com/>,
<https://www.news.com.au/>,
<https://www.cnet.com/>,
<https://www.howstuffworks.com/>,
https://www.trendmicro.com/en_us/business.html,
<https://later.com/>,
<https://www.startupgrind.com/>, <https://www.lifewire.com/>:

Մեծ թիվ են կազմում անգլերեն համացանցային լեզվում ստեղծված **նորաբանությունները**: Այս նորաբանություններից շատերը անցել են բանավոր խոսք, սակայն կան բազմաթիվ նորաբանություններ, որոնք գործածվում են միմիայն համացանցային հաղորդակցության ժամանակ: Ըստ էության, համացանցն այն ոլորտն է, որտեղ լեզվական փոփոխություններ տեղի են ունենում գրեթե յուրաքանչյուր օր: Նոր երևույթներ բնութագրելու համար ստեղծվում են նոր բառեր: Եթե նախկինում լեզվի մեջ տեղի ունեցող փոփոխությունները դիտվում էին որպես լեզվի աղավաղում, ապա հիմա դրանք համարվում են կենդանի լեզվի ցուցիչներ: Համացանցի բառապաշարում առանձնահատուկ տեղ ունեն նաև հեղինակային նորաբանությունները, որոնք հաղորդակցումը ավելի գունեղ են դարձնում՝ չհաշված այն դեպքերը, երբ խոսակիցները ծայրահեղության մեջ են ընկնում, անցնում թույլատրելի սահմանն ու մոտենում գոեհիկին: Համացանցային նորաբանությունների հետաքրքիր օրինակներ են՝ **digital detox** - թվային սարքերից «բեռնաթափման» երևույթն է (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/digital-detox>), **cyber hygiene** - տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու անվտանգությունն ապահովող երևույթն է, երբ կիրառվում են գաղտնաբառեր, հատուկ ծրագրակազմեր և այլն (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/cyber-hygiene>), **easy like** - որևէ օգտատիրոջ ընկերների ցանկից այն մեկն է, ով առանց խտրականության 'like' հրահանգն է սեղմում տվյալ օգտատիրոջ բոլոր հրապարակումների տակ (www.urbandictionary.com/define.php?term=easy%20like), **gloatgram** - օգտատիրոջ այն հրապարակումներն են, որտեղ պատկերված է նրա ցուփ ու շվայտ կյանքի մանրամասները (ճանապարհորդություն, թանկարժեք իրեր, սնունդ և այլն) (<https://www.urbandictionary.com/define.php?term=gloatgram>), **Nicholas Cage syndrome** - դեմքի միօրինակ արտահայտություն, անկախ նրանից, թե ինչ զգացմունքներ ունեն (<https://www.urbandictionary.com/define.php?term=Nicholas%20Cage%20Syndrome>), **potato quality** - ցածր, վատ որակ (նկարի, տեսանյութի)

(<https://www.urbandictionary.com/define.php?term=Potato%20Quality>),

Google University - երբ որոշակի բնագավառում մասնագիտական կրթություն չունեցող մեկը փորձում է ավելի խելացի երևալ Google որոնողական հարթակից ստացած տեղեկատվության շնորհիվ,

(<https://www.urbandictionary.com/define.php?term=Google%20University>),

cross-texting - հաղորդագրություն, որն ուղարկվել է մեկ այլ անձի, ում համար այն նախատեսված չէր (<https://www.urbandictionary.com/define.php?term=Cross-texting>),

cyberloafing - որևէ կազմակերպության աշխատակիցների կողմից աշխատանքի ժամանակ համացանցից օգտվելն է անձնական նպատակների համար (<https://www.ldoceonline.com/dictionary/cyberloafing>),

friendscaping - անձնական կայքէջից այս կամ այն ընկերոջ հեռացումն է (<https://www.urbandictionary.com/define.php?term=Friendscaping>),

cyberstalking - կիբերհետապնդում (<https://www.merriam-webster.com/legal/cyberstalking>):

Այսպես, իրականացրած վերլուծությունը ցույց տվեց, որ համացանցային խոսույթում կարելի է առանձնացնել նորաբանությունների «ստեղծման» հետևյալ եղանակները՝

բառակազմություն, փոխառություն, բառիմաստի ընդլայնում:

Դիտարկենք դրանք առանձին-առանձին: Անգլերեն նորաբանությունների տեսանկյունից բառակազմության ամենարդյունավետ ուղիներից է *ածանցումը, բառաբարդումը, բաղարկությունը, հապավումը և փոխակարգությունը:*

Ածանցում: Համացանցային անգլերենում շատ են նաև **ածանցման** միջոցով կազմված նոր բառեր, երբ բառակազմական հիմքերին ավելանում է մասնիկ (ածանց): Մենք առանձնացրել ենք հետևյալ վերջածանցներով ձևավորված նորաբանությունները:

Վերջածանցներ: **-ie:** *dronie*, **-able:** *googleable, clickable, bootable*
ification: *gamification*, **-ise:** *to laymanise*, **-ista:** *recessionista*, **-er:** *follower, browser, server*; **-itude:** *hackitude, geekitude*, **-oid:** *android, nerdoid, modemooid*, **-ize:** *digitize*.

Նախածանցներ: Հաճախադեպ հանդիպող ածանցում է **e-** նախածանցի ավելացումը՝ *e-mail, e-money, e-shop, e-cash, e-wallet, e-life, e-commerce, e-book*; **Bio-:** *biosecurity*, **de-:** *debug, defrag, delurk*; **un-:** *unhackable*, **cyber-:** *cybercriminal, cybersecurity, cybercurrency, cyberattack, cyberspace*, **nano-:** *nanorobot, nanoengineering, nanotechnology, nanocomputing, nanomachine, nanodevice*, **hyper-:** *hyperlink, hypermedia, hyperaccess*, **re-:** *reboot, redirect, restart* և այլն:

Բառաբարդում: Բառակազմության տեսակ է, երբ երկու բառակազմական հիմքերի համակցումով, միավորումով կամ համադրությամբ ստեղծվում է բարդ բառ՝ բարդություն:

Bandwidth: band+width – թողունակություն (գնահատում է տվյալների փոխանցումը ցանցով) (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/bandwidth>)

to binge-watch: binge + watch – առանց դադարի դիտել: Այն նկարագրում է մի գործողություն, երբ անհատը անընդմեջ դիտում է որևէ տեսանյութ առանց ընդմիջումների (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/binge-watch>)

bitcoin: bit + coin (bit-տեղեկության միավոր և coin- մետաղադրամ), թվային արժույթի տեսակ, որի հիմնական առավելությունն այն է, որ գործարքները անանուն են և իրականացվում են անմիջապես առանց միջնորդների (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/bitcoin>)

clickbait: click + bait – վեբ-բովանդակությունը նկարագրող տերմին է, որի նպատակն է զգայացունց (սենսացիոն) վերնագրերի, գլխագրերի, գրավիչ պատկերների միջոցով հավանումների քանակի ավելացում և նյութը համացանցում՝ մասնավորապես սոցիալական ցանցերում տարածելը, կտտախայծ (տերմինի թարգմանությունը հեղինակային է) (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/clickbait>)

hashtag: hash + tag – հեշթեգ (hash – վանդականիշ, tag – պիտակ, բառ կամ արտահայտություն, որին նախորդում է # նշանը: Օգտատերերը կարող են միավորել իրենց հաղորդագրությունները ըստ թեմաների կամ տեսակների՝ դրանցում օգտագործելով վանդականիշով սկսվող բառերը: (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/hashtag>)

lifehack: life + hack – կենսահնարք, կենցաղային հնարք, խորամանկություն: Այն վերաբերում է հեշտ և արդյունավետ լուծումներին, որոնք օգնում են արագ և ստեղծագործ կերպով հաղթահարել առօրյա խնդիրները (<https://www.dictionary.com/browse/lifehack>)

paywall: pay + wall – գնման կամ վճարովի բաժանորդագրության միջոցով բովանդակության հասանելիությունը սահմանափակելու մեթոդ է (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/paywall>)

photobomb: photo + bomb – երբ լիովին անձանոթ մեկը կամ կենդանական աշխարհի ներկայացուցիչները «փչացնում են» հիանալի լուսանկարը՝ անսպասելիորեն կամ միտումնավոր հայտնվելով հետին պլանում (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/photobomb>)

ransomware: ransom + ware – դրամաշորթ ծրագիր, ծրագրային ապահովման տեսակ է, որը արգելափակում է համակարգիչի

համակարգին հասանելիությունը կամ անհասանելի է դարձնում թղթապանակների (ֆայլերի) ընթերցումը, իսկ հետո «զոհից» պահանջում է փրկագին վերականգման համար (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/ransomware>)

Բաղարկություն: Լեզուներում բառակազմությունը կատարվում է բառակազմական տարբեր միջոցներով: Ավանդական բառակազմական միջոցներից զատ, ներկայումս գործում են մի շարք այլ ձևեր: Դրանցից է բաղարկությունը: Այն կոնկրետ բառերի կամ կապակցությունների միավորման (*blending/portmanteau words*) հետևանքով առաջացած նոր բառ է: Բաղարկությունները, ի տարբերություն բարդ բառերի, բաղկացած չեն երկու ինքնուրույն ձևայիններից, և այս բաղադրիչները առանձին վերցրած իմաստ չեն կարող արտահայտել, օրինակ՝ **cybernetic** (կիբեռնետիկական) և **organism** (օրգանիզմ) բառերի միավորումից առաջացած **cyborg** (կիբորգ, մասամբ մարդ, մասամբ մեքենա), բաղարկության **cyb** և **org** բաղադրիչները առանձին-առանձին իմաստ չեն արտահայտում: Համացանցային բաղարկություններից շատերը դեռևս արձանագրված չեն բառարաններում, ուստի շատերի թարգմանությունը կատարվում է նկարագրական եղանակով: Բերենք այսպիսի բաղարկություններից մի քանի օրինակներ՝ **computerate** (**computer**+**literate**)- համակարգչային գիտելիքներ ունեցող, համակարգչի օգտագործման ձևերի նկատմամբ ունակություն ունեցող անձի բնութագիրն է, ով կարող է արդյունավետ աշխատել համակարգչի հետ (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/computerate>), **appoholic** (**application** + **alcoholic**) - անձ, որը պարբերաբար ներբեռնում է հավելվածներ (<https://www.urbandictionary.com/define.php?term=Appoholic>), **selfiebombing** (**selfie** + **photobombing**) - ինչ-որ մեկի ինքնուկի (սելֆի) «աղավաղումն» է, երբ մեկ այլ անձ հայտնվում է հետին պլանում (<https://www.urbandictionary.com/define.php?term=selfie-bombing>), **netizen** (**Internet** + **citizen**) - «համացանցի քաղաքացի», համացանցային ակտիվ օգտատեր (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/netizen>), **vlog** (**video** +**log**) - տեսանյութի ձևով գրանցումներ համացանցի անձնական կայքէջում, **blog** (**web**+**log**) - անձնական կարծիք արտահայտող գրանցումներ սեփական կայքէջում, **screenager** (**screen** + **teenager**) համակարգչից կամ համացանցից կախվածություն ունեցող դեռահաս (<https://www.dictionary.com/browse/screenager>), **phast** (**phone**+**fast**) անձի կողմից որոշակի ժամանակահատվածում բջջային հեռախոսներից հրաժարվելու գործընթացն է (<https://www.urbandictionary.com/define.php?term=phast>), **podcast** (**ipod**+**broadcast**) համացանցում

տեղեկատվական հեռարձակման տեսակ է (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/podcast>) **webisode** (**web**+**episode**) տեղեկատվական-ճանաչողական առցանց տեսահոլովակ (<https://www.dictionary.com/browse/webisode>), **hackathon** (**hack**+ **marathon**) ՏՏ որորտում միջոցառումների շարք է, որտեղ մշակվում են համակարգչային ծրագրեր (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/hackathon>), **webinar** (**web** + **seminar**) (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/webinar>), **malware** (**malicious** +**software**) ծրագրային ապահովում է, որը մշակվել է համակարգիչներին վնասելու և դրանց աշխատանքը խաթարելու համար, վնասակար ծրագրեր (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/malware>)

Քանի որ անգլերենը նորամուծությունների, նորարարական գաղափարների, երևույթների, հարաբերությունների լեզուն է, ուստի բաղադրությունները ուսումնասիրության հետաքրքիր թեմա կարող են դառնալ լեզվաբանների համար

Հապավումներ: Երբ սկզբնատառերի՝ սկզբնահնչյունների, բառերի սկզբնամասերի և այլ տարրերի համակցումով բաղադրյալ անուններից կազմվում են ուրույն (կրճատ) բաղադրություններ: Անգլերեն համացանցային խոսույթում գերակշռում են տառային հապավումները: Այս հապավումներից շատերը իրենց հաստատուն տեղն են զբաղեցնում անգլախոս հասարակության բառապաշարում և խոսքաշարում ճանաչվում են առանց հավելյալ լուսաբանման: Որոշներն էլ գրանցված են առցանց բառարաններում և համարվում են համացանցային տերմիններ՝ ASL (**age, sex, location**), FAQ (**frequently asked questions**) (<https://www.dictionary.com>) և այլն: Անգլերեն համացանցային խոսույթում հապավումները կատարում են ժամանակ և էներգիա խնայելու, տեղեկատվական, ասույթը խտացնող, մեղմասական գործառույթներ: Դրանցից շատերի բազմիմաստությունը կարող է հանգեցնել ասույթի սխալ ընկալմանը, ինչպես օրինակ հետևյալ խոսքաշարում՝

Mom: Your great aunt has just passed away. *LOL*.

Son: Why is that funny?

Mom: It's not funny David! What do you mean?

Son: Mom, lol means *laughing out loud*!

Mom: Oh my goodness!! I sent that to everyone. I thought it means *lots of love*. I have to call everyone back. (<https://preply.com/en/blog/the-most-used-internet-abbreviations-for-texting-and-tweeting/>)

Համացանցային հաղորդակցության ժամանակ կարող են հապավվել նույնիսկ ամբողջական նախադասություններ, օրինակ՝ DBMIB (**Don't bother me I am busy**); IDKWTD (**I don't know what to do**):

Խմբավորելով անգլերեն համացանցային հապավումները՝ դրանք կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝

1. *Չգացմունք արտահայտող հապավումներ (abbreviations expressing emotion):* **LOL**-Laughing out loud, **IDC**-I don't care, **WYWH**-Wish you were here, **IMU**-I miss you, **JK**-Just kidding, **IFYP**-I feel your pain, **FIMH**-Forever in my heart, **CSL**-Can't stop laughing, **TGIF**-thank God it's Friday (օգտագործվում է աշխատանքային շաբաթվա ավարտին) և այլն:
2. *Կարծիք արտահայտող հապավումներ (abbreviations expressing opinion):* **IMO/IMHO**-In my opinion/In my humble opinion, **OMDB**-Over my dead body, **POV**-Point of view, **TBH**-To be honest և այլն:
3. *Նախազգուշացում և խորհուրդ արտահայտող հապավումներ (abbreviations expressing warning and recommendation):* **NSFW**-Not safe for work, **NSFL**-Not safe for life, **SFL**-Safe for life, **FAO**-For adults only, **NAGI**-Not a good idea և այլն:
4. *Ծանուցում, ցանկություն, ողջույն և հրաժեշտ արտահայտող հապավումներ (abbreviations expressing notification, wish, greeting and closing):* **GM**-Good morning, **GL**-Good luck, **OMW**-On my way, **IDK**-I don't know, **TTYL**-Talk to you later, **AFK**-Away from keyboard, **NFS**-Not for sale և այլն:
5. *Տարբեր հասկացություններ արտահայտող հապավումներ (abbreviations expressing different notions):* **TBT** (throwback Thursday), **WCW** (woman crush Wednesday), **YOLO** (you only live once), **PPD** (post party depression) (<https://preply.com/en/blog/the-most-used-internet-abbreviations-for-texting-and-tweeting/>): Գոյություն ունի նաև «խառնատառ» անգլերեն, որտեղ տառերը փոխարինվում են թվերով կամ սիմվոլներով, կամ դեր է խաղում բառերի մոտ կամ նույն արտասանության ձևերը, օրինակ՝ b4-before, g8-great, b4n-bye for now, w8-wait և այլն: Երկրորդ խմբին պատկանում են բառերի **կրճատ** ձևերը: Օրինակ՝ Admin (administrator), Anon (anonymous), Bro (brother), Cam (camera), Cig (cigarette), Fab (fabulous), Fave (favourite), Gram (Instagram), Hols (holidays), Lil (little), Marv (marvelous), Min (minute), Pic (picture), Smth (something), Tho (though), Tom (tomorrow), Vid (video) և այլն: Սա կապված է համացանցային լեզվին բնորոշ արագագրության հետ: Կարճ ձևերը նախընտրելի են, քանի որ ժամանակ են խնայում:

Փոխակարգում: Բառակազմական այս եղանակը բառի մի խոսքիմաստային կարգից մյուսին անցնելն է՝ առանց դրա ձևի փոփոխման: Օրինակ՝ **Google-to google** (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/google>), **friend-to friend** (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/google>).

[org/dictionary/english/friend](https://dictionary.cambridge.org/dictionary/english/friend)), **tweet-to tweet** (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/tweet>), **chat- to chat** (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/chat>), **message - to message** (<https://www.merriam-webster.com/dictionary/message>) և այլն:

Բառիմաստի ընդլայնում: Բառապաշարի հարստացման ներքին կարևոր, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, գիտական, տեխնիկայի փոփոխություններով պայմանավորված միջոց է, որի հետևանքով բառի հին իմաստի պահպանման հետ այն ձեռք է բերում նաև նոր իմաստներ կամ ընդլայնվում է բառիմաստի ծավալը: Դուրս ենք գրել հետևյալ բառերը՝

Antivirus - հակավիրուսային ծրագիր կամ հակավիրուս, որը նախատեսված է համակարգչի անվտանգությունը պահպանելու համար (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/antivirus>

cloud /cloud computing - հաշվարկային ռեսուրսների (օրինակ՝ սերվերներ, տվյալների բազաներ, տվյալների վերլուծություն) ըստ պահանջի տրամադրումն է համացանցի միջոցով (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/cloud>),

(<https://dictionary.cambridge.org/dictionary/english/cloud-computing>)

tablet – պլանշետային համակարգիչ կամ ուղղակի գրասալիկ, չափսերով բջջային հեռախոսից մեծ շարժական համակարգիչ է, որի աշխատանքի հիմնական մասը կատարվում է էկրանին հպվելու միջոցով (touch screen) (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/tablet>),

to browse – զննել, դիտել, դիտարկել (համացանցային կամ համակարգչային համատեքստում նշանակում է տվյալների կամ բովանդակության դիտարկում) (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/browse>),

to follow – հետևել՝ տեխնիկական տերմին, որը լայնորեն կիրառվում է տարբեր համատեքստերում, ինչպիսիք են սոցիալական ցանցեր, ծրագրեր, համակարգեր կամ ընդհանուր առմամբ տեղեկատվական տեխնոլոգիաներ, որևէ օգտատիրոջ էջին հետևելու գործընթացն է տվյալ էջի կողմից հրապարակված նորությունների, թարմացումների կամ այլ բովանդակության վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/follow>),

to like – հավանել, օգտագործվում է սոցիալական հարթակներում կոնկրետ բովանդակության վերաբերյալ օգտատիրոջ դրական արձագանքը կամ հավանումը ցույց տալու համար (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/like>),

storage – պահեստավորում, վերաբերում է տվյալների կամ տեղեկատվության պահպանմանը համակարգչային համակարգերում (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/storage>),

to block – արգելափակել՝ տեխնիկական գործողություն կամ հրահանգ, որը վերաբերում է մուտքի, կապի կամ գործողության արգելափակմանը՝ տվյալ սարքավորումներում, ծրագրերում կամ ցանցերում (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/block>),

unicorn – տեխնոլոգիական ոլորտում նշանակում է նորաստեղծ ընկերություն (ստարտափ, startup), որը սովորաբար գործում է նորարարական գաղափարների հիման վրա և գնահատվում է մեկ միլիարդ դոլար և ավելի, տերմինը նաև նորարարության և ֆինանսական հաջողության խորհրդանիշ է (<https://dictionary.cambridge.org/dictionary/english/unicorn>):

bug – ծրագրակազմի թերություն, անսարքություն, սխալ (<https://www.gartner.com/en/informationtechnology/glossary/bug#:~:text=A%20bug%20is%20an%20unexpected,not%20anticipated%20by%20the%20developer>),

user – օգտատեր՝ համացանցային ռեսուրսում անձնական էջ, հաշիվ ունեցող անձ (<https://www.vocabulary.com/dictionary/computer%20user>)

mouse – մկնիկ, արտաքին սարք, որը նախատեսված է համակարգչի էկրանին ցուցիչը (կուրսորը) տեղափոխելու համար (<https://www.vocabulary.com/dictionary/computer%20mouse>)

link – հղում՝ երկու կամ ավելի ռեսուրսների կամ տվյալների միջև կապն ապահովող միացում (<https://www.merriam-webster.com/dictionary/link>),

icon – պատկերակ՝ փոքրիկ պատկեր կամ գրաֆիկական խորհրդանիշ է համակարգչային որևէ ծրագրի, ծրագրային հավելվածի, թղթապանակի գործառույթը ներկայացնելու համար (<https://techterms.com/definition/icon>)

Փոխառություն: Փոխառությունը լեզվական այս կամ այն տարրի, հիմնականում բառի անցումն է մի լեզվից մյուսին: Փոխառություններն ուրիշ ժողովուրդների հետ տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի արդյունք են, երբ այդ շփման հետևանքով նորանոր հասկացությունների, իրոյթների հետ լեզվի մեջ մուտք են գործում նաև դրանց նշանակող բառերը: Օրինակ՝

avatar (փոխառություն սանսկրիտից)

(<https://dictionary.cambridge.org/dictionary/english/avatar>),

emoji (փոխառություն ճապոներենից)

(<https://www.dictionary.com/e/emoji/melting-face-emoji/>),

selfie (փոխառություն ավստրալիական անգլերենից)

(<https://dictionary.cambridge.org/dictionary/english/selfie>),

meme (հին հունարեն mimeme բառից)

(<https://www.collinsdictionary.com/dictionary/english/meme>)

geek (փոխառություն գերմաներենից) (<https://en.wikipedia.org/wiki/Geek>)

troll (փոխառություն հին ֆրանսերենից)

([https://en.wikipedia.org/wiki/Troll_\(slang\)](https://en.wikipedia.org/wiki/Troll_(slang)))

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է մեր ուսումնասիրության արդյունքում կազմված անգլերենի համացանցային նորաբանությունների բառակազմական պատկերը: Վերլուծության համար կիրառվել է տարբեր սոցիալական հարթակներից դուրս բերված շուրջ 180 բառային միավոր:

Աղյուսակ 1. Անգլալեզու համացանցային խոսույթի բառակազմական եղանակները:

Բաղարկություն	26%
Բառաբարդում	21%
Բառիմաստի ընդլայնում	13%
Հապավում	11%
Ածանցում	17%
Փոխառություն	7%
Փոխակարգում	5%

Եզրակացություն

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ համացանցն այլևս լոկ տեղեկատվության որոնման և ձեռքբերման գործիք չէ, այլ վերածվել է սուբյեկտների միջև հաղորդակցական և անհատի շփման պահանջմունքի ապահովման յուրօրինակ միջոցի: Տվյալ իրողությունն, անկասկած, իր ազդեցությունն է թողել լեզվի և լեզվամտածողության վրա: Ուսումնասիրության ընթացքում պարզեցինք, որ համացանցի ազդեցությամբ լեզուն «պարզեցվում» է, բառերը կրճատվում են, կիրառվում են հապավումներ, քերականական ոչ ստանդարտ կաղապարներ և այլն: Սրանք մի կողմից՝ ժամանակի, լեզվական տնտեսման և հաղորդակցվողների սեփական «ես»-ի ինքնարտահայտման միջոցներ, իսկ մյուս կողմից՝ համացանցային «գրաճանաչության» բաղկացուցիչներ են: Նորակազմ բառերի բառակազմական քննությունը հնարավորություն է տալիս ներկայացնել համացանցային խոսույթում նորաբանությունների կազմության առավել կենսունակ բառակազմական միջոցներն ու եղանակները: Կատարված վերլուծությունից ելնելով՝ կարող ենք հանգել նաև հետևյալին՝

- բաղարկությունը նորաբանությունների կազմության հիմնական միջոցն է (ուսումնասիրված բառերի 26%-ը ստեղծվել է այս եղանակով),

- երկրորդ կարևոր բառակազմական եղանակը բառաբարդումն է, որի միջոցով կազմվել են նորաբանությունների 21%-ը,
- բառիմաստի ընդլայնման միջոցով կազմվել են նորաբանությունների 13%-ը,
- հապավումների միջոցով՝ 11%-ը,
- ածանցման միջոցով՝ 17%-ը,
- այլ լեզուներից փոխառությամբ կազմվել է նորաբանությունների միայն 7%-ը,
- ամենաքիչ թվով նորաբանություններ կազմվել են փոխարկման միջոցով՝ 5%:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Եզեկյան Լ.(2003), Հայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ, Եր., Երևանի համալս. հրատ., 376 էջ:
Ezekyan L. (2003), Hayoc lezvi otwagitowt'yown (owsowmnakan d'er'nark), EPH, Er., Erevani hamals. hrat., 376 e'j: (In Armenian)
2. Մադոյան Ն.(2020), Համացանցային հաղորդակցության լեզվական և արտալեզվական գործոնները, Եր., ԵՊՀ հրատ., 176 էջ:
Madoyan N.(2020), Hamacancayin haghordakcowt'yan lezvakan & artalezvakan gorc'onnyer', Er., EPH hrat., 176 e'j: (In Armenian)
3. Մարության Ա.(2000), Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., «Նաիրի», 244 էջ:
Marowt'yan A.(2000), Hayoc lezvi otwabanowt'yown, Er., «Nairi», 244 e'j: (In Armenian)
4. Арнольд И. (2012), Лексикология современного английского языка, М., Флинта, 302 с.
Arnol'd I. (2012), Leksikologija sovremennogo anglijskogo jazyka, M., Flinta, 302 s. (In Russian)
5. Виноградов В. (2001), Введение в переводоведение (общие и лексические вопросы), М., Издательство института общего среднего образования РАО, 224 с.
Vinogradov V. (2001), Vvedenie v perevodovedenie (obshhie i leksicheskie voprosy), M., Izdatel'stvo instituta obshhego srednego obrazovaniya RAO, 224 s. (In Russian)

Էլեկտրոնային աղբյուրներ

6. <https://www.urbandictionary.com/> (Դիտված՝ 12.08.2024)
7. <https://dictionary.cambridge.org/> (Դիտված՝ 12.08.2024)
8. <https://www.wikipedia.org/> (Դիտված՝ 27.11.2024)
9. <https://www.collinsdictionary.com/> (Դիտված՝ 27.11.2024)
10. <https://www.merriam-webster.com/> (Դիտված՝ 27.11.2024)
11. <https://www.vocabulary.com/dictionary/> (Դիտված՝ 27.11.2024)

ЗОРИ БАРСЕГЯН - СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ АНГЛИЙСКИХ ИНТЕРНЕТ-НЕОЛОГИЗМОВ

Ключевые слова: интернет-дискурс, интернет-коммуникация, способ словообразования, неологизм, деривация, словосложение, контаминация, аббревиация, заимствование

В статье рассматриваются некоторые особенности интернет-дискурса на английском языке, а также словообразовательные пути появления неологизмов в области коммуникативных технологий. Морфологический анализ неологизмов интернета показал, что для образования неологизмов используются такие способы словообразования как деривация, словосложение, контаминация, аббревиация, конверсия, заимствование, расширение значения слова. Было установлено, что ведущим методом формирования неологизмов является контаминация - 26 %.

ZORI BARSEGHYAN - DERIVATIONAL PECULARITIES OF ENGLISH INTERNET NEOLOGISMS

Keywords: Internet discourse, Internet communication, a way of word-formation, neologism, affixation, word-composition, blending/portmanteau words, abbreviation, borrowing

The article examines some features of Internet discourse in the English language, focusing on the word-formation processes involved in creating neologisms in the field of communication technologies. The morphological analysis of Internet-related neologisms reveals that a variety of word-formation methods are employed, including affixation, compounding, blending, abbreviation, conversion, borrowing, and semantic derivation. The analysis indicates that blending, or the formation of portmanteau words, is the predominant method, accounting for 26% of the observed 180 neologisms.

Ներկայացվել է՝ 12.02.2024 թ.
Գրախոսվել է՝ 19.11.2024 թ.

**Վ. ԴԱՎԹՅԱՆԻ «ԱՆԽՈՐԱԳԻՐ» ՎԻՊԱԿ-ԷՍՍԵԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ՈՃԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ԵՎ
ԽՈՍՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ)**

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրության նյութ է դարձել հայ ժամանակակից բանաստեղծ, հրապարակախոս, թարգմանիչ, թատերագիր Վահագն Դավթյանի «Անխորագիր» ինքնակենսագրական վիպակ-էսսե: Ուսումնասիրության նպատակն է դիտարկել գրողի վավերագրական արձակի լեզվական որոշ հարցեր և յուրահատկություններ: Քանի որ հեղինակային ոճը մայրենի լեզվի զարգացման և հարստացման կարևոր նախապայմաններից է, իսկ Վ.Դավթյանի չափաձոյի բերած նպաստի ու բարերար ազդեցության մասին բազմիցս խոսվել է հեղինակավոր շատ լեզվաբանների, գրականագետների և քննադատների կողմից, ուստի հոդվածում փորձել ենք բացահայտել նրա գեղարվեստական վավերագրության լեզվաոճական և անհատական որոշ հատկանիշները՝ անդրադառնալով դրանց ընդհանրական պատկերային համակարգին՝ ընդգծելով դավթյանական արձակ խոսքի արժանիքները:

Հիմնաբառեր՝ էսսե, ոճական համակարգ, հուշագրություն, լեզվամտածողություն, պատմողական խոսք, նկարագրական խոսք, գնահատող խոսք, դատողական խոսք, երկխոսություն, խոսքի արժանիքներ:

Ներածություն

Ինչպես հայտնի է, հայ գեղարվեստական վավերագրության արմատները հասնում են բանահյուսական ժամանակներ և անցել են զարգացման երկար ճանապարհ՝

¹ Սկսած վաղ միջնադարից՝ դրանք առավելապես հայտնի են իբրև ճամփորդական ուղեգրություններ կամ նոթեր, որոնք ունեն ճանաչողական նշանակություն, աչքի են ընկնում լեզվակառուցվածքային ինքնատիպությամբ: Բայց իբրև ժանր՝ այն սկիզբ է առնում 17-18-րդ դդ.՝ հիշատակարանների, եկեղացական վավերագրերի, կոնդակների, հոգևոր

Գեղարվեստական վավերագրությունը բնույթով վավերականի գեղարվեստական վերարտադրությունն է: Այն գեղարվեստականից տարբերվում է նրանով, որ այստեղ հեղինակն իր խոսքը կառուցում է փաստերով՝ արտացոլելով իրական իրադարձություններ, դեպքեր ու դեմքեր: Գեղարվեստական վավերագրության հեղինակը կերպարներ չի հորինում, այլ ներկայացնում է ծանոթ մարդկանց, շատ դեպքերում նաև ինքը կարող է հանդես գալ իր պատումում, բայց այդ ամենն անում է փաստերից ելնելով՝ հիշողությունը կենդանացնելով և վերաշարադրելով: Ուստի անվերապահորեն կարելի է համաձայնել Վ. Սարոյանի դիտարկմանը. «Հիշողությունը երևակայություն է: Որովհետև ինչ որ հիշում ես, նման չէ ճշգրտորեն քո տեսածին, և քանի որ քո տեսածը տարբեր է, քո հիշողությունը մի աստիճան է երևակայության: Իսկ երևակայությունը վերհիշված իրականն է» (Սարոյան, 1991, էջ 396):

«Գեղարվեստական գրականության մեջ գեղարվեստական վավերագրությունը հաճախ անվանում են մեմուարային գրականություն, որի մեջ մտնում են հիշատակարանը, հուշագրությունը, ուղեգրությունը և օրագրությունը: 20-րդ դ. արևելահայ գեղարվեստական վավերագրության մեջ բուռն զարգացում է ունենում նաև էսսեն» (Գալստյան, 2020, էջ 6): Էսսեն² ավելի նոր ժանր է: Ժամանակակից էսսեններում հեղինակն ընթերցողին մասնակից է դարձնում իրական գործողություններին, կարևորում նրա գնահատականը և փորձում հոգևոր կապ հաստատել նրա հետ: «Բայց զարմանալի բան է այս հուշ կոչվածը. հանկարծ առնում ու տանում է քեզ այնտեղ, ուր չէիր ակնկալում գնալ, ու մոռանում ես անգամ, թե մինչ այդ ինչից էիք խոսում...», - գրում է Վ. Դավթյանը իր «Անխորագիր» վիպակ էսսեում (Դավթյան, 2017, էջ 12)³: Հատկանշական է, որ ընթերցողները սիրում են հուշեր կարդալ, առավելապես, եթե դրանք գրված են պարզ, անմիջական, ընթերցողին հասկանալի ու մատչելի լեզվով: Հեղինակի խոսքն ու ոճն ավելի մոտ են դառնում ընթերցողին

հայրերի թղթերի տեսքով (Զաքարիա Ագուլցի, Չելեպի Քյոմուրճյան, Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Գրիգոր պատրիարք Պասմաջյան): 19-րդ դարում այն նոր թափ ստացավ և ի հայտ եկան լեզվաոճական և պատկերային մեծ փոփոխություններ (Գ. Պատկանյան, Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Պ. Պոռոջյան, Ղ. Աղայան, Բաֆֆի, Շիրվանզադե): Ավելի ուշ իրենց ինքնատիպ մոտեցմամբ ժանրի սահմաններն ընդարձակեցին ու ժամանակի համարժեք արտացոլանքը տվեցին մի շարք հայ մեծանուն ու տաղանդավոր գրողներ՝ դառնալով իրենց ապրած ժամանակաշրջանի լավագույն մեկնաբանողները, գնահատողներն ու վկաները (Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Ս. Զորյան, Գ. Մահարի):

² Էսսե ժանրի անվանումը առաջացել է Ֆրանսիայում՝ 1580թ., ֆրանսիացի գրող, փիլիսոփա Միշել դը Մոնտեյնն այդպես է անվանել իր երկը՝ Essais (Փորձեր):

³ Այսուհետև հոդվածում մեջբերվող հատվածների կողքին փակագծերում նշված թվերը կնշանակեն, որ նշված հատվածը Վ. Դավթյանի «Անխորագիր» վիպակ-էսսեից է:

հենց այս ժանրում: Այդ միջոցով նրանք կարծես ականատեսն են լինում իրենց սիրելի հեղինակի կյանքի մանրամասներին, բացահայտում են իրենց հետաքրքրող որոշ հանգամանքներ, իրենց ավելի մոտ զգում հեղինակին: Հեղինակը գեղարվեստի միջոցով լիցքեր է փոխանցում ընթերցողին, իր պատմություններով ներգործում՝ ձեռք բերելով ընթերցողի աջակցությունը, նրան մասնակից դարձնելով գործողություններին, որի արդյունքում գրողի ու ընթերցողի միջև առաջանում է նոր տիրույթ, ինչն ընթերցողին հնարավորություն է ընձեռում սիրելի հեղինակի հետ վերապրելու նրա կյանքը: Լ. Եզեկյանը, «Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր» գրքում անդրադառնալով «Մեծամոր» էսսեին, նշում է, որ տվյալ գեղարվեստական ոճի մեջ ներթափանցում են գործառական տարբեր ոճեր, որոնց համադրումը միշտ չէ, որ տեղին է ու պատճառաբանված, բայց նման ոճը բխում է հեղինակի մտածողությունից, հուշերի տպավորությունների իրականության արտահայտումից (Եզեկյան, 1986, էջ 15-16): Պետք է նշել, որ Վ. Դավթյանը կարողանում է այդ համադրումը վարպետությամբ իրականացնել: Նրա վիպակ-էսսեի շարադրանքը պատկերավոր է ու արտահայտչական, բայց այնքան բնական է, պարզ ու անմիջական, որ ընթերցողն անգամ չի նկատում մեկից մյուսի անցումը, ինչը խոսում է հեղինակի խոսքարվեստի արժանիքների մասին: Դ.Գյուրջինյանը, կարևորելով խոսքի արժանիքներից գլխավորը՝ պարզությունը, լավագույնս տալիս է այդ հատկանիշի գնահատականը. «Կան մարդիկ, որոնք ամենաբարդ հասկացություններն անգամ բացատրում են այնքան պարզ և հասկանալի: Նման մարդկանց լսելը հաճելի է, նրանց գրածը կարդալը բավականություն է պատճառում: Պարզությունը խոսքի այն արժանիքներից է, որ պահանջում է բովանդակայնությունն արտահայտել հնարավորինս պարզ, մատչելի և հասկանալի: Անշուշտ, պարզությունը բխում է մտքի հստակությունից: Երբ խոսողը լիարժեք տիրապետում է խոսքի առարկային, նա դյուրությամբ կարողանում է շարադրել իր մտքերը: Պարզությունը խոսքի որակի նշանն է» (Գյուրջինյան, 2015, էջ 13): Եվ այս բնութագիրը լիովին համապատասխանում է դավթյանական խոսքին:

Այն, որ Վահագն Դավթյանն իր ուրույն տեղն ու դերն ունի հայ քնարերգության դասականների կողքին, անհերքելի է: Ինչպես արդեն նշել ենք, նրա չափաձոն արժանացել է թե՛ գրականագետների, թե՛ քննադատների, թե՛ լեզվաբանների ուշադրությանը և բարձր գնահատանքին: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով: Հր.Թամրազյանը «Տաղանդի հավերժ կենսագրությունը» հոդվածում գրում է. «Վ.Դավթյանը բոլորի կողմից

ճանաչված է իբրև ձևի խոշոր վարպետ, սակայն կարող եմ ասել, որ այստեղ վարպետությունը հենց այն բանի մեջ է, որ նա հմտորեն ձև է տալիս հարուստ բովանդակությանը,- ապա՝ շարունակում,- Վահագնը նոր էջ է բացում, ստեղծում նոր ավանդ» (Թամրազյան, «Գրական թերթ», 1982, 24 սեպտ.):

Հոդվածում անդրադարձ ենք կատարել մեծանուն բանաստեղծի արձակի մի փոքրիկ պատահիկի, ավելի ճիշտ՝ գեղարվեստական վավերագրությանը: Աշխատանքի շրջանակներում ուսումնասիրության նյութ է դարձել Վ.Դավթյանի «Անխորագիր» վիպակ-էսսեի ոճական կառույցների բաղադրիչների համակարգը: Չնայած էսսեն գրվել էր բանաստեղծի մահվանից շուրջ երեք տասնամյակ առաջ և չի հրապարակվել կենդանության օրոք, այնուամենայնիվ, այն կարևոր է Վ.Դավթյան բանաստեղծի և մտածողի դիմանկարի ամբողջացման գործում, քանի որ ինքնակենսագրական է. «Ես չգիտեմ նույնիսկ, թե ինչ եմ գրում: Գիտեմ միայն, որ ուզում եմ փրկել հուշի այս փշուրները, որ մանկությունն ու պատանեկությունն են թողել իմ մեջ, փշուրներ, որ դեռ չեն խամրել» (102): «Անխորագիր» վիպակ-էսսեն իր բնույթով կարծես Վ.Դավթյանի բանաստեղծական ոճի շարունակությունը լինի, քանի որ նույնիսկ արձակ շարադրանքում յուրաքանչյուր պատկեր ու տող շնչում է բանաստեղծական ոգով: Թեև էսսեի հիմքը անձնական հուշերն են, այնուամենայնիվ, լայն ընդգրկումով այն սիրո, կարոտի, անցյալի գնահատման, գեղեցկության և հայրենաբաղձության գեղարվեստական ամբողջացումն է: Ընդհանուր համապարփակ կարոտը մարմնավորում է կորցրած ծննդավայրը՝ Արաբկիր բնօրրանը, հայրենի հող ու ջրի թախիժը, ինչն էլ կանխորոշում է ընդհանուր լեզվական երանգավորումը. «Ասում են՝ խելացի մարդիկ տարիքն առնելիս իմաստնանում են, իսկ հիմարները, նույն օրինաչափությամբ, ընդհակառակը՝ առավել են հիմարանում, երբեմն նույնիսկ վերածվում խեղկատակի: Ճիշտն ասաց, ես մինչև օրս չեմ պարզել, թե այդ մարդկանցից որ խմբին եմ պատկանում: Հավանաբար՝ երկրորդ: Թեև համոզված եմ, որ բանը հիմարության ու խեղկատակության չի հասել, բայց որ իմ մեջ արձակագրի կոչումը զգալով գրիչ եմ վերցրել և ուզում եմ արձակ գրել, այնուամենայնիվ իմաստնանալու օգտին չի խոսում», - այսպես է մեծանուն բանաստեղծը բնութագրում իր արձակ գրելու շարժառիթը (3): Ինչպես չափածոյում, այնպես էլ արձակում դավթյանական ոճի բնորոշ գծերն են բառօգտագործման բացառիկ ճշգրտությունը, պատկերների կոնկրետությունը, անկեղծությունը, զգացմունքայնությունը, ժողովրդականությունը և անսահման սերն իր կատարած գործի, աշխարհի, մարդկանց նկատմամբ: Ընթերցողն առաջին իսկ էջից

գայթակղվում է հեղինակի զուսպ, հակիրճ, բայց խոսուն նկարագրություններով, պատմելու բացառիկ տաղանդով և հատկապես անկեղծ ու անմիջական երկխոսություններով, որոնք հակված են խնայողական խոսքին՝ քիչ բառերով շատ բան ասելուն:

Պետք է նշել, որ այս ժանրում էլ Վ. Դավթյանը հավատարիմ է մնում իր խոսքարվեստի սկզբունքներին: Այստեղ էլ նրա խոսքը հնչում է պարզ, բնական, բազմազան, ինքնատիպ, պատկերավոր ու արտահայտիչ, կանոնավոր և, որ ամենակարևորն է, հայ մարդու համար չափազանց հարազատ:

Ժամանակակից լեզվաբանության մեջ շատ կարևոր է գեղարվեստական վավերագրության բնագրերի լեզվաարտահայտչական հիմքերի ուսումնասիրությունը, որտեղ կախված հանգամանքներից՝ օգտագործվում են պատմողական, նկարագրական, գնահատողական և դատողական խոսքի տեսակները: Երբեմն այս տեսակները կարող են միահյուսվել և հանդես գալ մեկը մյուսի մեջ:

Պատմողական խոսք

Հայտնի է, որ պատմողական խոսքը որոշակի հաջորդականությամբ և պատմողական տարրերով որևէ դեպք, երևույթ կամ իրավիճակ ներկայացնելն է: Բելինսկին շատ դիպուկ է տալիս այդ գործընթացի նկարագիրը. «Պատմելու կարողությունը պատմագետի ամենագլխավոր արժանիքն է. դեռ քիչ է փաստերն ու դեպքերը ճշտորեն նկարագրելը, հարկավոր է, որ այդ փաստերն ու դեպքերն անմիջապես տպավորվեն ընթերցողի մտքի մեջ, իսկ նրա աչքերը տեսնեն ոչ թե տառերը, այլ պատկերները» (Белинский, т. 12, 1926, с. 296):

Պատմողական խոսքը զգալի տեղ ունի գեղարվեստական էսսեում, քանի որ այդ պատումները կառուցվում են պատմողական խոսքի տարրերով, իրողությունների որոշակի հաջորդականությամբ՝ համադրելով ժամանակը, դեպքերն ու դեմքերը. «Հազար ինը հարյուր հիսունմեկն էր, թե՞ հիսուներկուսը՝ լավ չեմ հիշում: Տղաներով Արցախ էինք մեկնում: Հասանք Խանլար, կանգ առանք այդ գյուղաքաղաքի, թե ավանի հրապարակում: Դուրս եկանք ավտոմեքենայից, ու ինչ-որ հայ տղաներ շրջապատեցին մեզ: Երևի մեկնումեկիս ճանաչել էին (10) // Տրամվայը կանգ է առել, ժողովուրդ է հավաքվել, աղմուկ է ընկել: Ընկնելու ժամանակ մայրս ինձ այնպես է պահել, որ ես չվնասվեմ, ու միայն ինքն է վնասվել՝ ծնկներն են արյունոտվել, արմունկներն են արյունոտվել (83) // Մայրս մանկության օրերին ինձ, ապա իմ զավակներին հեքիաթներ էր պատմում, և նրանց մեջ մեկը կար, մի հրաշալին՝ «Կիսնուկ ախպարը», որի տարբերակին ոչ մի տեղ չեմ

հանդիպել... Եվ ես, այսօրվա-վաղվա գցելով, հիմարաբար ու անփութորեն գրի չառա, ու մայրս այն անդարձորեն տարավ իր հետ» (196):

Պատմողական խոսքն ունի մի շարք բնորոշ հատկանիշներ, որոնցից է որոշ բայերի հաճախակի կիրառությունը՝ **հիշել, ներկայացնել, ասել, խոսել, լսել, պարմել, մտածել, խնդրել, հարցնել, միջամտել, եզրակացնել** ևն. «**Ասել եմ** արդեն. ուրույն էր Արաբկիրի թոյնի հացը, բոլորովին տարբեր տեղական լավաշից... (195) // **Պարմել էին**, ու **լսել էի**, թե ինչպես մի գերեզման են բաց արել ու տեսել, որ մեռնողը շուտ է եկել (79) // **Հիշում եմ**՝ մեր տանն աշխատել, հոգնել էր Շավուր խանումը ու թախտին մեկնված ննջում էր (74) // ...**Չեմ հիշում**, ու զարմանում եմ, որ չեմ հիշում, թե ինչպիսին է եղել այն առավոտը, երբ լքել ենք մեր տունը (40)»: Պատմողական խոսքի պարտադիր բաղադրիչներից են նաև տարբեր բառակապակցությունները և նախադասությունները, որոնք կարող են արտահայտել ժամանակի նշանակություն, ինչպես՝ **մի անգամ, մի օր, ամեն անգամ, հիշում եմ, ճիշտն ասած, ինչպես առիթ ունեցա ասելու, վաղուց էր, փարիներ առաջ, մի քանի փարի առաջ, մի առավոտ, կեսօրից հետո ևն**: «Երբ **մի քանի փարի առաջ** մայրս մահացավ, ու ես նրա սնարին կանգնած խղճիս հաշվեհարդարն էի անում, պարզվեց, որ մորս դեմ ընդամենը երկու հանցանք եմ գործել, երկուսն էլ՝ Կրասնոդարում (82) // **Մի օր** էլ իսկապես հրդեհել էր այն նկուղը, ուր ապրում էին: Վառվել էին խղճուկ իրերը, տեղաշորը (75) // Ճիշտն ասաց, **ամեն անգամ**՝ օտար երկրներում շրջագայելիս, ճամփորդության, նոր աշխարհներ տեսնելու հաճույքի հետ մեջս միշտ ապրել է մի ավելի մեծ հաճույք՝ սպասման հաճույքը, տուն վերադառնալու սպասման երանությունը (199)»:

Պետք է նշել, որ պատմողական խոսքը չի կարող իր բնագրերում չպարունակել դեպքերի, բնության, մարդու նկարագրություններ, ինչպես նաև դատողություններ և եզրակացություններ:

Նկարագրական խոսք

Հուշագրության մեջ առանցքային դեր է կատարում նկարագրական խոսքը: Կարելի է ասել, որ ամեն ինչ սկսվում է նկարագրությունից: Տրամաբանական տեսանկյունից որևէ երևույթի նկարագրությունը նրա հատկանիշների թվարկումն է: Գրողներից շատերը իրենց հուշագրությունները սկսում են ծննդավայրի, իրենց քաղաքի, գյուղի, տան, շրջակայքի նկարագրությամբ, և Վ. Դավթյանը բացառություն չէ: Նրա հուշերում գունեղ ու տպավորիչ է Ոսկեգետակի ափին գտնվող Արաբկիր բնօրրանի ու նրա բնակիչների, սովորույթների, նիստուկացի,

անգամ խոհանոցի, Կրասնոդար քաղաքի, ապա Նոր Արաբկիրի մասին նկարագրությունները. «Պատերազմից առաջ և դեռ քիչ էլ հետո այդ ամենը դեռ կենդանի էր Արաբկիրում: Դեռ հրաշալի այգիների մեջ էր սուզված թաղը, դեռ թոնիրներից կապույտ ծուխ էր ելնում, դեռ կալ էին անում, որովհետև Արաբկիրի կողքի ազատ դաշտերից սեփական նախաձեռնությամբ արտեր էին նվաճել ու «գալգալու» ցորեն էին աճեցնում: Դեռ տանիքներին պաստեղ էին թափում, մալեզ եփում, պարաններից կախում էրիշտայի անձրևանման թելերը, հավաքում էին իրար գլխի, և հնչում էին Արաբկիրի նվագուն բարբառը, ծիծաղ հարուցող զվարճալի պատմությունները, առածը, հուշը (196) // Մարագի չոր խոտին պանկած՝ ես երկար-երկար լաց եղա: Լացի միջից լսեցի, որ բակում իրարանցում է, իմ անունն են տալիս, ինձ են փնտրում, հեկեկանքն ու փոշին խեղդում են ինձ, դառն է բերանս... Հետո ոչինչ չեմ հիշում» (85): Նկարագրական պատումում յուրաքանչյուր բառ գեղարվեստական նշանակություն ունի, քանի որ յուրաքանչյուր բառի միջոցով գրողը փորձում է փոխանցել պատկերավորությունը: Պետք է նկատել, որ նկարագրություններին զուգահեռ Վ.Դավթյանը գեղագետի ամենանուրբ հմտությամբ ներկայացնում է պատմական որևէ իրողություն, որը պատումն էլ ավելի հետաքրքիր ու տպավորիչ է դարձնում. «Եթե Կլեոպատրայի քիթը մի քիչ ծուռ կամ մի քիչ երկար լիներ, այդ անպիտան Անտոնիոսը այդպես խենթորեն չէր սիրահարվի նրան ու նրա առաջ հպարտանալու համար այդպես նենգորեն ու տմարդիորեն չէր գերի մեր արքա Արտավազդին, ձեռքերին ոսկե շղթա չէր դնի ու իբրև նվեր չէր տանի իր հոմանունին՝ իր չտարած հաղթանակով պարծենալու համար: Եթե Արտավազդն իսկական արքա լիներ և ոչ իսկական բանաստեղծ,- իսկ նա, ինչպես երևում է, իսկական բանաստեղծ է եղել,- ապա, ջարդված, անուժ Անտոնիոսին ինքն էլ մի հարված կտար ու վերջ...» (13-14) // Անին, փառահեղ ու զվարթ Անին, տխուր ու տառապած Անին իր գլխին եկած բազմաթիվ աղետներից հետո տագնապով լսել է, որ այս անգամ էլ քաղաքին է մոտենում հեռու տափաստաններից արշավող խորհրդավոր ու վայրի մի ցեղ, որ կարճահասակ է ու շեղաչ, որ անվրեպ նետածիգ է ու բուսած հեծյալ, որ ռնգային խուժդուժ ու վայրի երգեր է երգում, ու ինքն էլ է խուժդուժ ու վայրագ. լսել է ու որոշել է թողնել քաղաքը (22)»:

Ինչպես հայտնի է, նկարագրական խոսքն ունի իրեն բնորոշ լեզվական միջոցների դրսևորում: Քանի որ գեղարվեստական պատկերի ստեղծման գործում ածականները կարևոր դեր են կատարում, ուստի նկարագրական խոսքը հենց այդ առումով է աչքի ընկնում: Նկատելի է, որ ածականների պատեհ կիրառությունը Վ.Դավթյանի խոսքարվեստի բնորոշ գծերից է: Այդ գիծը շարունակվում է նաև արձակում: «Այո՛, **քաղցր**

ու **զորավոր** թուֆ է եղել դա: Վառողի պես **թունդ** ու արցունքի պես **ջինջ** օդի են քամել այդ թթից: Նաև՝ պաստեղ քամել: Պղնձե հսկայական կաթսաների մեջ եռացրել են կարմրած թուֆը ու հետո **թանձր** ու **խնկագույն** խյուսը փռել **կավե** սավանների վրա՝ տանիքներին (23) // Կրակի վրա մի հսկայական կաթսա է դրված, ու մի **բեղավոր, հաղթանդամ** մարդ ձեռքի **փայտե** թիակով խառնում է կաթսայի պարունակությունը, կաս-**կարմիր** է...(26) // Մառանի պատերի տակ ամռան կեսօրվա պես **հսկա** ու **դեղին** դդումներ էին շարված, պատերից կախված էին կրակի գույնի տաքտեղի շարեր, առաստաղից ողկույզ-ողկույզ նուռն էր հուրհրում, **խնկագույն** սուջուխ էր կախված ու **սև** խաղող: Պատերի տակ շարված էին **կանաչ** բողոզներ (կճուճներ), որոնց մեջ խաղողի պաստեղ էր, թթի ռուֆ (սա դոշաբն է), ռաչալ (սա մուրաբան է), **չոր** թուֆ, չամիչ, ընկույզ...» (45): Պատկերները շատ ինքնատիպ են, կոնկրետ, շոշափելի և դրանցում իրենց դերն ունեն ածականները: Առհասարակ դավթյանական խոսքարվեստում գույնն ու գույնի ստեղծած պատկերներն ուրույն տեղ ունեն, և այդ մասին շատ են խոսել հատկապես նրա բանաստեղծական խոսքն ուսումնասիրողները (Գալստյան Հ. Ա, Հայրապետյա Լ. Հ), իսկ քննադատներից ոմանք գույների կիրառության համար նրան համարել են սիմվոլիստ, անգամ անկումնային բանաստեղծ: Իր արձակում էլ բանաստեղծը շարունակում է այդ գիծը ու միաժամանակ խոսում է իր բանաստեղծության գույներից՝ հետհայացք բացատրելով, թե ինչու էր խոսքը գունառատ, ինչ նշանակություն ուներ այն իր համար, և ինչու էր ինքն այդքան քննադատվում ու մեղադրվում գույներ օգտագործելու համար. «Տխուր, գեղեցիկ ու կապույտ է եղել իմ ծննդավայրը, որ պիտի թողնեինք: Ո՛չ, բանաստեղծական, սիմվոլիստական կապույտ չէ սա, այլ իրական կապույտ (35) // Եփրատի վտակներից մեկի՝ Ոսկեգետակի վրա ծվարած գյուղաքաղաքը՝ Արաբկիրը, ուր ծնվել եմ ես, սովորություն ուներ ամռանը կավե տանիքներին քնել: Բայց մեր տանիքների կավը սովորական գորշ կավից չի եղել, այլ մոտակա լեռներից պեղված հատուկ կապույտ ու անջրանցիկ կավ, որ երազային երանգներ է տվել գյուղաքաղաքին: Մի ուրիշ բարեմասնություն էլ է ունեցել այդ կավը. երբ երեկոները ջուր են ցողել տանիքին, կավը ծոթրինի ու մանուշակի պես է բուրել, ու հոգնաբեկ մարդկանց այնպես է թվացել, թե իրենք ծոթրինի ու մանուշակի մեջ են քնած (20) // Բայց միայն տանիքները չէ, որ կապույտ են եղել: -Ձեր պարտեզին յասամանները նշանավոր էին Արաբկիրի մեջ,- պատմում էր ինձ մի տարեց արաբկիրցի,- երբ գարուն կու գար, ձեր պարտեզն ոտքեն գլուխ կապույտ կկոխեր: Յասամանը ձեր պատերն ի վար կթափվեր: Հիշիմը, Երմոնիա տատիկդ դուռը կայնած անցող-դարձողին

փունջ-փունջ յասաման կու բաժներ: Եվ հավանաբար, երբ շարժվել է մեր քարավանը, ու հավանաբար, երբ բնագոյաբար մի վերջին անգամ շրջվել եմ նայելու իմ ծննդավայրին, այդ կապույտներն են մնացել կոպերիս տակ...(35) // Չէ, շատ-շատ էր կապույտն իմ պատանեկան բանաստեղծության մեջ, այնքան, որ երբ Կարմիր բանակում էի ծառայում, Գևորգ Էմինն իր առաջին գիրքն ինձ այսպիսի մակագրությամբ էր ուղարկել. «Կապույտ բանաստեղծին և կարմիր բանակայինին»...Կապույտը՝ կապույտ էր, բայց թե ինչքան էր կարմիր՝ չգիտեմ... Հետո հասուն տարիքում էլ կապույտը անպակաս եղավ իմ տողերից, ու դրա երեսից շատ թուքումուր կերա քննադատներից՝ էլ սիմվոլիզմի ազդեցություն (ժամանակի համարյա մահացու մեղք էր դա), էլ անկումայնություն (իսկ սա արդեն մահացու էր ու մահացու)... Բայց ի՞նչ կարող էի անել: Ո՞վ է ասել. մենք ամենքս մեր մանկությունից ենք գալիս: Դե ես էլ իմ մանկությունից այդ կապույտն էի բերել... Չբերեի՞... թողնեի՞ այնտե՞ր...» (36):

Նկարագրական խոսքում մյուս ոչ պակաս կարևոր հատկանիշներից է գործողությունները շարժման մեջ ներկայացնելը, որի համար հեղինակները հաճախ գործածում են ընթացք, շարունակականություն արտահայտող բայեր. **ծգվել, տարածվել, բարձրանալ, խոյանալ, փովել**, ինչպես նաև կապեր ու տարբեր բառաձևեր. **դեպի վեր//վար//աջ, վերև//ներքև, քաղաքի միջով, օրեր հեփո//առաջ//անց, տարիներ անց//առաջ, կեսօրից հեփո, վրա, տակ ևն**, որոնք ունեն, ինչպես տարածական, այնպես էլ ժամանակային նշանակություն և նկարագրում են տեղանքը, վայրը, ժամանակը: Դրանք հանդիպում ենք հիմնականում բնության նկարագրություններում. «Պատերզմից առաջ ու դեռ քիչ էլ հետո այդ ամենը դեռ կենդանի էր Արաբկիրում (196) // Հրազդանը Արզնուց վերև մի կիրճ ունի, որ իմ մանկության տեսիլքանման հուշերի Եփրատի կիրճն է հիշեցնում (197) // Վայրի, շեկ ժայռեր կան այդ կիրճում, արմատները ժայռերի մեջ խրած վայրի ընկուզենիներ» (197):

Նկարագրական խոսքի տիրույթում կարևոր տեղ են զբաղեցնում դիմանկարներն ու բնանկարները, որոնք գեղարվեստական վավերագրության և հատկապես հուշագրության մեջ էական նշանակություն ունեն:

Դիմանկար

Գեղարվեստական վավերագրության մեջ դիմանկար հասկացությունն օգտագործվում է իրական, կոնկրետ մարդկանց արտաքինի, բնավորության, վարքուբարքի, հոգեբանության և այլ հատկանիշների բնութագրման առիթով, որն, ի տարբերություն

գեղանկարչության, մշտական փոփոխվող վիճակներում է, շարժման մեջ, տարբեր վայրերում: Գեղարվեստական վավերագրողը, դիմանկարի կերտմանը զուգահեռ, կարող է անդրադառնալ նաև իր բնորդի կենսապատումին, ներկայացրել նեղ անձնական փաստեր, հանդիպումների դրվագներ, դիմանկարն ամբողջացնելու նպատակով:

Վ. Դավթյանի «Անխորագիր» վիպակ-էսսեն, որը նրա վերհուշի գեղարվեստական արտահայտությունն է, առանձնակի սիրով ու ջերմությամբ ընթերցողին ծանոթացնում է նրա կյանքի տարբեր շրջաններում հանդիպած մարդկանց ու կերպարներին: Քանիցս նշել ենք, որ Վ. Դավթյանը սեղմ ու պատկերավոր խոսքի վարպետ է, ձգտում է հնարավորինս սուղ միջոցներով և դիպուկ բառերով ներգործել: «...հերոսների անհատականացումը... սկսվում է նրանց արտաքինի նկարագրությամբ, երբ հեղինակը, օգտագործելով յուրաքանչյուր հերոսի համար յուրահատուկ մակդիրներ ու համեմատություններ, ստեղծում է նրանց դիմանկարը և ապա դրան համապատասխան բացահայտում նրանց ներքինը, որի հետ և կապվում է այդ հերոսների վարքագիծը», - գրում է Լ. Եգեկյանը (Եգեկյան, 1975, էջ 106):

Հիմքում ունենալով փաստագրականն ու վավերականը և օբյեկտի էական, կենդանի հատկանիշների պատկերումն ու հեղինակային անձնավորված մոտեցումը՝ դիմանկարը դառնում է հեղինակի ինչպես մերձավոր, այնպես էլ հեռավոր միջավայրի անմիջական արտահայտիչը: Դիմանկարիչը հմտորեն օգտվում է իր և այլոց հուշերից՝ տալով «բնորդի» ամբողջական կամ մասնակի բնութագիրը, և այդ պարագայում բնական է, որ կենսագրությունից դիմանկար ու դիմանկարից կենսագրության անցման ընթացքում այն կարող է փոխաձևվել՝ դառնալով ստեղծագործական երկունքի հետևանք, ուր միշտ շոշափելիորեն զգացնել է տալիս հեղինակային երևակայությունը, ծիրքը, ընդհանրացումներ կատարելու ունակությունը: Ինչպես ուսումնասիրությունը ցույց է տալիս, Վ. Դավթյանը դիմանկար ստեղծելու գործում էլ հավատարիմ է իր խոսքարվեստին և պարզ, բովանդակային և սեղմ խոսքով կարողանում է ներկայացնել կերպարներին՝ հայտնաբերելով բառային ուշագրավ նրբերանգներ:

Ինչպես նկատել են շատ ուսումնասիրողներ, դիմանկարի ստեղծման գործում կարևոր նշանակություն ունի առաջին տպավորությունը, հերոսների արտաքին նկարագրությունը՝ դեմքի, կազմվածքի, քայլվածքի, շարժումների հաշվառումով: Ա.Ծառուկյանը իր «Հին երազներ, նոր ճամբաներ» հուշագրության մեջ այդ մասին շատ ճիշտ ու դիպուկ ձևակերպում է տալիս. «Առաջին հանդիպումը կը նմանի նկարիչի մը առաջին գիծերուն: Գույները, երանգները,

արտահայտութեան նրբությունները եւ հատկանշական բոլոր մանրամասնությունները կու գան յետոյ, ամբողջացնելու համար դէմք մը, բայց հիմնականը, էականը՝ մատիտի առաջին հարուածներն են, որով կ'որուագծուի պատկերը» (Ծառուկեան, 1969, էջ 56):

Գեղարվեստական վավերագրությունում դիմանկարներն ամբողջանում են մի քանի եղանակով. դրանք մարդկանց արտաքին և ներքին հատկանիշների նկարագրությունն է, ինչպես նաև համեմատությունը:

Կառուցվածքային նույն սկզբունքը տեսնում ենք նաև Վ.Դավթյանի «Անխորագիր» վիպակ-էսսեում, սակայն իրեն յուրահատուկ ձևով: Դավթյանական դիմանկարում, արտաքին հատկանիշները նկարագրելիս, շեշտը դրվում է այդ մարդուն մյուսներից տարբերակող ամենարտահայտիչ, աչքի ընկնող հատկանիշների վրա՝ առանց ձգձգվածության ու մանրամասների՝ կիրառելով լեզվաոճական այնպիսի հնարներ, որոնք անբողջացնում են բնորդի արտաքինը, գործողությունները, արարքները և խոսքը՝ ձևավորելով դիմապատկերային նմուշը: «Սև, շատ սև ու խոշոր աչքերով, սև, շատ սև մազերով այն կնոջ փոխարեն հիմա էլ հաճախ մեր տուն սկսեց գալ կապույտ շատ կապույտ աչքերով, շեկ, շատ շեկ մազերով Ֆրոսյան...» (75) // «Դեմքը գունատ է, համարյա դեղին, բայց երբ լնդերը բացվում են, շատ լայն են բացվում, դեմքին գոյանում է կարմիրից ու դեղինից խառնված մի արհամարհանք ու հեգնանք» (127) // «Սիմոնը սև, պինդ, ուժեղ տղա էր: Ասում էին՝ «Ժիգան» (կողոպտիչ, զինված հրոսակ) է, ու վախենում էին նրանից: Ինձ նման տղաների հավաքած՝ ամբարի տակ փող էր խաղում» (72): Ինչպես տեսնում ենք, դիմանկարներում հիմնականում բնորդների ուսից վերև դիմապատկերներն են: Հաճախ արտաքին հատկանիշներին ձուլվում են նաև ներքին հատկանիշներն ու բնավորության գծերը՝ մարդու հոգեկան գործընթացների տարաբնույթ դրսևորումներով. «Ղազիկյանը Երևանի դատարաններից մեկում գրագիր էր: Եթե ասեմ՝ կարգ ու կանոնի ջերմ պաշտպան էր, հեռու կլինեմ ճշմարտությունից, եթե ասեմ՝ մոլի սիրահար էր, մի փոքր մոտեցած կլինեմ ճշմարտությանը, իսկ եթե ասեմ, թե հենց քարացած կարգ ու կանոնն էր՝ ճիշտ կլինեմ: Այլ խոսքով՝ կարգ ու կանոնի ֆանատիկ էր...» (174): Դիմանկար կերտելիս ուշագրավ է, որ հուշագիր-հեղինակն այն հաճախ կառուցում է համեմատության սկզբունքով, երբ բնորդը համեմատվում է մեկ այլ անձի, բնության արարածների կամ առարկաների հետ. «Գևորգ աղան ու Սեդրակ աղան քենակալներ էին: Գևորգ աղան՝ կարճահասակ, ջղային, մի աչքը ճմռթած ու ճռռթած: Սեդրակ աղան՝ բարձրահասակ, հանգիստ, արժանապատիվ, աչքերի

խորքերում, շատ խորքերում՝ երգիծանքի հազիվ նկատելի կայծեր (172) // Պատկառելի տարիքով, մեծ քիթ, մանրաչ, խորդուբորդ դեմքով Համբարձում աղան սիրահարվեց չգիտեն որտեղից եկած ու Արաբկիրում հաստատված գլխարկ կարող մի բավականին երիտասարդ, շեկլիկ ու գեղեցիկ կնոջ» (178): Ինչպես տեսնում ենք վերոբերյալ օրինակներից, բնորդների դիմանկարները կերտելիս Վ.Դավթյանը նուրբ դիտողականությամբ անդրադառնում է նաև շատ այլ շերտերի՝ վարքագծի, ճակատագրի, խոսելաձևի, բառապաշարի, անգամ միջավայրի, որտեղ գտնվում է հերոսը, ինչից ելնելով էլ փոխվում են լեզվական բնութագրիչները: Դիմանկարները կերտվում են համապատասխան գոյականների ու ածականների բառախմբերով. «Հավանաբար մեր ձայնը լսելով կնոջ թիկունքում հայտնվեց Դեմիրճյանը. սպիտակ խալաթ էր հագին: Նրա կորացած կերպարանքը ուրվականի տպավորություն թողեց: Ծակոդ, չարացած հայացքով զննեց մեզ ու հարցրեց... (11) // Ֆրոսյան... երբ մազերը արձակ վազում էր բակով մեկ, ինձ զարմացնում էր դրանց առատությունն ու ոսկեղեն փայլը: Քամուն տված ուսի էր ասես: Իսկ հասակը՝ սլացիկ, բարալիկ, կրծքերը՝ առլի... (73) // Դռների մեջ, ճրագը ձեռքին, կանգնեց մի կին: Սենյակում ճրագի լույսով ես տեսա. երիտասարդ էր ու գեղեցիկ: Հագին միայն շապիկ էր: Ոսկեգույն, առատ մազերն էին, որ հազիվ էին կարողանում փակել ուսերի սպիտակ մերկությունը: Իսկ երբ մի փոքր թեքվում էր, բացվում էր օձիքը ու բացում պիրկ ու գիրգ ստինքների մատույցները» (164):

Ինչպես գրեթե բոլոր հուշագրերի, այնպես էլ Վ.Դավթյանի վիպակ-էսսեում ներկայացված են ծնողների, ընտանիքի մյուս անդամների և ազգականների դիմանկարները: Հատկապես ծնողների դիմանկարներում երևում են հոգեբանական տարբեր որակումներ, որոնք սփռված են պատումի էջերին ու հենց դրանք էլ ամբողջացնում են պատկերը: «Ու ժպտալիս գեղեցիկ, շատ էր գեղեցիկ շիկահեր ու կապուտաչյա հայրս... (68) // Մայրս... խեղճ, փխրուն, տոկուն մայրս» (123): Վ.Դավթյանը մեծագույն սիրով ու խոր ցավով է ներկայացնում իր վաղամեռիկ Հարություն հորեղբորը, որը սպանվել էր Կերչում, որի մահն ընտանիքն ամեն կերպ փորձել էր թաքցնել նրանից: Հորեղբոր կերպարը ներկայացնում է՝ հակադրելով հոր կերպարին. «Հայրս՝ կապուտաչյա, շիկավուն, ճերմակամորթ, գեղեցիկ, նա՛ սևաչյա, սևահեր, թուփ... Հայրս՝ զվարթ, խոսքաշեն, սրամիտ, նա՛ լռակյաց, ինքնասույզ, խոհուն... Հայրս՝ սեղանի, քեֆի մարդ, նա՛ չտեսա երբեք մի բաժակ գինուց ավելի խմեր, այն էլ՝ դեպքից դեպք», ապա շարունակում. «Դա այն երիտասարդն էր, որ հետո, երբ ես արդեն չորրորդ թե հինգերորդ դասարան էի, ինձ համար

առաջին անգամ Տերյան ու Մեծարենց կարդաց՝ մեկնաբանելով յուրաքանչյուր տողն ու բառը... Եվ վերջապես դա այն մարդն էր (թող ներեն ինձ իմ բոլոր հարազատներն ու բարեկամները), որից ավելի ազնիվն ու մաքուրը, ճշմարիտն ու արդարը չտեսա իմ ողջ կյանքում» (115,114): Արաբկիրցի տարեց կնոջ իսկական դիմանկար են պատկերում տատի մասին հուշերը: Հատկանշական է, որ պատումի մեջ տատի մասին հաճախ է խոսվում, բայց դիմանկարը պատկերվում է, երբ նկարագրվում է նրա կյանքի վերջին օրը. «Դուրս եկավ տատս՝ գունատ, դողդոջ, գլխին՝ Արաբկիրից բերած ոսկեփուշ յազման, ուսերին՝ սև, ծանր շալը, լայն, գույնզգույն գոտու արանքը, ինչպես միշտ ջղարայի ու բռնոթու տուփը խրած» (78):

Վ.Դավթյանը խոր ջերմությամբ և իր անցյալի նկատմամբ գիտակցված հարգանքով է ներկայացնում իր հոգուն մոտ և մտերիմ մարդկանց, սակայն պետք է նշել, որ անգամ իր կողմից ոչ այնքան համակրանքի արժանացած կերպարները ներկայացվում են զսպված ու չափի զգացողությամբ. «Չեմ ուզում նշել, թե ինչ առարկա էր դասավանդում մեզ, ազգանունն էլ չեմ փոխում ինչ-որ մոտավոր համահնչյուն ազգանունով, այլ պարզապես Անանունյան եմ կոչում... Երկարավուն, դեղին դեմք, շատ երկար, պինդ ատամներ և երկար սկանջներ ուներ սույն Անանունյանը» (131):

Նա կարողանում է իր լեզվական զինանանոցն օգտագործել՝ կիրառելով թարմ զուգորդումներ, տալով բառերին նոր իմաստային երանգներ և դարձնելով դիմանկարներն ավելի ինքնատիպ, խոսուն ու կենդանի:

Բնանկար

Բնանկարը (բնապատկեր) գեղարվեստական վավերագրության կարևոր շերտերից մեկն է, որը նպաստում է հերոսների ներքին հույզերի ու իրադարձությունների բացահայտմանը: Եթե գեղարվեստական գրականության մեջ բնանկարն ընդարձակ տիրույթներ կարող է գրավել, ապա հուշագրության մեջ ծավալն ավելի սեղմ է և հիմնականում միահյուսված հեղինակային խոսքին: Ընդամենը մի քանի վրձնահարվածով, պարզ լեզվամտածողությամբ ու ամենքին մատչելի խոսքով Վ.Դավթյանը պատկերում է իր ոճին բնորոշ բնանկարներ. «Ու պիտի չլինեին երևանյան այն կապույտ գիշերները, երբ ես ու Հրաչյա Հովհաննիսյանը գիշերն ի լույս շրջում էինք նաիրյան բարդիների կապույտ սոսափյունի և մայթերն ի վար զրնգացող առունների ուղեկցությամբ, զրուցում սիրուց ու Չարենցից, Մահարուց ու Բակունցից... (170) //...Չեմ հիշում ու զարմանում եմ, որ չեմ հիշում, թե

ինչպիսին է եղել այն առավուրդը, երբ լքել ենք մեր տունը: Բայց հիշում եմ, լավ եմ հիշում, որ ինչ-որ տեղ ջորին խրտնեց: Դեմը գետն էր՝ ահեղաձայն, որոտաձայն, փրփրած: Եփրա՛տն էր արդյոք: Ես տատիս գրկի մեջն էի, տատս ինձ ամուր սեղմել էր կրծքին: Նայում էի փրփրած գետին ու վախենում: Երևի, այո՛, Եփրատն էր: Էլ ո՞րը պիտի լիներ: Կամուրջ քանդող Եփրատը: Հայոց մայր գետը (40) // Փակում եմ աչքերս, և իմ դեմ նորից Ոսկեգետակն է, Երմոնյա տատս գետափին փռած բուրդ է լվանում: Ես ու քույրս ոտաբոբիկ վազում ենք գետակն ի վար ու հավաքում ջրի փախցրած բուրդը » (34):

Վ. Դավթյանի «Անխորագիր» վիպակ-էսսեում գեղարվեստական բնանկարներն ընթերցողին ներկայացնում են դավթյանական կյանքի տարբեր փուլերի բնակավայրեր՝ Արաբկիր բնօրրանից մինչև Կուբան երկրամասի Կրասնոդար քաղաք, Նոր Արաբկիր, Մոնղոլիայի տափաստաններ, Չանգվի ձոր, հեռավոր Միացյալ Նահանգներ ևն: Դրանցից յուրաքանչյուրի նկարագրությունը յուրովի է ներազդում ընթերցողի վրա՝ դարձնելով նրան գրողի ապրումակիցն ու նրա հույզեր կիսողը: Հատկապես բանաստեղծական են այն բնանկարները, որոնք վաղ մանկության խամրած հուշերի և ընտանիքի անդամներից լսած պատմությունների արդյունքում են ձևավորվել: Այդ տողերի մեծ մասը սկսվում է **երևի, կարծես (թե), հավանաբար** վերաբերականներով: Ոսկեգետակի ափին գտնվող Արաբկիր բնօրրանի երազները, նրա նկատմամբ ունեցած կարոտն ու բանաստեղծական ասքը միախառնվում են վերհուշին ու դարձնում բնապատկերներն առինքնող ու գրավիչ. «Հավանաբար Եփրատի ընթացքը բռնած իմ նախնիները եկել, մտել են այդ հովիտը և տեսնելով, որ շատ է բարեբեր, գեղեցիկ, օդասուն ու ջրառատ, որոշել են հենց այդտեղ էլ կանգ առնել: Նայել են հովտի միջով հոսող վճիտ ու թափանցիկ գետակին ու տեսնելով, որ հատակի ավազը ոսկուն է տալիս, անունը Ոսկեգետակ են դրել» (22): Իր մտապատկերն ու իրականությունը հակադրելիս փոխվում է նաև բնանկարը: Մի այլ նկարագիր ունի հուշերում մնացած Եփրատը և այն Եփրատը, որը Վ.Դավթյանը տեսնում է ավելի ուշ տարիքում, երբ այցելում է Դեր-Ջորի փոքրիկ բնակավայրում գտնվող հայկական դպրոցը. «Սիրիայում էինք... Հարբաժի պես էի ու հիմա աղոտ եմ հիշում և՛ դպրոցը, և՛ մանուկներին, և՛ այն, թե ինչ խոսեցինք նրանց հետ: Հետո Եփրատը... Դեղին, պղտոր, խաղաղ մի գետ: Իմ տեսիլների մեջ նա միշտ անդունդներում է որոտացել, զարկվել է ժայռերին, որձաքարերից դղրոցներ է հանել ու ջրափոշի» (43): Արարատ լեռը նույնպես պիտի երկակի տպավորվեր, երբ տեսնում էր առաջին անգամ՝ գաղթի ճանապարհին, անորոշ կարգավիճակում, անտուն ու անօթևան, և երբ տեսնում էր ամեն օր՝ տան

պատուհանից կամ քաղաքի տարբեր մասերից. «Վեովում՝ կապույտի մեջ, զույգ լեռան սպիտակ կատարներ են: Եվ քանի որ լեռան ստորոտում մշուշ է, և այդ մշուշը երկնքի պես կապույտ է, այնպես է թվում, թե զույգ լեռները հրաշքով կտրվել են գետնից ու կախվել գարնանային առավոտի կապույտ ու զրնգուն օդում // Վետո Արարատն ամեն օր իմ հայացքի դեմ պիտի լիներ, պիտի տեսնեի, որ երկնքից կախված չէ, այլ ծանր ու ամուր նստած է հողին: Պիտի առավոտները նայեի, ու նա գեղեցիկ, շատ գեղեցիկ թվար ինձ. ամռան շոգ օրերին պիտի նայեի ու նրա կատարից մի բուռ ձյուն երազեի, աշնան գիշերներին պիտի տեսնեի նրա ստորոտներին ու լանջերին վառվող կրակները, և ինձ բացատրեին, որ այնտեղ եղեգնուտներ են, ու թուրքերը վառում են եղեգնուտները» (88):

Բնության պատկերները զգայական ու ներգործուն ուժ են հաղորդում պատումին և նպաստում իրավիճակի, միջավայրի կամ կերպարի համակողմանի ամբողջացմանը, իսկ հաջողված մակդիրները, համեմատություններն ու փոխաբերությունները նպաստում են դրան. «Երևի շատ պայծառ ու շատ տխուր է եղել, այն առավոտներից, երբ ինչպես հայերենն է ասում՝ «Աստծո դռներն են ի բաց... (37) // Գիհին՝ պողպատի պես զրնգուն բուն և արյան երակների պես կարմիր արմատներ ունեցող գիհին (168) // Եվ հանկարծ ոտքերիս տակ բացվեց սհռելի մի ձոր, վիթխարի մի անդունդ, որի միջով անցնում էր, ավելի ճիշտ վիշապաձայն շառաչում, մռնչում, փրփրում կատաղած մի գետ: Կրասնոդարի տափաստաններին, Կուբան գետի խաղաղությանը սովոր իմ աչքերի համար դա զարմանալի զարմանք էր: Գետի երկու ափն ի վար այգիներ էին: Հազիվհազ կանաչած այգիներ, որոնց մեջ տեղ-տեղ ճերմակին էին տալիս արդեն ծաղկած ծառերը (121):

Գնահատող և դատողական խոսք

Ինչպես գիտենք, գնահատող խոսքը հեղինակային խոսքի տրամաբանական կողմն է արտահայտում և կարող է առնչվել ինչպես հեղինակի զգացմունքներին, այնպես էլ հոգեկան հուզումներին: Այն մեկնաբանում է տարբեր իրավիճակներ, փաստեր, դեպքեր և բացահայտում դրանց պատճառահետևանքային կապը. «Այդպես է եղել: Բայց այդպես է եղել մինչև Մեծ եղեռնից առաջ: Եվ եթե այն «Մեծ» է կոչվել, նշանակում է՝ եղել են նաև փոքրերը... Եղել են: Եվ դրանք ժամանակին նույնպես «Մեծ» են կոչվել, բայց քանի որ դրանց ավելի մեծերն են հետևել, ուստի աստիճանաբար կորցրել են իրենց մակդիրները» (32): Գնահատող խոսքում միտքն անպայման բացատրում է ենթատեքստը, որը արտահայտվում է եզրահանգումներով, որոնք էլ ձևակերպվում են բարդ նախադասություններով: Գեղարվեստական

վավերագրության տիրույթում գնահատող խոսքն արտահայտվում է իրեն բնորոշ բառային միավորներով՝ **պարզվում է, եղել է, երբեմն, հավանաբար** ևն. «Ճամփեզրյա ձյունների վրա՝ այստեղ-այնտեղ ճնճղուկների անշնչացած, պստիկ մարմիններն են: Հավանաբար թռչելիս օդում սառել են ու վայր ընկել» (6) և լեզվական միջոցներով (հարցական նախադասություններով, ավելի հաճախ՝ ճարտասանական նախադասություններով): Դ. Գյուրջիյանը գրում է. «Ճարտասանական հարցը ուժեղ զգացմունքներ արտահայտելու կարևոր միջոց է: Այս դեպքում կարևորը հույզի, ապրումի արտահայտումն է, ոչ թե հարցումը կամ դատողությունը... Այն հույզեր արտահայտելու ամենաուժեղ ձևերից է: Կարևոր է, թե հուզական ի՞նչ լիցք ունի այդ հարցումը, ինչպե՞ս է արտահայտում հեղինակի (կամ հերոսի) հույզերը, տագնապները, զանազան զգացումները» (Գյուրջիյան, 2015, էջ 255): Վ.Դավթյանի հուշագրական պատումում հաճախադեպ են և՛ հարցական և ճարտասանական հարցական նախադասությունները, որոնք որոշակի գործողությունների ընթացք են մեկնաբանում. «Հետո, տարիների հեռվից մտածել եմ. «Տեսնես՝ այդ խանումը որևէ առնչություն ունեցե՞լ է Թեքեյանի «Թրքուհու» հետ... Հավանաբար ունեցել է, քանի որ շատ անուշ եմ արտասանել այդ «խանումը» (44) // «Բանաստեղծը մեծափառ, տեսա՞ր ահա, որ արքան ու բանաստեղծը անհամատեղելի են, ոսոխներ են, դու ինչպե՞ս էիր ուզում այդ երկուսը համատեղել թշվառ անձիդ մեջ: Տեղն է քեզ... Դու էլ երևի արդարանաս, թե մեղավորը դու չէիր, այլ Կլեոպատրայի քիթը, շատ էր գեղեցիկ... Քիթը քիթ, բայց արքան էլ պիտի արքա լինի» (16):

Երկխոսությունը իբրև խոսքի կառուցվածքային բաղադրիչ

Երկխոսությունը մարդկային կյանքի անբաժանելի մասն է և կարևոր տեղ ունի ինչպես գեղարվեստական գրականության, այնպես էլ վավերագրության մեջ: Այն սյուժեի զարգացման, կերպարների բնութագրման, համոզմունքների արտահայտման միջոցներից է: Երկխոսության տեսաբան Մ. Բախտինը երկխոսությունը հետևյալ կերպ է բնութագրում. «Ամեն մի ռեպլիկ մենախոսություն է, ամեն մի մենախոսություն՝ մեծ երկխոսության ռեպլիկ» (Բախտին, 1986, էջ 139): «Երկխոսությունը՝ որպես հաղորդակցման եղանակ, գեղարվեստական-վավերագրական երկերում (և ոչ միայն) հեղինակի համոզմունքների արտահայտման, բնորոշների բնութագրման, դեպքերի նկարագրելու միջոց է»,- գրում է Ա. Գալստյանը (Գալստյան, 2020, հ. Ա, էջ 118): Վ.Դավթյանի վիպակ-էսսեն հատվածաբար շարադրվում է իբրև զրույց-երազ կամ մտովի զրույց կարոտի գրականության հիմնադիր գրողներից

մեկի՝ Հակոբ Մնձուրու հետ.«Մինչ ես ու Մնձուրին մեր թթենիների տակ նստած մտովի զրուցում ենք, մեզ է մոտենում հայրս, բարև, Աստծու բարի ասում, նստում սեղանի մոտ ու իսկույն մի պատմություն սկսում, որ լսել եմ բազում անգամ ու բազում տարբերակներով» (Դավթյան, 2017, էջ 56):

Գեղարվեստական վավերագրության անբաժանելի մասն է երկխոսությունը, որը զրույցի պարզ ձևն է՝ երկու կամ ավելի մարդկանց մասնակցությամբ: Եվ ինչպես գեղարվեստական գրականության, այնպես էլ հուշագրության մեջ երկխոսությունները բացահայտում են հեղինակի հետ առնչվող կերպարներին ու ընթերցողին ցույց տալիս նրանց ու հեղինակի փոխհարաբերությունները՝ կենդանություն հաղորդելով զրույցին:

«- Եվ դու կյանքում նամակ գրած չկա՞ս:

- Համարյա չէ:

- Նույնիսկ սիրայի՞ն...

- Նույնիսկ սիրային:

- Իսկ ես քո սիրային բանաստեղծություններից այլ տպավորություն էի ստացել...

- Որ ի՞նչ...

- Որ աղի հանքից ես գալիս:

- Աղի հանքի՞ց,- չհասկացա:

- Երբ տղամարդու աչքը շոռ է լինում, պարսկահայերս ասում ենք՝ այս մարդը աղի հանքից է գալիս:

- Մեղքս ի՞նչ թաքցնեմ, Ալմա, աղի հանքի հետ հարաբերություններս այնքան էլ վատ չեն, բայց առանց նամակագրության» (149):

Գեղարվեստական վավերագրության մեջ երկխոսությունների տարատեսակ դրսևորումներ կան՝ հեռախոսագրույց, զրույց, նամակ, անպատասխան երկխոսություն, ինքնահարցադրում ևն: Կարելի է ասել, որ հուշագրությունն ինքնին զրույց է կամ ինքնագրույց, որը զրույցի ենթատեսակ է: Զրույցը, լինելով ներքին երկխոսության տարատեսակ, ընթերցողին փոխանցում է հեղինակի մտորումներն ու ապրումները, որը երբեմն ուղեկցվում է հեղինակի ինքնահարցադրումներով: Այդ տեսակից օգտվում է Վ.Դավթյանը, հատկապես, երբ ուզում է ամեն կերպ «արդարացնել» իր՝ արձակ գրելու որոշումը. «Գիտե՞ս՝ ինչ ասել է իսկական արձակ... Իսկական արձակի համար նախ պետք է մի կուռ, հետաքրքիր սյուժե ունենալ, հանգիստ, խաղաղ, մանրամասն պատմելու ծիրք: Նաև՝ համբերություն, նաև՝ համառություն, նաև սուր դիտողականություն, նաև, նաև... մի խոսքով բազմաթիվ այլ նաևներ: Ունե՞ս այդ ամենը» (4) // «Արձակը պիտի կերպարներ ունենա, չէ՞, դրական, բացասական: Դե, կերպարներից մեկը ես եմ լինելու, դրակա՞ն»

եմ, բացասակա՞ն, Աստված գիտե: Լինելու են նաև ինձ հանդիպած մարդկանցից ոմանք» (4): Վ.Դավթյանի վիպակ-էսսեում հեղինակային խոհն ու մտորումները շատ հաճախ ուղեկցվում են երկխոսության այնպիսի տարատեսակով, որտեղ ինքնահարցումներն ինքնապատասխաններ են ստանում: Դրանք մենախոսություններ չեն և շարադրված են իբրև երկխոսության: Այդ երկխոսությունները հաճախ անվանվում են նաև միակողմանի երկխոսություններ: Նման երկխոսություններում հեղինակը և նրա ներքին «ես» -ը պայքարի մեջ են, և հեղինակն իր իսկ հարցին տալիս է իր մտային պատասխանը: Այսպիսի երկխոսությունները պատումը դարձնում են գրավիչ.

«- Ուրեմն ի՞նչ է լինելու գրածդ:

- Չգիտեմ:

- Ինքնակենսագրությո՞ւն:

- Մասամբ:

- Հուշե՞ր:

- Մասամբ:

- Ուղեգրությո՞ւն:

- Դարձյալ մասամբ:

- Դե ասա՝ ինչ-որ վայրիվերո բան է լինելու, ամեն ինչ խառն ու խռիվ, առանց դեպքերի տրամաբանական հաջորդականության, առանց, ինչպես մեր քննադատներից ոմանք կասեին, բնականոն ընթացքի» (4):

Դավթյանական պատումի հետաքրքիր էջերից է հեղինակի և ժողովրդի կյանքի պատմական կամ կարևոր իրադարձություններն արտացոլող միակողմանի երկխոսությունները, որոնք ուղեկցվում են հարցական երանգի նախադասություններով. «Հայոց մայր գետը: Ի՞նչ իմանայի, որ առաջին ու վերջին անգամ եմ տեսնում հայոց պատմության հեթանոսական հեռուներից շառաչող այս գետը... Գետ, որի ալիքներում գիշերները մեր Սիրո աստվածուհի Աստղիկն է լողացել: Հիշո՞ւմ եք լեզենդը... Լեռներից իջնում էր սիրո աստվածուհին, մերկանում ու մտնում գետը...» (40): «Անխորագիր» վիպակ-էսսեում հեղինակը հաճախ խոսում է իր բնորոշների հետ, հատկապես՝ Մնձուրու.

«- Սիրելի Մնձուրի, մի զվարճալի պատմություն ընկավ միտքս մեր արաբկիրցիների՝ այստեղ գալու հետ կապված, թե չես ծանձրանա, պատմեմ...(57) // Իսկ այս մեկը, սիրելի Մնձուրի, հեքիաթ չէ, ամենևին հեքիաթ չէ, թեև ինչ-որ չափով հեքիաթի է նման: Դու ինքդ շատ լավ գիտես. կյանքում կան շատ դեպքեր ու փաստեր, որ եթե նույնությամբ տաս թղթին, կկարդան ու կասեն՝ հեքիաթ է: Եվ հակառակը, կհնարես բաներ, մտացածին, կկարդան ու կասեն՝ այո, ճիշտ է, սա իրական կյանք է» (57):

Ինչպես առհասարակ գեղարվեստական վավերագրության մեջ, այնպես էլ Վ.Դավթյանի էսսեում երկխոսությունների անբաժանելի մասն են կազմում կոչականները: Գեղարվեստական-վավերագրական արձակում կոչականն առաջին հերթին ընթերցողի հետ կապ հաստատելու միջոց է, և Վ.Դավթյանն էլ օգտագործում է այդ միջոցը՝ դիմելով իր մտովի զրուցակցին՝ Հակոբ Մնձուրուն և ընթերցողին. «Ների՛ր ինձ, Հակոբ Մնձուրի, և ների՛ր ինձ, ընթերցող, որ հուշերս այսպես վայրիվերո են...» (65): Ինչպես գիտենք, կոչականը մեծ տարածում ունի ողջույնի, հրաժեշտի դրսևորումներում, որոնք բացակայում են վիպակ-էսսեում, քանի որ հեղինակը իր պատումը կառուցում է՝ երկխոսություններով հիշողությունը ընդմիջելու եղանակով, սակայն նույնը չենք կարող ասել դիմելաձևերի մասին, որոնք զգալի դեր ու նշանակություն ունեն հատկապես կերպարաստեղծման գործում: Բնական է, որ Վ.Դավթյանի ինքնակենսագրական էսսեում գործածվում են ինքնատիպ դիմելաձևեր: Քանի որ սյուժետային առումով հիշողությունները ծավալվում են Եփրատի վտակներից մեկի՝ Ոսկեգետակի ափին գտնվող Արաբկիրից, հասնում Նոր Արաբկիր, Մոնղոլիայի բանակային կյանքից ու Կրասնոդար երկրամասից ձգվում ընդհուպ Միացյալ Նահանգներ, ապա այդ ամենը չէր կարող իր ուղիղ ազդեցությունը չթողնել լեզվական միջոցների վրա: Դրանք իրենց բնույթով նույնպես խիստ խայտաբղետ են՝ սկսած օտար դիմելաձևերից մինչև մտերմական ու փաղաքշական, բարբառային ու ժողովրդական դիմելաձևերը.

«Դուդու քույրիկ, ինչու՞ ատչափ հեռացար,- հարցնում է Մնձուրին:

- Հակոբ եղբայր, հոդ քամին քիչ մը շատ կփչե... (57) // Աղչի, ջուրն էլ փողով կլինի՞ (55) // -Շավուր խանում, հոգուդ մատաղ, Ե՛լ, Ե՛լ, կաթո խմե, կպաղի (74) // Ե՛լ Վահագս, Ե՛լ ձագուկս (106) // -Մի՛ հուզվեք, ընկեր Անանունյան, մեզ են պետք, բոլորիս են պետք այդ բանաստեղծությունները (131) // Ա՛յ տղա, չլինի՞ բանաստեղծ ես (159) // Դու, Սևուկ, երևում է՝ հարավից ես ու շատ ես մրսած... (165) // -Մայրի՛կ, սրբությամբ կպահես այս բաժակը, սրանով մեր տանը գինի է խմել Վահագն Դավթյանը (168) // -Եղբայր, գլուխս քանի՞ ցիլինդր պիտի դնեի (175) // -Էհ, գո՞հ ես, բարեկամ (190)»:

Եզրակացություն

Ամփոփելով մեր ուսումնասիրությունը՝ պետք է նշենք, որ ձգտել ենք կարելույն չափ ներկայացնել Վ. Դավթյանի «Անխորագիր» վիպակ-էսսեի լեզվաոճական որոշ առանձնահատկություններ՝ ցույց տալով դավթյանական լեզվի ինքնատիպությունն ու բերած նպաստը մայրենի

լեզվի զարգացմանը: Մասնավորապես անդրադարձել ենք նրա էսսեի ոճական կառույցների բաղադրիչների համակարգին՝ փորձելով ամբողջության մեջ դիտարկել Վ.Դավթյան բանաստեղծի և արձակագրի խոսքարվեստի որոշ հարցեր: Ընդգծել ենք նրա ոճը տարբերակող մի շարք հատկանիշներ՝ պարզություն, ինքնատիպություն, բնականություն, պատկերավորություն և արտահայտչականություն՝ շեշտը դնելով, թե որքան է հեղինակը կարևորում բովանդակությունն ու ասելիքի խորքը, և ինչպես են այդ հատկանիշները արտահայտվում թե՛ պատմողական, թե՛ նկարագրական, թե՛ դատողական խոսքում և անգամ երկխոսություններում: Համադրելով վերոնշյալ հատկանիշները՝ կարող ենք եզրակացնել, որ Վ.Դավթյանը ոչ միայն խուսափում է բառերի տարափից ու ծավալվելուց, այլև նախընտրում է կոնկրետ, դինամիկ և արտահայտիչ պատկերը, որի շնորհիվ էլ նրա խոսքը ձեռք է բերում գեղագիտական արժեք, օժտվում հուզականությամբ և ընթերցողի վրա ներգործելու հատկությամբ: Վ.Դավթյանն այն հեղինակներից է, որը խոսք կառուցելու հմտությունը վերածում է արվեստի և, շարունակելով զարգացնել հայ դասականների ավանդույթները, ուղի է հարթում երիտասարդ ստեղծագործողների համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Աղաբաբյան Ս. (1984), 20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում, Ե., 504 էջ:
Aghababyan S. (1984), 20-rd dari hay grakanowt'yan zowgaher'akannerowm, E., 504 e': (in Armenian)
2. Գալստյան Հ. (1978), Վահագն Դավթյանի պոեզիան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, Ե. (158).
Galstyan H. (1978), Vahagn Davt'yani poezian, HSSH GA hrat, E. (158): (in Armenian)
3. Գալստյան Ա. (2020), Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն 2 հատորով, Ե. (263,190):
Galstyan A. (2020), Ar&elahay gegharvestakan vaveragrowt'yan lezown 2 hatorov, E. (263,190): (in Armenian)

4. Գյուրջինյան Դ. (2015), Հայոց լեզու, Խոսքարվեստի դասագիրք, Ե. (301):
Gyowrjinyan D. (2015), Hayoc lezow, Xosqarvesti dasagirq, E. (301): (in Armenian)
5. Դավթյան Վ. (2017), «Անխորագիր» վիպակ-էսսե, Ե.(207):
Davt'yan V. (2017), «Anxoragir» vipak-e'sse, E.(207): (in Armenian)
6. Դանիելյան Կ. (1961), Հայ մեմուարային գրականության պատմությունից, Ե. (227):
Danielyan K. (1961), Hay memowarayin grakanowt'yan patmowt'yownic, E. (227): (in Armenian)
7. Եզեկյան Լ., (1986) Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի առանձնահատկություններ, Ե., (172):
Ezekyan L., (1986) Hrant Mat'osyani ard'aki xosqarvesti mi qani ar'and'nahatkowt'yowonner, E., (172): (in Armenian)
8. Եզեկյան Լ., (1975), Րաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը (ըստ պատմավեպերի նյութերի), Ե., (220):
Ezekyan L., (1975), Raffow steghc'agorc'owt'yowonneri lezown & otwy' (y'st patmaveperi nyowt'eri), E., (220): (in Armenian)
9. Եզեկյան Լ., (2005), Հայոց լեզու, Ե.(203):
Ezekyan L., (2005), Hayoc lezow, E.(203): (in Armenian)
10. Թամրազյան Հր., (1982) Տաղանդի հավերժ կենսագրությունը, «Գրական թերթ», 24 սեպտ.:
T'amrazyan Hr., (1982) Taghandi haverjh kensagrowt'yowny', «Grakan t'ert'», 24 sept.: (in Armenian)
11. Լեզվաբանական բառարան, (1975), ՀՍՍՀ ԳԱ, Ե.,(316):
Lezvabanakan bar'aran, (1975), HSSH GA, E.,(316): (in Armenian)
12. Խլղաթյան Ֆ., (1972) «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, «Լույս» հրատ., Ե.(287):
Xlghat'yan F., (1972) «Vardananq» patmavepi lezown & otwy', «Lowys» hrat., E. (287): (in Armenian)
13. Ծառուկեան Ա., (1960) Հին երազներ, նոր ճամբաներ, Պեյրոյթ (334):
C'ar'owkean A., (1960) Hin erazner, nor twambaner, Peyrowt' (334): (in Armenian)

14. Հայրապետյան Լ. (1999), Վահագն Դավթյանի խոսքարվեստը (148), Ե.:
Hayrapetyan L. (1999), Vahagn Davt'yanı xosqarvesty', E. (148):
(in Armenian)
15. Հարությունյան Հ. (1986), Գեղարվեստական խոսք, Ե. (288):
Harowt'yownyan H. (1986), Gegharvestakan xosq, E. (288):
(in Armenian)
16. Պողոսյան Պ. (1991), Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ
2 հատորով, Ե. (421,335):
Poghosyan P. (1991), Xosqi mshakowyt'i & otwagitowt'yan himownqner 2
hatorov, E. (421,335): (in Armenian)
17. Սարյան Վ. (1991), Ընտիր երկեր, հատոր IV, Ե. (430):
Saroyan V. (1991), Y'ntir erker, hator IV, E. (430): (in Armenian)
18. Սարյան Ա. (2000), ԺԵ դարի հայկական ուղեգրություններ, Ե. (213):
Saryan A. (2000), JhE dari haykakan owghegrowt'yowonner, E. (213):
(in Armenian)
19. Քալանթարյան Ժ. (1982), Գրական քննադատության տեսության և
պատմության հարցեր, Ե. (239):
Qalant'aryan Jh. (1982), Grakan qnnadatowt'yan tesowt'yan &
patmowt'yan harcer, E. (239): (in Armenian)
20. Белобровцева Н. (1986). Дар влекущий и мучительный,
“Литературное образование”, N 8.
Belobrovceva N. (1986). Dar vlekushhyj y muchytel'nyyj, “Lyteraturnoe
obrazovanye”, N 8. (In Russian)
21. Боброва О., История жанра дневника, <http://konesh.ru/bobrova-o-b-istoriya-janra-dnevnika.html>.
Bobrova O., Ystoryja zhanra dnevnyka, <http://konesh.ru/bobrova-o-b-istoriya-janra-dnevnika.html>. (In Russian)

ЛИЛИТ ГЕВОРГЯН – О НЕКОТОРЫХ ЯЗЫКОВЫХ И СТИЛИСТИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ ПОВЕСТИ-ЭССЕ В. ДАВТЯНА “БЕЗ НАЗВАНИЯ” (стилистические структуры и структурные компоненты речи)

Ключевые слова: Эссе, стилистическая система, мемуары, языковое мышление, повествование, описание, оценочная речь, рассуждение, диалог, достоинства речи

В статье исследуется автобиографическая повесть-эссе “Без названия” современного армянского поэта, оратора, переводчика, драматурга Ваагна Давтяна. Цель исследования - рассмотреть некоторые лингвистические вопросы и особенности документальной прозы писателя. Авторский стиль является одной из важных предпосылок развития и обогащения родного языка, а польза и благотворное влияние поэзии В. Давтяна неоднократно становились предметом обсуждения среди авторитетных лингвистов, литературоведов и критиков. В статье предпринята попытка выявления некоторых языковых и стилистических, а также личностных особенностей художественной документалистики автора. С этой целью рассматривается общая образная система, характерная для творчества автора, подчеркиваются достоинства давтяновской прозаической речи.

LILITH GEVORGYAN - SOME LINGUISTIC AND STYLISTIC FEATURES OF THE NOVELLA-ESSAY “UNTITLED” BY VAHAGN DAVTYAN (Stylistic structures and structural components of speech)

Keywords: *essay, stylistic system, documentary prose, linguistic mindset, narrative speech, descriptive speech, evaluative speech, reasoning speech, dialogue, virtues of speech.*

The article aims to examine the autobiographical novella-essay "Untitled" by Vahagn Davtyan, a contemporary Armenian poet, publicist, translator, and playwright. The study explores certain linguistic aspects and features of the writer's documentary prose. Given that an author's style is one of the crucial prerequisites for the development and enrichment of their native language, and that the poetic contributions and positive influence of Vahagn Davtyan have been extensively highlighted by prominent linguists and literary critics, we have attempted to uncover some of the linguistic-stylistic and individual traits of his documentary prose. The focus is placed on the imagery system of Davtyan's prose, highlighting the merits of Davtyan's prose style.

Ներկայացվել է՝ 22.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 30.10.2024 թ.

**ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԼԵՂՈՒՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԺԱՄԱՆԱԿՅԱ ՄՈՏԵՑՄԱՄԲ**

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Համառոտագիր

Սլավոնական լեզուներով 400 միլիոնից ավելի մարդ է խոսում Կենտրոնական Եվրոպայից մինչև Խաղաղ օվկիանոսի ափերն ընկած ընդարձակ տարածքներում: Այս լեզուները մի շարք երկրներում պետական-պաշտոնական լեզվի կարգավիճակ ունեն, սրանցից ուսերենը համաշխարհային և միջազգային շատ կազմակերպությունների պաշտոնական և աշխատանքային լեզու է:

Սլավոնական լեզուների հայերեն անունները Հայաստանի հարևան երկրների և Մերձավոր Արևելքի լեզուների պես հին չեն. որպես կանոն՝ դրանք աշխարհաբարյան կազմություններ են:

Արդի հայերենում սլավոնական լեզուների հայերեն անունները գերազանցապես մենաբառ են (**բուլղարերեն, լեհերեն, չեխերեն, սերբերեն, սլովակերեն** և այլն), բացառություն են **ռուսերեն** և **ռուսաց լեզու** տարբերակային լեզվանունները, որոնք հավասարապես ընդունված են հայերեն գիտական խոսքում (ավելի վաղ գործածվել է **լեհաց լեզու** «լեհերի լեզու» կապակցությունը):

Լեզվանունների որոշ տարբերակայնություն նկատվում է արևելահայերենի և արևմտահայերենի միջև (**բուլղարերեն – պուլկարերէն, սերբերեն – սերպերէն**), բայց լեզվանունները գերազանցապես ընդհանուր են, համահայերեն:

Սլավոնական լեզվանունները կազմվել են հիմնականում արմատական հիմքերից (**լեհերեն, խորվաթերեն, չեխերեն, ռուսերեն, սերբերեն, սլովակերեն** և այլն), ինչպես նաև ածանցավոր (**մակեդոներեն < մակեդոնացի, ուկրաիներեն < ուկրաինացի**):

Ուսումնասիրվող լեզվանունները գլխաբառ են դարձել հայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններում: Մասնավորապես նորակազմությունները (**բոսնիերեն, չեռնոգորերեն**) և այլ միավորներ չեն բառարանագրվել:

Հիմնաբառեր՝ սլավոնական լեզուներ, հայերեն լեզվանուններ, բառային լեզվանուն, բառակապակցական լեզվանուն, լեզվանվան փարբերակ, հնացած լեզվանուն, նորակազմ լեզվանուն

Ներածություն

Սլավոնական լեզուները հնդեվրոպական լեզվաընտանիքում առանձին խումբ են կազմում՝ սլավոնական: Այդ լեզուներով 400 միլիոնից ավելի մարդ է խոսում Կենտրոնական Եվրոպայից մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը:

Սլավոնական լեզուները ծագում են նախասլավոնական հիմքից, որն իր հերթին ձևավորվել է հնդեվրոպական նախալեզվից անջատվելուց հետո: Յեղակից սլավոնական լեզուները բավական մոտ են իրար, որոշ լեզուների պարագայում մարդիկ հիմնականում հասկանում են իրար:

Աշխարհագրական սկզբունքով սլավոնական լեզուները բաժանվում են երեք ենթախմբի՝ արևելյան, հարավային և արևմտյան:

Սլավոնական լեզուները մի շարք երկրներում պետական-պաշտոնական լեզվի կարգավիճակ ունեն (Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Բելառուս, Բուլղարիա, Սերբիա, Խորվաթիա, Մակեդոնիա, Սլովենիա, Չեռնոգորիա, Բոսնիա և Հերցեգովինա, Լեհաստան, Չեխիա, Սլովակիա): Ռուսերենը պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի ոչ սլավոնական երկրներում (Ղազախստան, Ղրղզստան):

Հայերը սլավոնական ժողովուրդների հետ վաղուց են անմիջական շփումների մեջ եղել, և, բնականաբար, կազմվել են սլավոնական լեզուներն անվանող բառեր: Որո՞նք են հայերեն սլավոնական լեզվանունները, դրանք ե՞րբ և ինչպե՞ս են կազմվել, պատմական ինչպիսի՞ զարգացում են ունեցել, արդյոք դրանց գործածությունը կանոնարկվա՞ծ է հայերենի զարգացման ներկա փուլում, բառարանագրման ի՞նչ պատմություն ունեն: Այս և հարակից այլ հարցերի պատասխանները կներկայացնենք սույն ուսումնասիրությամբ:

ՍԼԱՎՈՆԵՐԵՆ

Գրավոր ավանդված հնագույն սլավոնական լեզուն հին սլավոներենն է կամ սլավոներենը, որը նախապես մակեդոնական խոսվածք էր (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 182): Հին սլավոներենը մտնում է հարավսլավոնական ենթաճյուղի մեջ: Գրի է առնվել IX դարում: Արևելյան և հարավային սլավոնների գրական լեզուն էր XI-XVII դարերում:

Սլավոներեն լեզվանունը կազմվել է հայերենի լեզվանվանակերտ ընդունված կաղապարով՝ «ցեղանուն+«լեզու» նշանակող **-երեն** ածանց»:

Հաճախ գործածվում է **հին սլավոներեն** բաղադրյալ անվանումը: Օրինակ՝ «Այս լեզուն, որ ամբողջ սլավական գրականության ամենահին մնացորդն է, կոչվում է **հին սլավոներեն**» (Աճառյան, 1955, էջ 508):

Սլավոներեն-ից հետագայում բաղադրվել են երկու ուրիշ լեզվանուններ: Սլավոներենը երկար ժամանակ սպասարկել է քրիստոնեական եկեղեցուն, այդ իսկ պատճառով կոչվում է նաև **եկեղեցական սլավոներեն**, մեկ բառով՝ **եկեղեցասլավոներեն** (հմմտ. ռուս. церковнославянский язык): Եվ քանի որ եկեղեցուն սպասարկելու հին սլավոներենի այդ շրջանը համընկնում էր բուլղարերենի կազմավորման հետ, տվյալ լեզվավիճակը երբեմն կոչում են **հին բուլղարերեն** (Հայկական սովետական հանրագիտարան, 1984, էջ 423):

Հին սլավոներեն-ը և **եկեղեցասլավոներեն**-ը համարժեքներ են: Հմմտ. «Սլավոնական երկրների մեծ մասում երկար ժամանակ սիստեմատիկ ուսումնասիրության առարկա էր միայն եկեղեցու պաշտոնական լեզուն՝ **հին սլավոներենը** կամ **եկեղեցասլավոներենը**», «**Հին սլավոներենին (եկեղեցասլավոներենին)** նվիրված են Լեսկինի «Հին բուլղարերենի (հին եկեղեցասլավոներենի) քերականությունը», Վոնդռակի «**Հին սլավոներենի քերականությունը**» (Ջահուկյան, 1960, էջ 179, Ջահուկյան, 1962, էջ 184-185):

Համեմատական սլավոնագիտությունը վերականգնել է սլավոնական լեզուների մինչգրային վիճակը, որը կոչվում է **ընդհանուր սլավոներեն** կամ էլ մեկ բառով՝ **նախասլավոներեն**:

Սլավոներեն «սլավոնների լեզուն» ընդհանուր լեզվանունից առաջ հայերեն լեզվաբանական աշխատություններում գործածության մեջ էր **սլավերեն** լեզվանունը: Օրինակներ՝ «Թ դարում սալոնիկցի երկու քարոզիչ՝ Կյուրեղ և Մեթոդիոս՝ թարգմանեցին ավետարանը և ուրիշ կրոնական գրքեր՝ իրենց մայրենի լեզվին, որ Մակեդոնիայի մեջ խոսված **սլավերենն** էր», «Այսօր Մակեդոնիայի և Բուլղարիայի սլավերենը այլափոխված է» (Աճառյան, 1955, էջ 508): Իսկ **սլավոնական լեզուներ** բառակապակցությունից բացի գործածվում էր **սլավական** կամ **սլավ լեզուներ** բաղադրյալ անվանումը, **բալթիկ-սլավոնական**-ի կողքին՝ **բալթիկ-սլավական**, ինչպես և **սլավոն**-ի փոխարեն՝ առհասարակ **սլավ**: Օրինակներ՝ «**Սլավական** լեզուները բաժանվում են երեք խմբի», «... ներկայացնում է բոլոր **սլավ լեզուների** մեջ ամենից ավելի նորածնը», «**Բալթիկ-սլավական** ճյուղերի միության մասին խոսում է Մեյեն», «Պելոպոնես հասած **սլավները** հունացան», «**Սլավները** տարածվեցին ի հաշիվ ուրիշների» (Աճառյան, 1955, էջ 506, 508):

Բառային դրսևորում ունեցող լեզվանուններից **սլավոներեն**-ը և **եկեղեցասլավոներեն** -ը բառարանային գրանցում ունեն հիմնականում

մասնագիտական (լեզվաբանական) բառարաններում (Հարությունյանց, 1963, էջ 198, 71, Պետրոսյան, Գալստյան, Ղարազյույան, 1975, էջ 274, 87): Կան հատուկ ենտ այլ արձանագրումներ ևս, ինչպես՝ **սլավոներեն**-ը և **եկեղեցա-սլավոներեն**-ը՝ ուղղագրական ընդհանուր (Բարսեղյան, էջ 835, 280) և մասնավոր բառարաններում (Գյուրջինյան, 1998, էջ 36) (այստեղ **եկեղեցասլավոներեն**-ը տրված է անանջատ գրությամբ, որն այժմ նախընտրելին է): Ի դեպ, «Հանրագիտական բառարանում» գլխաբառ է դարձել **եկեղեցասլավոնական լեզու** բառակապակցական լեզվանունը, որի առաջին բաղադրիչը կրկին անանջատ գրություն ունի (Հանրագիտական բառարան, 2016, էջ 641):

Նախասլավոներեն-ը չի բառարանագրվել, թեև XX դարի կեսերին արդեն գործածվում էր: Օրինակ՝ «Սլավոնական լեզուների ընդհանուր համեմատական ուսումնասիրության բնագավառում մի շարք կարևոր աշխատանքներ են երևան գալիս՝ Մեյերի «Ընդհանուր սլավոներենը Միկկոլայի «Նախասլավոներենի քերականությունը»» (Զահուկյան, 1962, էջ 184):

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԼԵՂՈՒՆԵՐ ՌՈՒՍԵՐԵՆ

Ռուսերենը կամ ռուսաց լեզուն ռուսների լեզուն է: Այն Ռուսաստանի Դաշնության պետական լեզուն է, այդպիսի կարգավիճակ ունի Բելառուսում, պաշտոնական լեզվի կարգավիճակ՝ Ղազախստանում և Ղրղզստանում: Սլավոնական լեզուներից ամենատարածվածն է, խոսվում է Բալթիկ ծովից մինչև Կուրիյան կղզիներ: Խոսողների թիվը՝ շուրջ 260 միլիոն է (աշխարհում զբաղեցնում է ութերորդ տեղը): Ռուսերենը 150 միլիոնից ավելի մարդկանց մայրենի լեզուն է (աշխարհում յոթերորդը): Այն Միավորված ազգերի կազմակերպության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, համաշխարհային և միջազգային մի շարք կազմակերպությունների պաշտոնական լեզուներից մեկն է: Ծառայում է որպես ազգամիջյան հաղորդակցության լեզու հետխորհրդային տարածքի ժողովուրդների համար: Գիրը կյուրեղյանն է (կիրիլիցա), գրավոր աղբյուրները X դարից են:

Ռուսաց-ը **ռուս** բառի հնատիպ (գրաբարատիպ) հոգնակի սեռական-տրականի ձևն է, որ նշանակում է «ռուսների», այսինքն՝ ռուսաց լեզու՝ «ռուսների լեզու»: Տակավին հինգերորդ դարի հայերենում գործածվել են համանման կառուցվածք **հայոց լեզու**, **յունաց լեզու**, **ասորոց լեզու** լեզվանունները, հետագայում նաև **պարսից լեզու**, **վրաց լեզու** (Գյուրջինյան, 2023, էջ 104-105) և այլն: **Ռուսաց լեզու** բաղադրյալ անվանումը կազմվել է սրանց համաբանությամբ: Դա եղել է գրական նոր

լեզվի ձևավորման շրջանում: Հմմտ. «Թարգմանութիւնք արձակ և ոտանաւոր ի **ռուսաց լեզուէ** ի հայ բարբառ ի ժուկովսկի, Պուշկինէ, Լերմոնտովայ, Բարատինսկոյ և Գնէդիչէ. թարգմ.' Յ. Համազասպեանց (Մոսկվա, 1843):

Հայ իրականության մեջ նույն շրջանում գործածության մեջ էր նաև **ռուսաց բարբառ** բառակապակցական լեզվանունը, որտեղ **բարբառ** նշանակում է «լեզու, խոսք» (Աւետիքեան, Սիրմէլեան, Աւգերեան, 1836, էջ 442): Հմմտ. Աղ. Խուդաբաշեանց, «Բառարան ի հայկական լեզուէ ի **ռուսաց բարբառ**» (Մոսկվա, 1838): «Ժողովրդանվան հոգնակի սեռական հոլով+**բարբառ**» կառույցը բնորոշ էր V դարի հայերենին, ինչպես՝ **բարբառ Հռոմայեցոց** - Հռոմի բնակիչների լեզուն = «լատիներեն», **քաղղեացոց բարբառ** - **քաղղեացիների լեզու** = **քաղղեերեն / քաղղեարեն** (Գյուրջինյան, 2023, էջ 108-109):

Բառակապակցությամբ արտահայտված լեզվանուններին շուտով ավելացավ բառային ձևավորում ունեցող **ռուսերէն** լեզվանունը: Գործածության սկիզբը կարելի է համարել XIX դարի առաջին կեսը: Օրինակ՝ «Բնակիչն է 150,000,000, որոնց լեզուն **ռուսերէն** է, Սլաւեան լեզուին մէկ ճիւղը» (Եազրճեան, 1840, էջ 29, նաև «Բազմավէպ», 1850, թիւ 7, ապրիլի 1, էջ 101):

Հայերենում գործածվել է նաև **ռուսերեն** լեզվանվան հնչյունափոխված հիմքով տարբերակը՝ **ռսերեն**: Բնորոշ է եղել ժողովրդական լեզվին, որտեղից էլ անցել է գրականության լեզվին: Օրինակներ՝ «Թեկուզ **ռսերեն**, նեմեցերեն յա ֆրանցուզերեն գրած, թեկուզ գրաբառ» (Աբովեան, 2004, էջ 65) (գրվել է 1841 թ., առաջին հրատարակությունը՝ 1858-ին), «- Ինչո՞ւ **ռսերեն** չեք խոսում,- հարցրեց Շուշանիկը» (Շիրվանզադե, 1959, էջ 188) (առաջին հրատարակությունը՝ 1898 թ.): Իհարկե, անհնչյունափոխ **ռուսերեն**-ը գերիշխում էր՝ դիտվելով գրական: Օրինակներ՝ «.... գրված էր, որ օգնականը, բացի հայերենից, պետք է «անպատճառ» գիտենա **ռուսերեն** գրել, կարդալ և խոսել» (Րաֆֆի, «Ոսկե աքաղաղ», 1870 թ.), «.... տխուր հանգամանքի վերաբերեալ պատրաստած **ռուսերէն** բողոքը....» («Պսակ» (Երևան), 13.11.1882), «Նոր բացված ուսումնարանի համար **ռուսերեն** ձեռնարկներ ու ապագայումն ավարտող աշակերտների համար կոկարդներ պիտի ուղարկե» (Պ. Պռոշյան, «Շահեն», 1883 թ.) և այլն:

Ռսերէն-ը նույնիսկ բառարանային գրանցում ունի: Հ. Դադբաշյանի հայ-ռուսերեն բառարանի **ռուս** բառահոդվածում **ռուսերէն** բառից հղում է արվում **ռսերէն** գլխաբառին (**Դադբաշեան**, 1911, էջ 613) (վերնագրում **ռուսերէն** է, սակայն հենց նախաբանի առաջին պարբերությունում բառարանագիրը գրում է. «.... այն ժամանակ հեշտ կը լինէր այդ

բառարանը **ռուերէն** թարգմանելու»): Իսկ **ռուսաբանութիւն** գլխաբառի ներքո բառակազմական մեկ փնջով տրվում են **ռուսագէտ, ռուսագիտ, ռուսագետ, ռուսագիտական, ռուսագիտական** և մի շարք այլ բառեր: Այլ բառարաններում չի հանդիպում: Նույն բառարանագիրն իր ռուս-հայերեն բառարանում, որ ավելի վաղ է լույս տեսել, ավելի հակված է եղել **ռուս** բաղադրիչը չհնչյունափոխելուն: Русский բառահոդվածում տրված են **ռուսական, ռուսասէր, ռուսասիրական, ռուսատեաց** բառերը և սրանց կողքին՝ «ռուս կին, աղջիկ, **ռուսիկ**» (Дарбагян, 1906, էջ 986):

Այսօր **ռուերեն**-ը բնորոշ է միայն բարբառային խոսքին: Հմմտ. «Դիվանը որ գեղն էր գալի, մենակ ես ի, որ **ռուերեն** ի գիտում, ինձ ին կանչում, որ պրիստավի հետ գրից անեմ» (Մ. Դարբինյան, «Կիկոսը»): Համացանցում և բանավոր խոսքում ոմանք հնչյունափոխված տարբերակը գործածում են նաև որոշակի բացասական վերաբերմունք դրսևորելու նպատակով:

«Լեզվաբանական բառարանում» **ռուերէն** բառահոդվածում որպես բառային տարբերակ նշվել է **վելիկոռուերեն** լեզվանունը (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 266, նաև 284 ((**վելիկոռուերեն** բառահոդվածը, որից հղում է արվում **ռուերեն**-ին)), հմմտ. **վելիկոռուաներ: Վելիկոռուերեն**-ը կազմվել է ռուս. великорусский язык լեզվանվան ազդեցությամբ (< Великая Русь «Մեծ Ռուսիա»): Նույն սկզբունքով են կազմվել նաև անգլ. Great Russian, ֆրանս. grand-russe, գերմ. Großrussisch:

Վելիկոռուերեն-ը հնացած է, գործածությունից դուրս մղված. հանդիպում է միայն գիտական խոսքում: Օրինակ՝ «Կենդանի **վելիկոռուերենի** բացատրական բառարան»-ում (հ. 1-4, 1863-66) իրենց արտացոլումն են գտել XIX դ. ռուսաց գրավոր և բանավոր լեզուների և բարբառների բառապաշարը» (Հայկական սովետական հանրագիտարան, 1977, էջ 262): Նաև՝ «Ուսանողները պատմեցին նաև «Կենդանի **վելիկոռուերենի** բացատրական բառարան»-ի մասին, որը պարունակում է 200.000 բառ» (www.ysu.am/en/node/10945. մուտք՝ 05.04.2024 թ.):

Վելիկոռուերեն-ը հայերենի որևէ բառարանում չի գրանցվել: Արձանագրվել են **վելիկոռու, վելիկոռուական, վելիկոռուսուի** (Բարսեղյան, 1973, էջ 866), բայց լեզվանունը՝ ոչ:

Արևմտահայերենում **վելիկոռուերեն**-ի փոխարեն գործածվել է **մեծ-ռուերէն**-ը՝ առաջին բաղադրիչի թարգմանությամբ: Այսպես, օրինակ՝ «Այս երեքին մէջէն, գլխաւորաբար Պետրոս Մեծի ժամանակ եկեղեցական, գրականական և առետրական լեզուի բարձրացաւ **մեծ-**

ռուսերէն ըստածը» (Մէնէվիշեան, 1903, էջ 136): **Մեծ-ռուսերէն**-ը խիստ հազվադեպ է:

XIX դարի առաջին տասնամյակներին արևմտահայերենում (փոքրատառով) գործածված ենք տեսնում **մոսկովի լեզու** (Ինճիճեան, 1828, էջ 81) «ռուսերեն» նշանակող բառակապակցությունը, որ տարածում չի գտել:

Թվարկված բոլոր տարբերակներից գործածության մեջ են բառույթով արտահայտված **ռուսերեն** և բառակապակցային **ռուսաց լեզու** լեզվանունները, որոնք հավասարապես ընդունված են հայերեն գիտական խոսքում և տեղ ունեն լեզվանունների գիտական ցանկում:

Ռուսերեն լեզվանունը հայերենի բառապաշարի համագործածական շերտի բառերից է, օժտված բարձր հաճախականությամբ: Սլավոնական լեզուների անուններից միակն է, որ տեղ է գտել հայերենի հաճախական բառերի ցանկում (Ղազարյան, 1982, էջ 684):

Գլխաբառ է դարձել հայերենի տարատեսակ բազմաթիվ բառարաններում:

ՈՒԿՐԱԻՆԵՐԵՆ

Ուկրաիներենը, ուկրաինացիների լեզուն է, Ուկրաինայի պետական լեզուն: Խոսողների թիվը՝ 40 միլիոնից ավելի: Գիրը կյուրեղյան է (կիրիլիցա), գրավոր հիշատակարանները՝ XI դարից:

Ուկրաիներեն լեզվանունն առաջացել է **ուկրաինացի** ցեղանվան – **ացի** ածանցի անկմամբ և **-երեն**-ի հավելումով:

Տակավին XIV դարում արձանագրվել է Малая Русь (Փոքր Ռուսիա) տեղանունը, ապա կազմվել է Малороссия-ն (ի հակադրություն Белороссия տեղանվան), որոնցից կազմվել է малороссийский язык, ապա՝ малорусский язык լեզվանունները, որոնք բնակչությունը գործնականում չէր կիրառում (Дуличенко, 2015, с. 331-332):

Ցարական Ռուսաստանում ուկրաինացիներին կոչում էին **մալոռուսներ**, իսկ լեզուն՝ **մալոռուսերեն**, որը համարվում էր ռուսերենի մի խոսվածք: Նրա գործածությունը պաշտոնական ոլորտում խիստ սահմանափակ էր: Հայերեն նախախորհրդային մամուլում այդ բառերն են գործածվել. «Սլաւոն տարրը» վերնագրով մի նյութի մեջ թվարկվում են արևելյան սլավոնները՝ վելիկոռուսներ, **մալոռուսներ (ուկրայինցիներ** ու պլեշչոկցիներ), ռուսիներ կամ գալիչաններ և բելոռուսներ («Հորիզոն», հասարակական, գրական և քաղաքական օրաթերթ (Թիֆլիս), 11.09.1914, էջ 2): Այստեղ, բնականաբար, առկա է ռուսերենի ազդեցությունը: Ուշագրավ մի փաստ. 1897 թ. Ռուսական կայսրության մարդահամարի

ժամանակ «Язык или языковая группа» սյունակում «Русский» լեզվանվան դիմաց գրվել են հետևյալ լեզվանունները՝ великорусский (վելիկոռուսերեն), малорусский (մալոռուսերեն), белорусский (բելոռուսերեն) (https://www.demoscope.ru/weekly/ssp/rus_lan_97.php?reg=112 (Ա. Գ. Վիշնևսկու անվան ժողովրդագրության ինստիտուտի կայքն է. մուտք՝ 28.03.2024 թ.))։ Ի դեպ, քաղաքական դրդապատճառներով ռուսերեն անգամ գիտական խոսքում երբեմն միտումնավոր շրջանցվում է украинский язык լեզվանունը. փոխարենը գործածվում է малорусское наречие անվանումը՝ որպես ռուսերենի մի դրսևորում (տե՛ս, օրինակ, Камчатнов, Николина, 1999, էջ 199)։

Գրեթե չգործածվող **մալոռուսերեն**-ը գլխաբառ է դարձել «Արդի հայերենի բացատրական բառարանում». սրանից հղում է տրվում **ուկրաիներեն**-ին (Աղայան, 1976, էջ 953)։

Հետաքրքրական է «մալոռուսերեն» հասկացության դրսևորումը արևմտահայերենում։ Այստեղ мало բաղադրիչն ուղղակի թարգմանվել է։ Այսպես, օրինակ՝ «Երեք գլխաւոր բարբառ կը զանազանուի ռուսերէնի մէջ, **փոքր ռուսերէն** (փոքրառուս)՝ հարաւային Ռուսաստանի մէջ, մեծ-ռուսերէն (մեծառուս)՝ միջին Ռուսաստանի մէջ, և սպիտակ-ռուսերէն (սպիտակառուս) արեւմտեան կողմը» (Մէնէվիշեան, 1903, էջ 136)։ Ի դեպ, Հր. Աճառյանի «Արմատական բառարանում» լեզուների համառոտագրությունների ցանկում կա **փռուս.**, որից հղում է արվում **ուկր.**-ին (Աճառյան, 1971, էջ 66)։ **Փռուս.**-ը «փոքր ռուսերեն» թարգմանության համառոտագրումն է։

XIX դարի կեսերին քաղաքական և գիտական շրջանառության մեջ է դրվում ռուսերեն южнорусский язык «հարավուսերեն» լեզվանունը՝ «ուկրաիներեն» նշանակությամբ։ Սա շրջանառվեց ցարական իշխանությանն ընդհիմադիր հարավուսական անջատողական քաղաքական շարժման ծավալած գործունեության հետևանքով։

Հայերենում **հարավուսերեն**-ը հազվադեպ է, գիտական գրականության մեջ գրեթե չի պատահում։ Օրինակ՝ «Ինքը՝ Տարաս Շևչենկոն, իր իսկ գրած ու 1861 թվականին տպագրած այբբենարանն անվանել է «**Հարավուսերենի** այբբենարան» («Букварь Южнорусский») այն պարզ պատճառով, որ «ուկրաիներեն» հասկացությունն իրեն անձանոթ էր» («Դրօշակ», 2023, թ. 1, էջ 26)։

XIX դարի ընթացքում և XX-ի սկզբներին գիտության և հասարակության մեջ քննարկվում էր մալոռուսերենի կարգավիճակը, մինչև որ պաշտոնապես ընդունվեց նրա առանձին լեզու լինելը, կիրառության մեջ մտավ **ուկրաիներեն** անվանումը։ Այս ընթացքը բացատրվում է ուկրաինացիների ազգային ինքնագիտակցության աճով։

նրանք ուզում էին իրենց լեզվի անվանումից հանել **ռուս** բաղադրիչը: Հետագայում ամենուրեք հաստատվեց **ուկրաիներեն** լեզվանունը, որը դարձավ միակ ընդունելին: Սրա նախնական բառային տարբերակը մոռացվեց: Ուկրաինա տեղանվան՝ որպես պետության անվան բաղադրիչի կիրառումը վերաբերում է 1917 թ. հեղափոխությանը, երբ ստեղծվեց Ուկրաինայի Ժողովրդական Սոցիալիստական Հանրապետությունը, պաշտոնապես ճանաչվեց ուկրաիներենը:

Հայերենում **ուկրաիներեն** լեզվանվան առաջին գործածությունները վերաբերում են XX դարի 30-40-ական թվականներին: Օրինակներ՝ «Ամբողջ դահլիճից ռուսերեն, **ուկրաիներեն**, թաթարերեն, բելոռուսերեն ու տասնյակ այլ լեզուներով լսվում են բացականչություններ» («Բոլշևիկյան դրոշով», 16.01.1936), «Հրատարակվել է ավելի քան մեկ միլիարդ 300 միլիոն օրինակ գիրք՝ ռուսերեն, **ուկրաիներեն**, մոլդավերեն, բուլղարերեն, լեհերեն և այլ լեզուներով» («Սովետական Հայաստան», 25.01.1948): Սրանք Արևելահայերենի ազգային կորպուսում **ուկրաիներեն**-ի ամենավաղ գործածություններն են:

Ուկրաինա պետությունը արևմտահայերենում կոչվում է **Ուքրանիա** (մյուս երկրանունների համաբանությամբ), ժողովրդի ներկայացուցիչը՝ **ուքրանացի**, լեզուն՝ **ուքրաներէն**: Օրինակ՝ «Ով որ գիտէ ռուսերէն, գրեթէ կը հասկնայ նաեւ **ուքրաներէն**» («Ժամանակ» (Կ. Պոլիս), 24.05.2022):

«Ուկրաիներեն» իմաստն է վերագրվում **ռուֆեններեն** լեզվանվանը, որի մասին հանգամանորեն կխոսենք ստորև:

Ուկրաիներեն-ը ձևաբանական երեք արժեքներով (գոյ., ած., մկբ.՝ «ուկրաինացիների լեզուն», «ուկրաինացիների լեզվով» / «ուկրաինական լեզվի» իմաստներով) գլխաբառ է դարձել Հայաստանում հրատարակված ընդարձակ բացատրական բառարաններում (Աղայան, 1976, էջ 1489, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, էջ 583), բացի Սո. Մալխասյանցի բառարանից: Սփյուռքյան բացատրական և թարգմանական բառարաններում այս լեզվանունն առհասարակ չկա: **Ուկրաիներեն** ձևով հանդիպում է սփյուռքյան հայերեն-գերմաներեն բառարանում, այն էլ, սակայն, «ալ» [արևելահայերեն] նշումով (Թորոսեան, 2019, էջ 556):

Ուկրաիներեն-ը կայուն տեղ ունի արևելահայերենի թարգմանական քիչ թե շատ ընդգրկուն բառարաններում (Հայ-ռուսերեն բառարան, 1987, էջ 677, Բարաթյան, 2002, էջ 545, Բարլեզիզյան, 2009, էջ 901 և այլն): Քանի որ **ուկրաիներեն**-ը ուղղագրական որոշակի դժվարություն ունի, գրանցվել է նաև ուղղագրական բառարաններում (Բարսեղյան, 1973, էջ 922, Սուքիասյան, Սուքիասյան, 2002, էջ 352, Նազարյան, Գյոդակյան, 2004, էջ 460): **Ուկրաիներեն**-ը տեղ է գտել

հանգաբառարանում՝ ի թիվս սլավոնական լեզուների հետևյալ անունների՝ **բելոռուսերեն, բուլղարերեն, լեհերեն, չեխերեն, ռուսերեն, սլավոներեն, սլովեներեն** (Հայոց լեզվի հանգաբառարան, 1976, էջ 353-354):

ԲԵԼԱՌՈՒՍԵՐԵՆ

Բելառուսերենը կամ բելոռուսերենը (ինքնանվանումը՝ беларуская мова, ռուսերեն белорусский язык) բելառուսների (բելոռուսների) լեզուն է, ներկայիս Բելառուսի Հանրապետության պաշտոնական լեզուն (ռուսերենի հետ): Այն զգալի ընդհանրություններ ունի արևելյան սլավոնական մյուս լեզուների՝ ռուսերենի և ուկրաիներենի հետ: Գրավոր հիշատակարանները XIII դարից են: Խոսողների թիվն աշխարհում՝ վեց միլիոնից ավելի:

Հայերենում, մասնավորապես արևմտահայերենում, սկզբնապես գործածվել է թարգմանական **սպիտակ-ռուսերէն** լեզվանունը: Օրինակ՝ «Երեք գլխաւոր բարբառ կը զանազանուի ռուսերէնի մեջ, փոքր ռուսերէն (փոքրառուս)՝ հարաւային Ռուսաստանի մէջ, մեծ-ռուսերէն (մեծառուս)՝ միջին Ռուսաստանի մէջ, և **սպիտակ-ռուսերէն** (սպիտակառուս) արեւմտեան կողմը» (Մէնէվիշեան, 1903, էջ 136): Հայերեն կազմությունը համեմատելի է եվրոպական լեզուների համապատասխան միավորների հետ՝ անգլ. White Russian, ֆրանս. blanc-russe, գերմ. Weißrussisch: **Սպիտակ-ռուսերէն**-ը շուտով մոռացվեց և շրջանառության մեջ դրվեց, մասնավորաբար արևելահայերենում, **բելոռուսերեն** լեզվանունը: Ի դեպ, եվրոպական լեզուներում այժմ ընդունված են սլավոնական белорусский տառադարձմամբ կազմված լեզվանունները՝ անգլ. Byelorussian, գերմ. Belorussisch:

Բելոռուսերեն լեզվանունը կազմվել է **բելոռուս** ժողովրդանունից: Հայերենում տասնամյակներ շարունակ համատարած **բելոռուսերեն** է գրվել (Աղայան, 1967, էջ 573, Հայկական սովետական հանրագիտարան, 1976, էջ 377): Բանավոր խոսքում հաճախ հնչող **բելառուսերեն** տարբերակն ուղղախոսական սխալ էր համարվում: Այդպես էր մինչև XX դարի վերջերը: Բելոռուսիայի անկախության հռչակումից հետո՝ 1991 թ. սեպտեմբերի 19-ին ընդունված օրենքով Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը պաշտոնապես անվանվեց **Բելառուսի** Հանրապետություն, կրճատ՝ **Բելառուս**: Հայաստանի Հանրապետության նախագահի և արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքերում միայն **Բելառուս** տարբերակն է գործածվել (www.president.am, www.mfa.am): Բայց նկատի առնենք, որ **Բելոռուսիա** երկրանունն այժմ ոչ պաշտոնական անվանում է և ավանդույթի ուժով

տակավին շարունակում է գործածվել տարբեր տեղերում, հատկապես ավագ սերնդի բանավոր խոսքում:

Այս փոփոխությունը բնականորեն իր անդրադարձը պիտի ունենար լեզվանվան և **-ական** ածանցով կազմված բառի գրության վրա: Երկրանվան փոփոխությունը հանգեցրեց լեզվանվան մասնակի փոփոխության: Ընդունված **բելոռուսերեն**-ի փոխարեն շրջանառության մեջ դրվեց **բելառուսերեն** տարբերակը, ինչպես նաև **բելոռուսական** ածականի փոխարեն՝ **բելառուսական**:

Միաժամանակ նկատելի է, որ լեզվանվան նոր տարբերակը դյուրին չի հարթում իր ճանապարհը, և **ռ**-ով տարբերակը հանդիպում է վերջերս հրատարակված լեզվաբանական աշխատանքներում (Խաչատրյան, 2008, էջ 263, Խաչատրյան, 2021, էջ 404): Ակնհայտ է, որ այս հարցում տարակերպությունը (երկրանունը **Բելառուս՝ ա**-ով, այնինչ լեզվանունը՝ **բելոռուսերեն՝ ռ**-ով) մեր կարծիքով ընդունելի չէ: Այդ նկատառումով էլ հայոց լեզվի դպրոցական դասագրքում հնդեվրոպական լեզուների ծառի գծապատկերում գործածվել է **բելառուսերեն** լեզվանունը (Գյուրջինյան, Հեքեքյան, 2010, էջ 5): Աշխարհագրության համալսարանական դասագրքում ևս նոր տարբերակն է որդեգրվել: Օրինակ՝ «Արևելասլավոնական ենթախմբի մեջ մտնում են երեք մոտ ազգակից լեզուները՝ ռուսերենը, ուկրաիներենը և **բելառուսերենը**» (Մանասյան, 2011, էջ 130): Իսկ ռուսերենում, օրինակ, երկրանվան և մասնավորապես լեզվանվան հարցը քննարկվում է (белорусский թե՛ беларусский կամ беларуский), և հակվածություն կա պահպանելու ավանդական белорусский язык տարբերակը (https://dzen.ru/a/YKo_rpfFaG74PC, <https://media-polesye.by/news/beloruskiy-ili-belaruskiy-kak-pravilno-37036/>, <https://allwrite.by/blog/o-nabolevshem-beloruskiy-ili-belaruskiy/>, <https://kyky.org/cult/belaruskiy-ili-beloruskiy-borba-za-versiyu-napisaniya>, http://strelnikova.lv/jaziki/beloruskiy_belaruskiy.html և այլն. մուտք՝ 21.07.2024):

Ինչպիսի՞ն է նշված տարբերակների գործածության պատկերը Արևելահայերենի ազգային կորպուսում (ԱՐԵՎԱԿ), որն ընդգրկում է XIX դարի կեսերից մինչև 2008 թվականն ընդգրկող ժամանակահատվածը: Տարբերակների բաշխվածությունն այսպիսին է. **բելոռուսերեն** - 42 համատեքստ, 19 տեքստ (զգալի մասը՝ Հայկական սովետական հանրագիտարանում), **բելառուսերեն** - ընդամենը երկու գործածություն մամուլում (www.eanc.net . մուտք՝ 13.06. 2024): Այսպես. «Կարևոր չէ՛ դաշնակ լինելու համար պարտադիրը հայերենն է, թե Լուկաշենկոյի **բելառուսերենը**» («Առավոտ», 02.08.2003), «Բելառուսում կայանալիք նախագահական ընտրություններից երկու ամիս առաջ Լեհաստանի

կառավարությունը հայտարարել է, թե մտադիր է **բելառուսերեն** ռադիոհաղորդումներ հեռարձակել» («Հայկական ժամանակ», 12.01.2006)

Խորհրդային տարիներին Հայաստանում լույս տեսած ընդարձակ բացատրական բառարաններում **բելոռուսերեն**-ը գլխաբառ է դարձել խոսքիմասային երեք արժեքով՝ գոյ. «բելոռուսների լեզուն», մկբ. «բելոռուսական լեզվով», ած. «բելոռուսական» (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1969, էջ 310): Փոքր-ինչ բարելավված պատկեր ունենք է. Աղայանի բացատրական բառարանում՝ գոյ. «բելոռուսների լեզուն» և ած., մկբ. «բելոռուսների լեզուն» (Աղայան, 1976, էջ 184):

Բելոռուսերեն ձևով գլխաբառ է դարձել նաև «Լեզվաբանական բառարանում», հայերենի թարգմանական տարբեր, այդ թվում՝ վերջին շրջանի բառարաններում (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 65, Հայ-ռուսերեն բառարան, 1987, էջ 122 (белорусский язык), Բարլեզիզյան, 2009, էջ 182 (le biélorusse, la langue biélorusse) և այլն): Հազվադեպ է արևմտահայերենի և առհասարակ սփյուռքյան բառարաններում (տե՛ս, օրինակ, **Թորոսեան**, 2019, էջ 111 (**բելոռուսերէն** - Weißrussisch, Belarussisch): Ինչպես տեսնում ենք, գերմաներեն համարժեքը a-ով է, հայերենը՝ n-ով):

Այս դարում հրատարակված բառարաններում և տեղեկատուներում որպես գլխաբառ արձանագրվել է **բելառուսերեն** տարբերակը (**Բարաթյան**, 2002, էջ 107, **Հանրագիտական բառարան**, 2016, էջ 319, **Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան**, 2012, էջ 17, **Դպրոցականի հանրագիտարան**, 2021, էջ 16 և այլն), որ լեզվի բառային կազմում նրա ամրակայման վկայություններից է:

ՌՈՒԹԵՆԵՐԵՆ

XIX դ. կեսին հայերենում (մասնավորապես արևմտահայ աշխարհաբարում) գործածված ենք տեսնում **ռուֆեներեն** լեզվանունը. «Լեզուներն են՝ Ա. Հայերէն գրաբար, Բ. Լատիներէն, Գ. Յունարէն գրաբար, Դ. Գերմաներէն, Ե. **Ռուֆեներէն**, Զ. Գաղղիերէն...» («Եւրոպա», օրագիր շաբաթական, 1854, 6 փետրվարի, էջ 19): Վկայություններ կան նաև նույն դարի վերջից և XX դարի սկզբից: Այսպես. «**Ռուֆեներէն** թարգմանութիւնք՝ որ կը գտնուին, լատին բնագրէն թարգմանուած են և ոչ հայ բնագրէն» և «Սիկիզմունտ Ա 1518ին կը պահանջէ Հայոցմէ, որ իրենց դատաստանագիրքը լատիներէն կամ **ռուֆեներէն** լեզուի թարգմանեն» («Ուսումնասիրութիւնք լեհահայոց դատաստանագրոյն», 1890, էջ 25), «**Ռուֆեներէն** գրութիւն մը կայ մաշած եւ անընթեռնելի» և

«Երեք տող դժուարընթեռնլի **ռութներէն** գրութին մը կայ» (Տաշեան, 1891, էջ 1021), «... ուրիշ առիթներու մէջ ընդհանրապէս լեհերէն և **ռութներէն** կը խօսին» («Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յարեմուտս (ԺԴ-ԺԹ դար)», 1895, էջ 303), «Դպրոցին մէջ լեհերէն, **ռութներէն** և քիչ մ'ալ գերմաներէն կը խօսուի, տան մէջ շատ անգամ լեհերէն կը խօսուի, որով Գութիի հայերէնն անշուշտ ջնջուելու վրայ է» (Ղազիկեան, 1909, էջ 1499):

Ուշագրաւ է XX դարի սկզբի այս նախադասութիւնը, որտեղ նույնացվում են ռութներէնը և «փոքր-ռուսերէնը». «Ըստ ոմանց՝ ռութներէնը՝ զոր 14 1/2 միլիոն ժողովուրդ մը կը խօսի, փոքր-ռուսերէնի հետ նոյն է. թէպէտ այս վերջնոյն շատ մոտ է, այո, սակայն ոչ նոյն» (Մէնէվիչեան, 1903, էջ 136):

Ո՞ր լեզվի մասին է խոսքը: Այս հարցում հստակութիւն չկա: Մասնագիտական գրականութեան մէջ ասվում է, որ XIX դարի ռուսերէնում բելոռուսների լեզուն կոչել են նաև рутенский язык «ռութներէն» լեզվանվամբ, ի թիվս այլ անվանումների՝ литовская мова (XVIII դարում Բելոռուսիայի կենտրոնը և արևմուտքը կոչվում էին Լիտվա), рус(с)кий язык, русская мова, русинский язык / русинская мова, кривичский язык, литовско-русский язык, славяно-литовский язык, польско-русский язык (Дуличенко, 2015, էջ 330):

Ոչ նույն չափի, բայց կրկին խայտաբղետ պատկեր են ներկայացնում ուկրաիներէնն անվանող ռուսերէն լեզվանունները ևս:

Ուշադրութեան արժանի է այն, որ նույն շրջանում գերմաներէն ruthenische Sprache «ռութներէն» լեզվանվամբ կոչում էին ռուսիներէնը կամ ուկրաիներէնը (Дуличенко, 2015, էջ 330): Գ. Ջահուկյանն իր գրքում «Grammatik der ruthenischen (ukrainischen) Sprache» աշխատութեան (Վիեննա, 1913) վերնագրի թարգմանութեան մէջ զեղչել է ruthenischen (ռութներէն) բաղադրիչը՝ «Ուկրաիներէնի քերականութիւն» (Ջահուկյան, 1962, էջ 185), թեպէտ **ուկրաիներէն**-ը փակագծերի միավորն է: Մեզ հետաքրքրողն այն է, որ **ռութներէն**-ը և **ուկրաիներէն**-ը համարժեքներ են դիտվել:

Հր. Աճառյանը **ուկրաիներէն** լեզվանվան կողքին՝ փակագծերում, պարզաբանում է՝ «որ և **ռուսներէն**» (Աճառյան, 1955, էջ 507), այսինքն՝ գործ ունենը **ռութներէն**-ի հնչյունական տարբերակի հետ:

Ռութներէնը արևելասլավոնական լեզուներից է՝ արևմտյան ռուսերէնը կամ արևմտառուսերէնը, որ գրական լեզու էր Արևմտյան Ռուսիայում և Մոլդավական իշխանությունում: Լիտվական մեծ իշխանությունում գրավոր ռութներէնը համապետական գործածություն ունեցող լեզու էր: Լատիներէն այս լեզուն կոչվում է lingua ruthenica, քանի

որ լատիներեն Ruthenia նշանակում էր Ռուսիա՝ Ռուսաստան: Ի դեպ, այս տեղանունից է առաջացել նաև **ռուֆենիում** քիմիական տարրի («արծաթավուն թեթև մետաղ, որից շիկացման լամպերի լարերն են պատրաստում») անվանումը (**Աղայան**, 1976, էջ 1265): Տարրն այդպես է կոչվել Ռուսաստանի պատվին, քանի որ 1844 թվականին պրոֆ. Կ. Կլաուսը այն հայտնաբերել է Կազանի համալսարանում (անունը, սակայն, դեռևս 1828 թ. առաջարկել է Գ. Օզանը սխալ հայտնաբերված մի տարրի համար. Կլաուսը պարզապես օգտագործեց այդ անունը):

Ռուֆեններեն-ը տարողունակ բովանդակություն ունի. ժամանակին գործածվել է ինչպես հին բելոռուսերենը, այնպես էլ հին ուկրաիներենն անվանելու համար: Այն ռուսերենն էլ չէ. դա պարզորոշ երևում է այս նախադասության մեջ. «Օտար լեզուա գրուած լրագիրներն են. 1 հայերէն լեզուա 58 ռուսերէն, 2 **ռուֆեներէն**, 140 շուետերէն, 3 սերպերէն, 2 սլովաքերէն, 4 սլովեներէն» («Հանդէս ամսօրեայ», 1889, փետրվար, էջ 35), այլ ռուսիներենը:

Ռուֆեններեն լեզվանունը տեղ չի գտել հայերենի բառարաններում: Միայն «Լեզվաբանական բառարանում» գլխաբառ է դարձել **ռուսիներեն**-ը՝ «տե՛ս ուկրաիներեն» հղումով (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 266), որում **տ / թ** լծորդ հնչյուններից բացի կա **ե / ի** տարբերությունը: Այս տարբերակն այլուր չի հանդիպում: **Թ / տ** զանազանությունը բացատրվում է ռուսերենի ազդեցությամբ), սակայն բառահոդվածում ներկայացված օտար համարժեքները՝ Ruthenian // ruthénien, հաստատում են, որ ձայնավորը **ե** պիտի լիներ:

Գործածությունից դուրս մղված **ռուֆեններեն** լեզվանունը կարող է կրկին մտնել շրջանառության մեջ՝ **ռուսիներեն**-ին առնչվող գործընթացի հետևանքով:

ՌՈՒՍԻՆԵՐԵՆ

Ռուսիներենը (ինքնանվանումը՝ русиньскый язык, руська бисіда, руснацькый язык, руски язык) արևելասլավոնական տարբեր բարբառների և գրական լեզվական կազմավորումների ամբողջություն է, որ գործածվել է (կամ գործածվում է) Ուկրաինայի մերձկարպատյան շրջանում, արևելյան Սլովակիայի Պոլյաշևչինայում, Լեհաստանի Լեմկովշինայի հարավ-արևելքում, ռուսիների հավաք բնակության այլ վայրերում՝ Սերբիայի Վոյեվոդինա (այստեղ հարավռուսիական լեզուն պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի), Խորվաթիա, Հունգարիա և այլն: Ամբողջ աշխարհում հաշվվում է մեկուկես միլիոն ռուսին:

Ուկրաինայի օրենսդիր բարձրագույն մարմինը՝ Գերագույն Ռադան, 2012 թ. հուլիսի 3-ին ընդունեց «Պետական լեզվական

քաղաքականության հիմքերի մասին» օրենքը, որտեղ (7-րդ հոդվածի 2-րդ մաս) Ուկրաինան պաշտոնապես ընդունում է ռուսիներենի՝ որպես առանձին լեզվի գոյությունը՝ բնորոշելով իբրև ազգային փոքրամասնության լեզու, որ մինչ այդ համարվում էր ուկրաիներենի մի բարբառ: Օրենքը 2018 թ. ուժը կորցրեց, քանի որ հակասահմանադրական ճանաչվեց:

Ռուսիներենի բնորոշ հատկանիշներից մեկը նրանում եկեղեցասլավոնական բառամիավորների առատությունն է ուկրաիներենի համեմատ: Արևելասլավոնական մյուս լեզուների բառապաշարի համեմատ այստեղ շատ են համակարապտյան լեհաբանությունները, սլովակաբանությունները, հունգարաբանությունները և գերմանաբանությունները: Լեզվաբանների մի խումբ տարբերակում է այս լեզվի երկու դրսևորում՝ արևելառուսիներեն և հարավուսիներեն, և 2019 թ. Ստանդարտացման միջազգային կազմակերպությանը առաջարկել են ճանաչել այդ տարանջատումը: 2020 թ. սկզբին այդ առաջարկությունը մերժվել է, սակայն տարեվերջին հարցումը կրկնվել է. առաջարկվել է հարավուսիներենը լեզու ճանաչել՝ **ռուֆեներեն** (անգլ. Ruthenian language) պայմանական անվամբ: 2022 թ. հունվարի 20-ին այդ առաջարկությունն ընդունվել է, և այժմ **ռուֆեներեն** ասելով հասկանում ենք հարավային ռուսիներեն լեզուն:

Հայերենում **ռուսիներեն** լեզվանունը խիստ հազվադեպ է (հանդիպում է մասնավորապես համացանցում), բառարանային գրանցում չունի:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐ ԲՈՒԼՂԱՐԵՐԵՆ

Բուլղարերենը Բուլղարիայի Հանրապետության պետական լեզուն է, բուլղարացիների ազգային լեզուն: Գրի հիմքում կյուրեղյան տառերն են (կիրիլիցան): Գրավոր առաջին հուշարձանները IX դարից են: Խոսողների թիվը՝ մոտ 9 միլիոն:

Հայերեն **բուլղարերեն** լեզվանունը կազմվել է **բուլղար** կամ **բուլղարացի** ժողովրդանունից՝ անմիջական հավելումով կամ –**ացի** ածանցի անկմամբ: Սա արևելահայերենում այժմ որևէ տարբերակայնություն չի դրսևորում:

Ժամանակին գործածության մեջ եղել է **բուլգարերէն** «սլավոնական լեզուներից մեկը» տարբերակը, ինչպես որ ունեցել ենք **բուլգար / բուլգարացի, բուլգարական, բուլգարուհի**, և սրանք բառարանային արձանագրում ունեն (Մալխասեանց, 1944, էջ 390): Բայց **գ**-ով տարբերակները XX դարակեսին ամբողջովին դուրս են մղվել **դ**-ով տարբերակների կողմից, թեև վերահրատարակությունների ժամանակ **բուլգարերէն**-ը կարող է հանդիպել (Աճառյան, 1971, էջ 63):

Հարկ ենք համարում միաժամանակ նշել, որ լեզվաբանական գրականության մեջ **բուլգարերեն** բառով այսօր անվանում են թյուրքական լեզուներից մեկը (բուլգարական խմբի մեջ են մտնում նաև խազարերենը, արդի չովաշերենը) (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 109): նաև ասվում է, որ բուլգարերենը 8-14-րդ դարերում եղել է Կամայի բուլգարների լեզուն (Խաչատրյան, 2021, էջ 409): Հնչյունական այսպիսի (**դ / գ**) տարբերակմամբ հնարավոր է խուսափել լեզվանունների անցանկալի համանունությունից, որը կարող է նաև շփոթության հիմք դառնալ:

Բուլղարացիների լեզուն անվանելու համար XIX դ. կեսին արևմտահայերենում գործածվել է **պուլղարերէն** լեզվանունը («Բազմավէպ», 1850, թ. 7, էջ 101 («Բանասիրական տեղեկութիւն»)): Դարի վերջին հանդիպում է լեզվանվան բառակազմական հիմքի ուրիշ տառադարձմամբ՝ **պուկարերէն** («Հանդէս ամսօրեայ», 1889, թիւ 2 (փետրուար), էջ 35):

Եթե ներհամակարգային (արևելահայերենի շրջանակներում) տարբերակայնությունը վերացել է, ապա գործում է միջհամակարգային (արևելահայերեն / արևմտահայերեն) տարբերակայնությունը: Այսպես՝ արևելահայերեն **բուլղարերեն** և արևմտահայերեն **պուկարերէն** (արտասանվում է *բուլգարէրէն*): Սրանք երկու հատկանիշով են տարբերակվում. արևելահայերենի **բ**-ի դիմաց արևմտահայերենում **պ** է, **դ**-ի դիմաց՝ **կ** (Գյուրջինյան, 2022, էջ 32):

Արևելահայերենի միալեզվյան և թարգմանական բառարաններում համատարած գլխաբառ է դարձել **բուլղարերեն**-ը՝ «բուլղարացիների լեզուն» իմաստով, արևմտահայերենի բառարաններում՝ **պուկարերէն**-ը (Գույումճեան, 1950, էջ 689, Թորոսեան, 2019, էջ 959):

ՍԵՐԲԵՐԵՆ

Սերբերենը (ինքնանվանումը՝ српски језик / srpski jezik) Սերբիայի պետական լեզուն է, պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի Բոսնիա-Հերցեգովինայում: Խոսվում է նաև Չեռնոգորիայում, Խորվաթիայում, Բոսնիա-Հերցեգովինայում, Կոսովոյում: Խոսողների թիվը՝ ստույգ չէ, 9-12

միլիոն: Սերբիայում պաշտոնական գրագրությունը կիրիլիցայով է արվում, սակայն տարածված է նաև լատինական գիրը:

Սերբերեն լեզվանունը կազմվել է արմատական **սերբ** հիմքից:

Հետաքրքրական է սերբերենի արևմտահայերեն անվանման հարցը: Նախ գործածվել է Ներսես Շնորհալու «Հաատով խոստովանիմ»-ի բազմալեզվյան հրատարակություններում՝ **սերվիաներէն** ձևով (1811, 1815, 1818, 1823 թթ.) (Հայկական մատենագիտութիւն, 1883, էջ 342-343): Հազվադեպ պատահում է սրա **սերվերէն** տարբերակը («Բիւրակն» լրագիր (Կ. Պոլիս), 1898, 18 յունիս, էջ 386): Նկատենք, որ **բ - վ** անցումը սովորական է:

Այնուհետև գործածվել են **սերբերեն** («Հանդէս ամսօրեայ», 1897, թիւ 3 (մարտ), էջ 69) և **սերպերէն** տարբերակները (այստեղ **պ-ն բ** է արտասանվում): Վերջինս համապատասխանում է արևմտահայերեն այսօրվա ձևին: Օրինակ՝ «Սլաներ, որոնք կը խօսին **սերպերէն**» (Քօսեան, 1899, էջ 20: Տե՛ս նաև «Հանդէս ամսօրեայ», 1893, թիւ 8, էջ 246): **Սերպերէն**-ը բառարանային գրանցում ունի:

Ուշագրավ է այն փաստը, որ սփյուռքյան թարգմանական մերօրյա բառարաններից մեկում արձանագրված է **սերբերէն** ձևը՝ որպես ընդհանուր հայերեն լեզվանուն (հմմտ. Թորոսեան, 2019, էջ 626): Այդպես ենք կարծում, քանի որ նշված չէ **ալ** [արևելահայերեն] համառոտագրությունը, որը բառարանում դրվել է արևելահայ տարբերակների կողքին, և առհասարակ բացակայում է **սերպերէն**-ը: Կարելի է ենթադրել, որ սա մի նոր միտում է, երբ արևմտահայերենում տառադարձում են եվրոպական լեզուներում ընդունված գրության համապատասխան: Այսպիսի տառադարձությունը, անշուշտ, օգտակար քայլ է հայերենի գրական երկու ճյուղերի ինչ-որ չափով մերձեցման ճանապարհին (Գյուրջիւնյան, 2023, էջ 307-313):

Հայերեն **սերբերեն** լեզվանունն ունի բառակազմական-ուղղագրական տարբերակներ, որոնք գործածվել են գիտական խոսքում և մամուլում: Դրանք են՝ **սերբա-խորվաթերեն** (Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 273), **սերբա-հորվաթերեն** (Հայկական սովետական հանրագիտարան, 1984, էջ 331. «Սերբա-հորվաթերեն» բառահոդվածը, էջ 423. «Սլավոնական լեզուների» բառահոդվածը) և **սերբահորվաթերեն (Հայկական սովետական հանրագիտարան, 1980, էջ 291. «Հարավսլավիա» բառահոդվածը), միավորիչ ո տարրով՝ սերբո-հորվաթերեն (Հայկական սովետական հանրագիտարան, 1985, էջ 15. «Սովետսկի Սոյուզ» բառահոդվածը) և սերբո-խորվաթերեն («Նոյյան տապան», 06.04.2006): Հարկ է նշել, որ ռուսերենում ևս խայտաբղետ**

վիճակ է, այսպես՝ сербско-хорватский язык, сербскохорватский язык, сербо-хорватский язык, сербо-хорватский язык (Дуличенко, 1978, էջ 42):

«Լեզվաբանական բառարանում» առաջնային է դիտվել **սերբա-խորվաթերեն**-ը, իսկ **սերբերեն**-ը՝ նրա տարբերակը: Այստեղ խնդիրը սոսկ բառակազմական և ուղղագրական տարբերակայնությունը չէ, այլ լեզուն անվանող բառի ճիշտ ընտրությունը: XIX դարի կեսին սերբերն ու խորվաթները պայմանագիր են կնքել միասնական գրական լեզու ստեղծելու և առաջ մղելու վերաբերյալ: Միացյալ պետության մեջ՝ Հարավսլավիայում, սերբախորվաթերենը համարվում էր սերբերի, խորվաթների, չեռնոգորցիների և մուսուլման բոսնիացիների ընդհանուր լեզուն: Պետությունը և մտավորականները ջանքեր էին գործադրում միասնական գրական լեզուն մշակելու ուղղությամբ: Սակայն հետագա քաղաքական գործընթացները արմատապես փոխեցին լեզվական իրավիճակը: Այժմ սերբերենը և խորվաթերենը համարվում են շատ մոտ, բայց առանձին լեզուներ, որոնց համար գործածվում են **սերբերեն** և **խորվաթերեն** լեզվանունները:

Էդ. Աղայանի կազմած բացատրական բառարանում արձանագրվել է **սերբերեն** լեզվանունը երկու արժեքով՝ գոյ. «սերբերի լեզուն» և մկբ. «սերբերի լեզվով» (Աղայան, 1976, էջ 1296), սակայն նշված չէ ածականի արժեքը, որը բառն ունի, օրինակ՝ **սերբերեն բանաստեղծություն**: Այս նույն բառարանում՝ երկու գլխաբառ վերև, արդեն երեք արժեքով արձանագրված է նաև **սերբա-խորվաթերեն** լեզվանունը՝ «սերբերի և խորվաթների ընդհանուր լեզուն», ՝ «սերբերի և խորվաթների ընդհանուր լեզվով»: Ստ. Մալխասյանցի և ակադեմիական բացատրական բառարաններում գրանցված չեն ո՛չ **սերբերեն**-ը, ո՛չ էլ **սերբա-խորվաթերեն**-ը:

Ուղղագրական ծավալուն բառարանում կա միայն **սերբերեն** լեզվանունը (Բարսեղյան, 1973, էջ 829), այնինչ ուղղագրական դժվարություն ունեցող **սերբա-խորվաթերեն**-ը բացակայում է: Բայց այն կա ուղղագրական այլ բառարաններում: Ուղղագրական ուսումնական բառարաններում լեզվանունն առանց գծիկի՝ անանջատ գրությամբ է տրված՝ **սերբախորվաթերեն** (Գյուրջինյան, 1998, էջ 60, Նազարյան, Գյոդակյան, 2004, էջ 405): Այդ գրությունը համապատասխանում է արևելահայերենի ուղղագրության արդի միտումներին: «Հանրագիտական բառարանում» **սերբերեն** կամ **սերբախորվաթերեն** գլխաբառով բառահոդված չկա, սակայն «Սերբեր» բառահոդվածում գործածվել է համադրական **սերբախորվաթերեն**-ը՝ որպես սերբերի լեզվի անվանում (Հանրագիտական բառարան, 2018, էջ 810): Սա ճիշտ մոտեցում չէ, եթե հաշվի առնենք, որ նույն բառարանում կա «խորվաթերեն» բառահոդված,

որտեղ որպես խորվաթների լեզու նշվում է խորվաթերենը (Հանրագիտական բառարան, 2016, էջ 1007): Այս պարագայում սերբերի լեզուն պիտի համարվեր պարզապես սերբերենը:

Սերբերեն-ը գրանցված է հայերենի նաև թարգմանական որոշ բառարաններում (տե՛ս, օրինակ, Բարաթյան, 2002, էջ 477, Բարլեզիզյան, 2009, էջ 802), բայց չկա, օրինակի համար, հայ-ռուսերեն ակադեմիական բավական ծավալուն բառարանում և այլն:

ԽՈՐՎԱԹԵՐԵՆ

Խորվաթերենը Խորվաթիայի պաշտոնական լեզուն է, այդպիսի կարգավիճակ ունի նաև Բոսնիա և Հերցեգովինայում: Աշխարհում խոսողների թիվը՝ շուրջ 7 միլիոն, որոնցից լեզվակիր են 6 միլիոնից ավելին: Գիրը լատինական է: Խորվաթերենը սերբախորվաթական լեզվական միավորման մաս է կազմում:

Հայերենում նախ շրջանառվել է **խորվաթերեն** լեզվանունը, որը կազմվել է **խորվաթ** ազգի անունից և **-երեն** ածանցից: Գործածության օրինակ՝ «Հարավային սլավոնական լեզուներն են՝ սլովեներենը, սերբերենն ու **խորվաթերենը**՝ Հարավսլավիայում...» (Աղայան, 1967, էջ 573): Հմմտ. ռուս. хорватский язык:

Հարավային սլավոնական այս ժողովրդի՝ խորվաթների նույնահիմք լեզվանունը հայտնի է XVI դարից, սակայն սկսած XVIII և հատկապես XIX դարից մրցակցության մեջ է մտնում հարավային սլավոնական այս լեզուն անվանող մյուս միավորների հետ (սլավինսկի «սլավիներեն», սլովինսկի «սլովիներեն», ևլիրսկի / ևլիրիյսկի «իլիրերեն») (Դուլիչենկո, 2015, էջ 334-335): Այդ է պատճառը, որ հայերենում **խորվաթերեն** լեզվանվան վաղ վկայություններ չունենք:

Հայերենում կայունացած **խորվաթերեն** լեզվանվանը զուգահեռ, հատկապես հայկական բազմահատորյա հանրագիտարանի միջոցով, շրջանառության մեջ է դրվել **հորվաթերեն** հնչյունական-ուղղագրական տարբերակը: Այդպես էլ **հորվաթներ** ժողովրդանունը, **Հորվաթիա** երկրանունը (հանրագիտարանում գլխաբառ է դարձել **Հորվաթիա**-ն (Hrvatska), իսկ **խորվաթիա**-ն դրվել է կողքին՝ որպես տարբերակ) (Հայկական սովետական հանրագիտարան, 1980, էջ 591): Ահավասիկ գործածության ընդգրկուն մի օրինակ. «1847-ին **հորվաթերենը** դարձել է **Հորվաթիայի** և Սլովենիայի համար, 1850-ին **հորվաթներն** ու սերբերը պայմանագիր են կնքել **սերբ-հորվաթական** միասնական գրական լեզվի վերաբերյալ» (Հայկական սովետական հանրագիտարան, 1980, էջ 592): Բայց նույն հանրագիտարանում չկա ո՛չ **հորվաթերեն** և ո՛չ էլ **խորվաթերեն** բառահոդված:

Գրական արևմտահայերենում գործածվում է **խրուաթերէն** ձևով: Օրինակ՝ «Այսպէս կը պատահի երբ գերմանացի մը դանիական կամ հոլլանդական գիրք մը եւ բոհեմիացի մը **խրուաթերէն** գիրք մ'առնու» («Հանդէս ամսօրեայ», 1897, թիւ 3, էջ 69): Արդի արևմտահայերենում էլ է այսպէս: Օրինակ՝ «Այս տարի սկսաւ անոր հաղորդակցութիւնը խրուաթ տարեկիցներու հետ, սկսած է լսել ու երբեմն արտաբերել հնչիւններ **խրուաթերէն**» (www.aztagdaily.com/archives/408954. մուտք՝ 13.04.2024 թ.): Սրա ուղղագրական տարբերակն էլ է եղել՝ **խռուաթերէն** («Հանդէս ամսօրեայ», 1893, թիւ 8 (օգոստոս), էջ 246): Տպագիր խոսքում հանդիպում է նաև **տ-ով՝ խրուատերէն (սերբ-խրուատերէն)** (Մէնէվիչեան, 1903, էջ 198):

Թերևս ռուսերենի ազդեցությամբ արևելահայերենում էլ գործածվել է **խորվատերեն** տարբերակը, որն անգամ գրանցվել է ակադեմիական բացատրական բառարանում (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1972, էջ 577): Արմատական **թ / տ** լծորդությամբ հազվադեպ մի տարբերակ էլ կա՝ **խրվատերէն** (Աճառյան, 1971 էջ 64), որը տարբեր ազդեցությունների հետևանք է:

խորվաթերեն լեզվանունը գլխաբառ է դարձել հայերենի տարբեր բառարաններում: Էդ. Աղայանի բացատրական բառարաններում գրանցված **խորվաթերեն**-ից հղում է արվում **սերբա-խորվաթերեն**-ին (Աղայան, 1976, էջ 607): Ակադեմիական բացատրական բառարանում **խորվաթերեն**-ն ինքնուրույն բառահոդված է, որտեղ բառը ներկայացված է ձևաբանական երեք արժեքով՝ մակբայի («խորվաթների լեզվով»), գոյականի («խորվաթների լեզուն») և ածականի («խորվաթական»): Ուղղագրական բառարանում գետեղվել է միայն **թ-ով** տարբերակը՝ **խորվաթերեն**-ը (Բարսեղյան, 1973, էջ 431), որն էլ այժմյան ընդունված գրությունն է:

Լեզվանունը թարգմանական բառարաններում չի ընդգրկվել:

ՄԱԿԵԴՈՆԵՐԵՆ

Մակեդոներենը 1991 թ. սեպտեմբերի 8-ին Հարավսլավիայի Ֆեդերատիվ Հանրապետությունից անկախացած Մակեդոնիայի կամ Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետության պետական լեզուն է, մակեդոնացիների ազգային լեզուն: Խոսողների թիվը՝ երկու միլիոնից ավելի (Մակեդոնիայում, Հունաստանում, Ալբանիայում, Բուլղարիայում, Սերբիայում և այլուր): Այս լեզուն շատ մոտ է բուլղարերենին, որի հետ կազմում է հարավսլավոնական լեզուների արևելյան ենթախումբը: Գիրը կիրիլիցան է: Սկզբնապես ընկալվել է որպես բուլղարական բարբառների ամբողջություն: Գրականության մեջ նշվում է, որ մակեդոներենի

ձևավորումն ավարտված էր IX դարի 40-ական թվականներին (Հայկական սովետական հանրագիտարան, 1984, էջ 423. «Սլավոնական լեզուներ» բառահոդվածը): Իբրև գրական լեզու ձևավորվել է XX դարում:

Հունական Մակեդոնիայի և անտիկ շրջանի հին մակեդոներենի՝ հին հունարենի ենթադրյալ բարբառի հետ չչփոթելու հանգամանքները պատճառ դարձան, որ XIX դարում մակեդոնացի (սլավոն) մտավորականներն ուրիշ անուն փնտրեին սլավոնական այս լեզվի համար, ինչպես՝ славяноболгарский / славено-болгарский «սլավոնաբուլղարերեն» / «սլավենաբուլղարերեն», македоноболгарский «մակեդոնաբուլղարերեն», славяномакедонский / словеномакедонский «սլավոնամակեդոներեն» / «սլովենամակեդոներեն» (Дуличенко, 2015, էջ 338): Բոլոր փորձերն անհաջող են եղել:

Հայերենում որոշ ժամանակ առանձին լեզվանուն չի գործածվել, այլ մակեդոնացիների լեզուն կոչել են **մակեդոնական խոսվածքներ** (Հարությունյանց, 1963, էջ 154-155, Աղայան, 1967, էջ 574) կամ **բարբառներ**: Արմատական բառարանում լեզուների ցանկում **մակեդ.** համառոտագրությունը բացվել է **մակեդոնական** (Աճառյան, 1971, էջ 65) և ո՛չ **մակեդոներեն**: **Մակեդոնական խոսվածքներ** ձևով գործածվել է նաև մեր օրերում (Խաչատրյան, 2008, էջ 264), երբ բառային լեզվանունը լիովին կայունացած է:

Մակեդոներեն լեզվանունը կազմվել է **մակեդոնացի** ժողովրդանվան հիմքից՝ **-ացի** ածանցի կրճատմամբ և **-երեն**-ի հավելումով:

Հայերեն **մակեդոներեն** լեզվանունն առաջին անգամ գլխաբառ դարձել է «Լեզվաբանական բառարանում» (Պետրոսյան, Գալստյան, Ղարաբյուլյան, 1975, էջ 208), ձևաբանական երեք արժեքներով (գոյ., ած., մկբ.՝ «մակեդոնացիների լեզուն», «մակեդոնացիների լեզվով») գրանցվել է «Արդի հայերենի բացատրական բառարանում» (Աղայան, 1976, էջ 955), շատ քիչ հանդիպում է նաև հայերենի թարգմանական բառարաններում (տե՛ս, օրինակ, Բարլեզիզյան, 2009, էջ 620): Գլխաբառ է դարձել հայկական ընդարձակ հանրագիտարանում, ինչպես և հանրագիտական բառարանում (Հայկական սովետական հանրագիտարան, 1981, էջ 173, Հանրագիտական բառարան, 2018, էջ 255): Թարգմանական բառարաններում չի հանդիպում:

ՍԼՈՎԵՆԵՐԵՆ

Սլովեններենը (ինքնանվանումը՝ slovenski jezik, slovenščina) սլովենների լեզուն է, որը պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի

Սլովենիայում (նախկին Հարավսլավիայի հանրապետություններից է): Խոսողների թիվը երկու միլիոնից ավելի է:

Հայերեն **սլովեներեն** լեզվանունը կազմվել է **սլովեն** (առաջացել է **սլավոն**-ից) ժողովրդանունից: Լեզվանունը գործածվում է առավելաբար լեզվաբանության դասագրքերում, սլավոնական լեզուները թվարկելիս (Աղայան, 1967, էջ 574, Խաչատրյան, 2008, էջ 264): Առհասարակ հայերենում խիստ սահմանափակ գործածություն ունի. ԱՐԵՎԱԿ-ում այն հանդիպում է ընդամենը 12 համատեքստում («Հայկական սովետական հանրագիտարան», «Աշխարհագրական անունների բառարան»): Որևէ տարբերակ չունի:

Երեք արժեքով (գոյ., ած., մկբ.) **սլովեներեն** -ն արձանագրվել է հայաստանյան ընդարձակ բացատրական, լեզվաբանական (մասնագիտական), հանրագիտական և այլ բառարաններում (Աղայան, 1976, էջ 1308, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1980, էջ 307, Հարությունյանց, 1963, էջ 198, Պետրոսյան, Գալստյան, Ղարազյուլյան, 1975, էջ 275, Հանրագիտական բառարան, 2018, էջ 835):

ԲՈՍՆԻԵՐԵՆ

Բոսնիան և Հերցեգովինան հանրապետություն էր Հարավսլավիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում: Բնակչության ազգային կազմը՝ սերբեր, խորվաթներ և սլավոն մուսուլմաններ (1463 թ. թուրքերը գրավեցին Բոսնիան, 1482-ին՝ Հերցեգովինան, և բնակչության մի մասն իսլամ ընդունեց) (Հայկական սովետական հանրագիտարան, 1976, էջ 521-522. «Բոսնիա և Հերցեգովինա» բառահոդվածը):

Պատմական նշանակալից իրադարձություն էր Հարավսլավիայից Ֆեդերատիվ պետության քայքայումից հետո դաշնային հանրապետությունների անկախացումը. 1992 թ. ապրիլի 5-ին անկախություն ձեռք բերեց և անկախ պետություն հռչակվեց Բոսնիա-Հերցեգովինան: Այս պետության պաշտոնական լեզուներն են բոսնիերենը, սերբերենը և խորվաթերենը:

Ուշագրավն այն է, որ Հարավսլավիայի պաշտոնապես ընդունված լեզուների մեջ **բոսնիերեն**-ը երբևէ չի հիշատակվել (հմմտ. Հայկական սովետական հանրագիտարան, 1980, էջ 290-291. «Հարավսլավիա» բառահոդվածը): Հայերեն **բոսնիերեն** լեզվանունը նոր կազմություն է (ի դեպ, հայերենի բառարաններում մինչև վերջին տարիները չկային ո՛չ **բոսնիացի**, ո՛չ էլ **բոսնիական** բառերը, թեև հազվադեպ գործածվել են գրականության մեջ և մամուլում): Հր. Աճառյանի «Արմատական բառարանում» **բոսն.** համառոտագրությունը բացվել է որպես

բառակապակցությամբ «բոսնիական լեզու» (Աճառյան, 1971, էջ 63) և ո՛չ **բոսնիերեն**:

Գործածության մեջ էր մասնավորապես երկու ազգերը նշող հիմքերից կազմված **սերբախորվաթերեն** լեզվանունը, որը, սակայն, անկախացած բոսնիացիներին այլևս չէր բավարարում: Անցյալ դարի 90-ական թվականներից առավել մուսուլման բոսնիացիներն ակտիվացրին իրենց ցեղանունն ընդգրկող լեզվանվան (bosanski jezik / босански језик) գործածությունը, որը դժգոհություն էր առաջ բերում ինչպես նորանկախ հանրապետության սերբերի և խորվաթների շրջանում, այլև Սերբիայում և Խորվաթիայում, քանի որ այդ լեզվանվամբ «ծածկվում է» երկրի ոչ միայն մահմեդական, այլև սերբ և խորվաթ բնակչությունը (Дуличенко, 2015, էջ 337):

Բոսնիերենը փաստացի Բոսնիա-Հերցեգովինայի մուսուլման բնակչության լեզուն է: Սա ավանդաբար դիտարկվում է որպես սերբախորվաթերենի էթնոլեկտը (էթնոլեկտը լեզվի մի տարատեսակն է՝ բարբառ, խոսվածք, ենթաբարբառ, լեզվի գոյավիճակ, որ կապվում է որոշակի էթնիկ խմբի հետ): Ակնհայտ է, որ բոսնիերենի, ինչպես նաև սերբերենի և խորվաթերենի (լեզուների և լեզվանունների) տարանջատումը տեղի է ունեցել ազգային պատճառաբանությամբ, թեև այս լեզուներով խոսողներն իրար հասկանում են առանց դժվարության:

Բոսնիերեն-ն արդեն արձանագրվում է հայերեն տեղեկատու գրականության մեջ (Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան, 2012, էջ 21, Դպրոցականի հանրագիտարան, 2021, էջ 17):

Միաժամանակ պիտի նշենք, որ որոշ դեպքերում նորաստեղծ **բոսնիերեն** լեզվանվանն այլ լուծում է տրվում: Օրինակ՝ «Հանրագիտական բառարանի» «Բոսնիա և Հերցեգովինա» բառահոդվածում գրված է, որ երկրի պաշտոնական լեզուներն են սերբախորվաթերենի բոսնիական բարբառը, սերբերենը և խորվաթերենը, իսկ «Բոսնիացիներ» բառահոդվածում նշված է, որ այս ժողովրդի լեզուն սերբախորվաթերենի բոսնիական բարբառն է (Հանրագիտական բառարան, 2016, էջ 376, 377): Հակասությունն ակնհայտ է. կոչվում է լեզու, բայց մեկնաբանվում է որպես բարբառ:

ՉԵՌՆՈԳՈՐԵՐԵՆ

Հարավսլավիայի նախկին հանրապետություններից է Չեռնոգորիան, որը 2006 թ. հունիսի 3-ին հռչակեց իր անկախությունը Սերբիայի և Չեռնոգորիայի Պետական Միությունից: Այժմ անկախ

պետություն Չեռնոգորիայի պաշտոնական լեզուն չեռնոգորերենն է: Միացյալ պետության շրջանում պաշտոնական լեզուն սերբերենն է:

XX դարի 90-ական թվականներից էլ առաջ փորձեր են արվել ստեղծելու նաև չեռնոգորցիների լեզու՝ այսպես կոչված **չեռնոգորերեն** (ինքնանվանումը՝ црногорски језик / crnogorski jezik) (Дуличенко, 2015, էջ 338):

Նորակազմ **չեռնոգորերեն** լեզվանունը չկա լեզվաբանության հայերեն դասագրքերում, գրանցված չէ հայերենի բառարաններում, բայց այսօր արդեն հանդիպում է հայերեն տարբեր կարգի տեղեկատուներում, որտեղ պետք է Չեռնոգորիայի պաշտոնական լեզուն նշվի (Դպրոցական մեծ հանրագիտարան, 2008, էջ 284, Աշխարհի պետությունների և տարածքների համառոտ տեղեկատու-բառարան, 2012. էջ 95, Դպրոցականի հանրագիտարան, 2021, էջ 25): Ասվածից կարող ենք եզրակացնել, որ նորաստեղծ լեզվանունը գիտական և պաշտոնական շրջանառության մեջ է դրվել, թեև սա էլ բոսնիերենի նման էական տարբերություններ չունի սերբերենից (սերբախորվաթերենից): Այսօր դժվար է ասել, թե զարգացումներն ինչպե՞ս կընթանան, և հարավային սլավոնները ապագայում արդյոք կրկին չե՞ն ձգտի լեզվական մերձեցման (գուցե միավորման):

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐ ԼԵՀԵՐԵՆ

Լեհերենը Լեհաստանի Հանրապետության պետական-պաշտոնական լեզուն է: Խոսողների թիվը մոտ 40 միլիոն է: Գիրը լատինական է, գրավոր հնագույն հուշարձանները՝ XIII դարից:

Լեհերեն լեզվանունը կազմվել է արմատական **լեհ** ժողովրդանունից՝ **-երեն** ածանցով: Միջին հայերենի կամ վաղ աշխարհաբարի փուլերից լեզվանվան գործածության վկայություններ մեզ հայտնի չեն, սակայն ենթադրում ենք, որ հայերեն լեզվանունը պետք է կազմված լիներ: Լեհաստանում հայերի տևական ներկայության պայմաններում անհնար է, որ լեհերի լեզուն անվանող հայերեն բառ (կամ գուցե բառեր) ստեղծված չլինեին: XVII դարի մատենագիր Սիմեոն Լեհացու «Ուղեգրության» մեջ մակբայի արժեքով, օրինակ, գործածվել է **լէհնակ** «լեհերեն» բառը: Այսպես. «Եւ Լովայ Հայքն հայնակ չի գիտեն , այլ **լէհնակ** եւ խբչակնակ գրուցեն, որ է թաթրի լեզու» («Հանդես ամսօրեայ», 1935, թիւ 3, 4, էջ 169): Բառը կազմված է **լեհ** արմատից և **-նակ** ածանցից: Ինչպես տեսնում ենք, այս խոսքաշարում կան նաև նույնաձանց **հայնակ** և **խբչակնակ** բառերը: **Հայնակ**-ն այստեղ նշանակում է «հայերեն» (բառն ունի նաև «հայավարի, հայի պես»

իմաստները) (Ղազարյան, Ավետիսյան, 2009, էջ 403), իսկ **խբչականակ՝** «ղփչաղներեն» (ղփչաղները թյուրքական վաչկատուն մի ժողովուրդ են. միջին հայերենում վկայվել է **խբչախ** ձևով) (Ղազարյան, Ավետիսյան, 2009, էջ 316):

Բառով արտահայտված լեզվանունից բացի լեհերի լեզուն հայերեն անվանել են բառակապակցությամբ՝ **լեհաց լեզու**, որը համապատասխանում է գրաբարյան «ժողովրդանվան հոգնակի սեռական+լեզու» կապակցությունների կառուցվածքին: Օրինակ XIX դարասկզբից՝ «նախնի լեզու շլեզիոյ աղաաղեցաւ յոյժ և հեռացաւ ի բնիկ **լեզուէ լեհաց**, և եղև նոր իմն լեզու սլաական» (Ագոնց և Մխիթար Աբբա, 1802, էջ 224), նույն դարի առաջին կեսից՝ «Բոլոնիա, որ **Լեհաց լեզուով** դաշտ ըսել է» (Ճարեան, 1846, էջ 465):

Օրինաչափորեն գործածվել է նաև **բարբառ լեհաց** բաղադրյալ անվանումը: Օրինակ՝ XIX դարի սկզբից՝ «... ուրեք ուրեք առաւել հուպ գտանի **բարբառոյ լեհաց**» (Ագոնց և Մխիթար Աբբա, 1802, էջ 225): Այստեղ, արդեն ասվել է, **բարբառ** նշանակում է «լեզու, խոսք»: Որոշ ժամանակ լեզու լեհաց և լեհաց բարբառ լեզվանունները գործածվում էին զուգահեռաբար: Ահա մեկ օրինակ էլ XIX դարի վերջին քառորդից՝ «ի **լեհաց բարբառոյ** ի հայ լեզու փոխարկեցի» (Զարբհանալեան, 1889, էջ 393):

XIX դարի վերջին քառորդում արդեն գործածվում էր հիմնականում **լեհերէն** լեզվանունը: Օրինակներ՝ «1601 թուին Հայոց աւագանիների տնօրէնութեամբ Հայոց օրէնսգիրքը թարգմանուեցաւ **լեհերէն**» («Փորձ», ազգային եւ գրականական միամսեայ հանդէս (Տփխիս), 1879, յունիս, էջ 89). «Եկեղեցւոյ մէջ **լեհերէն** կը քարոզուի» («Հանդէս ամսօրեայ», 1890, փետրուար, էջ 43):

Թեպետ XIX դարի կեսերից **լեհերէն** լեզվանունն իշխող էր, հանդիպում է նաև **Բոլոնիա** (Լեհաստան) տեղանվան և **բոլոնիացի** «լեհ» բառի հիմքից կազմված **բոլոներէն** լեզվանունը: Խիստ հազվադեպ է գրավոր խոսքում: Օրինակներ՝ «Վիլիէլմ Կայսեր որոշմամբ հոկտ. 1էն սկսեալ, **բոլոներէն** լեզուաւ ուսուցումը պիտի ջնջուի Բոզենի նահանգին ամեն վարժարանա մէջ» («Մասիս» շաբաթաթերթ ազգային եւ քաղաքական, 1887, 26 սեպտեմբերի), « Պ. Թեոտորովիչ հրատարակած է արդէն **բոլոներէն** ու գերմաներէն լեզուով բազմաթիւ յօդուածներ ու գրքոյկներ Հայոց պատմութիւնն ու գրականութիւնը լեհահայ հասարակութեան...» («Անահիտ», հանդէս ամսեայ ազգային, գրական, գեղարուեստական, 1900, յունուար, թիւ 3, էջ 79):

XIX դարի սկզբներից Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Մխիթարյանները հրատարակում էին Ներսես Շնորհալու «Հաւատով

Составление ассоциативного ряда и его анализ позволяют составить предварительное представление о специфике реакций русскоязычных реципиентов на концепт “ветер”, и проанализировать восприятие этого слова в языковом сознании народа, но, учитывая недостаточно большой объем данных, только лишь на основе результатов ассоциативного эксперимента не представляется возможным всесторонне проанализировать образ мышления русского народа и его культурные особенности. Для того чтобы результаты анализа были более репрезентативными, необходимо рассмотреть также и тот пласт паремической системы языка, который содержит слово “ветер”.

4. Сходства и различия концепта “风(ветер)” в китайском и русском языках

“Концепт “ветер” представляет собой фрагмент языковой картины мира, важный для понимания и осмысления особенностей концептуализации социумом результатов познавательной деятельности” (Сегал, 2017, с. 54). Сопоставительный анализ данных русских ассоциативных словарей и китайских ассоциативных экспериментов показывает, что и для китайцев, и для русских характерно первое впечатление о слове “风/ветер” как о природном явлении, что является наиболее существенной характеристикой данного слова. Однако, по сравнению с русскими, у китайцев более широкая концепция понимания слова “风(ветер)”, которая не ограничивается только его физической природой, но и фокусируется на формировании тех или иных пластов значения. Это связано с тем, что в китайском языке существует множество производных от слова “ветер”.

Китайцы также обращают внимание на практичность и функциональность ветра. Это обусловлено тем, что в повседневной жизни они сталкиваются с устройствами, для работы которых необходим ветер. В целом, из-за богатой деривации слова “ветер” в китайском языке у китайцев возникают крайне разнообразные ассоциации с данным концептом. Сравнение слов-реакций, позволяет обнаружить, что глаголы среди китайских ассоциативных слов характеризуются низким уровнем частотности, а испытуемые чаще упоминают существительные, связанные с “ветром”. Очень часто упоминаются и устойчивые словосочетания, что связано с тем, что китайцы более склонны думать о конкретных и осязаемых вещах и задействуют при этом статическое мышление. В китайском языке существительные обычно используются чаще, чем глаголы, вероятно, потому что в данном языке они являются более гибкими и эффективными для описания элементов картины мира, понятий и отношений. На эту модель ассоциаций в китайском языке также повлияла традиционная китайская культура. Например, в стихах и идиомах ветер часто используется как символ и метафора, ассоциируясь с эмоциональными, моральными и философскими понятиями. Возможно,

именно под влиянием этой культурной традиции китайцы прежде всего упоминают существительные, связанные с “ветром”, при составлении ассоциаций. А частота глаголов, упоминаемых в ответ на слово-стимул в русском языке гораздо выше, чем в китайском, что иллюстрирует отражает тот факт, что ветер динамичен в восприятии русских и более статичен в глазах китайцев. Что касается основных характеристик ветра, то русские акцентируют внимание на его физической природе, а высокая доля прилагательных с компонентом “ветер” в ассоциативном словаре показывает, что описание ветра в русском языке чаще всего бывает достаточно ярким и часто используется в повседневной жизни.

Таким образом, можно утверждать, что два народа – китайский и русский – демонстрируют разные ассоциативные подходы, когда речь заходит о концепте “风(ветер)”. Китайцы более склонны к сочетанию конкретного, абстрактного и статичного мышления, в то время как ассоциации русских более динамичны и ориентированы на реальность. В определенной степени эти различия отражают культурные и психологические особенности двух народов.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ REFERENCES

1. Инь Бинь (2014). Ассоциативно-семантическое поле концепта "корова" в современном русском языке // Известия вузов. Серия : Гуманитарные науки. -. - № 5. - С. 311-314.
In' Bin' (2014). Associativno-semanticheskoe pole koncepta "korova" v sovremennom russkom jazyke // Izvestija vuzov. Serija : Gumanitarnye nauki. -. - № 5. - S. 311-314.
2. Карасик В. И. (2004). Языковой круг: личность, концепты, дискурс. - М.: Гнозис.
Karasik V. I. (2004). Jazykovej krug: lichnost', koncepty, diskurs. - M.: Gnozis.
3. Маслова В. А. (2001). Лингвокультурология: учеб. пособие для студ. высш. учеб. Заведений. - М.: Издательский центр «Академия».
Maslova, V. A. (2001). Lingvokul'turologija: ucheb. posobie dlja stud. vyssh. ucheb. Zavedenij. - M.: Izdatel'skij centr «Akademija».
4. Сегал, Н. А. (2017). Концепт ветер в русскоязычных медиатекстах // Вестник Московского государственного областного университета. Серия: Русская филология. - № 5. - С. 51-57.
Segal, N. A. (2017). Koncept veter v russkojazychnyh mediatekstah // Vestnik Moskovskogo gosudarstvennogo oblastnogo universiteta. Serija: Russkaja filologija. - № 5. - S. 51-57.

5. Степанов, Ю. С. (2004). Констант: Словарь русской культуры. - М.: Академический Проект.
Stepanov, Ju. S. (2004) Konstant: Slovar' russkoj kul'tury. - M.: Akademicheskij Proekt.
6. Телия В. Н. (1999). Первоочередные задачи и методологические проблемы исследования фразеологического состава языка в контексте культуры // Фразеология в контексте культуры. - М.: Языки русской культуры, - с. 13-24.
Telija V. N. (1999). Pervoocherednye zadachi i metodologicheskie problemy issledovanija frazeologicheskogo sostava jazyka v kontekste kul'tury // Frazeologija v kontekste kul'tury. - M.: Jazyki russkoj kul'tury, - s. 13-24.
7. Юрков Е. Е. (2003). К вопросу о базовых понятиях лингвокультурологии // Русский язык как иностранный в лингвострановедческом и лингвокультурологическом аспектах: научно - методические матер. - СПб.: - С. 8-22
Jurkov E. E. (2003) K voprosu o bazovyh ponjatijah lingvokul'turologii // Russkij jazyk kak inostrannyj v lingvostranovedcheskom i lingvokul'turologicheskom aspektah: nauchno - metodicheskie mater. - SPb.: - S. 8-22
8. 刘宏. 试析文化观念在语言与文化教学研究中的中心地位 // 外语与外语教学. - (2009). № 11. - С. 21-24. (In Chinese)
Liu Hong. Shixi wenhua guannian zai yuyan yu wenhua jiaoxuezhongde zhongxin diwei//waiyu yu waiyu jiaoxue. - (2009). № 11. - С. 21-24.
9. 彭文钊. 俄罗斯语言文化学: 源流与发展 // 广东外语外贸大学学报. - (2008). № 4. - С. 15-20.
Peng Wenzhao. Eluosi yuyanwenhuaxue: yuanliu yu fazhan//Guangdong waiyu waimao daxue xuebao. - (2008). № 4. - С. 15-20. (In Chinese)

ՏՈՆ ԼԻՆ, ՇԻՑԻ ՃՈՌԻ, ՕԼԳԱ ԿԵՍԱՐԵՎԱ - ՉԻՆԱՐԵՆՈՒՄ և ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ « 风 (ՔԱՄԻ)» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԶՈՒԳՈՐԴԱՅԻՆ-ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր՝ լեզվամշակութաբանություն, հայեցակարգ, զուգորդային-իմաստային դաշտ, 风(քամի)

Հոդվածում վերլուծված է «քամի» բառ-խթանը՝ չինացիների և ռուսաստանցիների շրջանում անցկացված ասոցիատիվ հարցումների հիման վրա: Բերվում են երկու լեզուներում «քամի» (风) հասկացության

ընդհանրություններն և տարբերությունները՝ բացահայտելով չինացիների և ռուսների ազգային մտածողության ու աշխարհընկալման առանձնահատկությունները: Հեղինակները նկատում են, որ «քամի» (风) հասկացության ասոցիատիվ դաշտերի տարբերությունները պայմանավորված են երկու ազգերի մշակութային և հոգեբանական առանձնահատկություններով:

Հասկացության ընկալման հարցում չինացիների մտածողությունը, ըստ էության, ստատիկ և վերացական է, մինչդեռ ռուսներն ավելի դինամիկ և իրատեսական են:

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել օտար լեզուների ուսուցման ժամանակ, ինչպես նաև տարբեր լեզուների հայեցակարգային համակարգերի համեմատական ուսումնասիրությանը նվիրված հետազոտություններում:

LING DONG, SHIQI ZHOU, OLGA KESAREVA - COMPARATIVE ANALYSIS OF THE ASSOCIATIVE-SEMANTIC FIELD OF THE CONCEPT“风(WIND)”IN CHINESE AND RUSSIAN

Keywords: *linguoculturology, concept, associative-semantic field, 风 (wind)*

The article presents an analysis of the results of an associative experiment conducted among Chinese and Russian participants in response to the stimulus word “wind.” The authors identify both similarities and differences in the associative fields of the concept “wind (风)” in the two languages, enabling an exploration of the distinctive features of the national worldviews and thought patterns of the Chinese and Russian cultures.

The findings suggest that the differences in the associative fields of the concept “wind (风)” stem from the cultural and psychological characteristics of the two nations. Chinese participants demonstrate a more static and abstract approach to the concept, whereas Russian participants tend to exhibit a more dynamic and realistic perception.

The results of this study have practical applications in the field of foreign language teaching and provide a foundation for further research into the comparative analysis of conceptual systems in Russian and Chinese.

Ներկայացվել է՝ 17.10.2024 թ.
Գրախոսվել է՝ 14.11.2024 թ.

**ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆԻ ԵՎ ԻՐԱՊԱՏՈՒՄԻ
ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՒԼԻԱՆ ԲԱՐՆՍԻ «ԷԼԻՉԱԲԵԹ
ՖԻՆՉԸ» ՎԵՊՈՒՄ**

ԱՐԵՎՀԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համառոտագիր

Վերլուծության է ենթարկվել անգլիացի գրող, գրաքննադատ, պոստմոդեռնիզմի գրականության ականավոր ներկայացուցիչ, Բուքերյան մրցանակի դափնեկիր Ջուլիան Բարնսի «Էլիզաբեթ Ֆինչը» վեպը՝ երևակայականի և իրապատումի արտացոլման առանձնահատկությունների վերահանման համատեքստում: Հոդվածում ներկայացվում են Բարնսի գեղագիտական, փիլիսոփայական հայացքները, երևակայականի և իրապատումի փոխներգործությունը, որոնք դառնում են գեղարվեստական և գեղագիտական պատկերի ստեղծման հենակետային միջոց և նոր գաղափարների դիտանկյուն: Հարկ է նշել, որ հեղինակը պատմական փաստերը ներկայացնում է սեփական երևակայական գաղափարների ներքո՝ խաղալով ընթերցողի երևակայության հետ, իր տեքստը դարձնելով ճկուն և բազմաբովանդակ:

Հիմնաբառեր՝ իրապատում, երևակայություն, խաղ, անորոշություն, պատրանքներ, հորինվածք

Ներածություն

Գրականության մեջ իրապատումի և երևակայականի փոխազդեցության խնդիրը գրականագետներին հեղաքրքրել է դեռ անտիկ դարերից և շարունակում է քննարկման առարկա լինել ժամանակակից հեղազոտողների համար:

Ռենե Դեկարտը (1596–1650) առաջադրեց «Cogito, ergo sum» («Մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ») հիմնադրույթը, որը կասկածի տակ էր դնում իրականության և երևակայականի մարդկային ընկալումը: Նրա «Խորհումները առաջին փիլիսոփայության մասին» աշխատանքը նվիրված է իրականի (անձի գոյության որոշակիության) և երևակայականի (զգայական փորձառության խաբուսիկ բնույթի) հարաբերություններին (Descarte, 1984, p. 12-15):

Իսկ ժան Բոդրիյարի (1929–2007) հիպերիրականության հայեցակարգը հուշում է, որ պոստմոդեռն ժամանակաշրջանում իրականի և երևակայականի միջև սահմանը վերացել է: Բոդրիյարը պնդում է, որ ժամանակակից մեդիայում և մշակույթում իրականության պատկերումը դարձել է ավելի «իրական», քան իրականությունը: Բոդրիյարի համար պոստմոդեռնիզմում երևակայականը դառնում է իրականության գերիշխող ձև, քանի որ պատկերները, նշանները և ներկայացումները գնալով փոխարինում են «իրականին» (Baudrillard, 1985, p.85):

Ըստ Հայգինգայի՝ «պոստմոդեռնիստական խաղը «սովորական» կամ «իրական» կյանքը չէ: Խաղը դրանից դուրս ելնելն է, հատուկ նպատակ ունեցող ժամանակավոր գործողության ոլորտ» (Հայգինգա, 2007, էջ 17):

Այսպիսով, մեր հոդվածը նվիրված է երևակայականի և իրապատումի ուսումնասիրությանը Ջուլիան Բարնսի «Էլիզաբեթ Ֆինչը» վեպում (Barnes, 2022, *մեջբերումների թարգմանությունը՝ հոդվածի հեղինակի*): Թեև Ջուլիան Բարնսի ստեղծագործությունների վաղ շրջանի երկերի վերաբերյալ կան բազմաթիվ աշխատություններ՝ գրված տարբեր լեզուներով, սակայն «Էլիզաբեթ Ֆինչը» քիչ է ուսումնասիրված, առավել ևս երևակայականի և իրապատումի համատեքստում, ինչը և պայմանավորում է հոդվածի նորույթը:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել երևակայականի և իրապատումի փոխներգործության դրսևորումները Ջուլիան Բարնսի «Էլիզաբեթ Ֆինչը» վեպում: Նշված նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- դիտարկել երևակայականի և իրապատումի կիրառումը պոստմոդեռն գրականության մեջ,
- վերհանել այս փոխներգործության դրսևորումները, որտեղ ներայուժետային խաղը դեկոնստրուկցիայի է ենթարկում պատմական իրադարձությունները:

Վեպում ներկայացված է հեղինակի ստեղծագործական երևակայությունն ու գեղարվեստական աշխարհընկալումը, որոնք զերծ չեն շրջապատող իրականությունից. հեղինակն իր ստեղծագործությունների հերոսներին և իրադարձությունները փոխառում է պատմական անցյալից և դրանց հաղորդում նոր շունչ, փիլիսոփայական գաղափարախոսություն ու պատմության սեփական գաղափարներ:

Կարճ՝ փիլիսոփայական այս վեպը կենտրոնանում է պատմության վրա՝ հերքելով փաստերը և պատմական որոշ աղբյուրներ, ստիպելով ընթերցողին վերանայել և վերագնահատել անցյալը: Վեպի հերոսուհին՝ Էլիզաբեթ Ֆինչը, մշակույթի և քաղաքակրթության դասախոս է, որի

նպատակն է մեծահասակներին սովորեցնել անկախ մտածողություն: Գլխավոր հերոս Նիլի և դասախոսի անսպասելի հարաբերությունները շարունակվում են դասերից դուրս՝ իրենց ինտելեկտուալ լանջերի շուրջ, ավելի քան երկու տասնամյակ: Էլիզաբեթի մահից հետո Նիլը ժառանգում է նրա նոթատետրերը, էսսեները և մենագրությունները: Նիլը ձգտում է ավելի լավ ճանաչել Ֆինչին նրան ժառանգություն հասած աշխատանքների, էսսեների միջոցով, որոնք Հուլիանոս/ Ջուլիան Ուրացողի մասին են:

Վեպը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում հեղինակն ընթերցողին է ներկայացնում Էլիզաբեթ Ֆինչին, աշխարհի և պատմության վերաբերյալ նրա գաղափարները և դասավանդման մեթոդը: Երկրորդ մասը տարբերվում է ստեղծագործության մյուս երկու մասերից, քանի որ այն ներկայացված է էսսեի տեսքով: Էսսեն նվիրված է Հուլիանոս/Ջուլիան Ուրացողին, որտեղ Նիլը հավաքագրել է իր ողջ պատկերացումներն ու փաստերը Ֆինչից իրեն հասած թղթերի միջոցով: Երրորդ մասը նվիրված է Նիլի մտորումներին և հոգեկան ապրումներին:

Վեպը բարձրացնում է բազմաթիվ արդի թեմաներ (մոնո-կամ հիբրիդային մշակույթներ, մոնոգամիություն, թվային հաղորդակցություն, առասպել, իրականության մոլորություն, երևակայական պատումներ, կրոն՝ մասնավորապես քրիստոնեություն, բազմաստվածություն և այլն):

- *Միաստվածություն - ասաց Էլիզաբեթ Ֆինչը: - Մոնոմանիա: Մոնոգամիա: Միաստվածություն: Տվյալ բառերը լավ բան չեն խոստանում-ապա շարունակեց - Մոնոգրամը ունայնության նշան է: <...>: Կան մի շարք չեզոք գիտական տերմիններ, որոնց հետ ես պատրաստ եմ համակերպվել: Բայց որտեղ կա այս նախաձանցը, այնտեղ նաև մարդկային մտքի վրա ազդեցություն կա <...>: Միալեզվությունը փակ հասարակության ինքնախաբեության նշան է: Մոնոթիսիզմը հիվանդություն է, որը միայն համակրանք է առաջացնում (Barnes, 2022, p. 30):*

Ջուլիան Բարնսը, որը, թերևս, պատահականորեն չի կրում Ջուլիան Ուրացողի նույն անունը, գրել է խաղային, ոչ ավանդական «պատմություն»՝ հորինված Էլիզաբեթ Ֆինչի և պատմական գործիչ Ջուլիան Ուրացողի կյանքի մասին: Ինչպես նշում է գրաքննադատ Արիել Բոլտերը, «աստվածաբանները կարող են նաև հիանալի վիպասաններ դառնալ»: Իսկ Ջուլիան Բարնսի նման վիպասանները կարող են դառնալ հիանալի աստվածաբաններ և փիլիսոփաներ (*Balter, Review*):

Յուրաքանչյուր մաս իրականում անկախ պատմություն է, որտեղ հեղինակը ընթերցողին է ներկայացնում ինչպես Էլիզաբեթի կյանքը,

անյպես էլ համաշխարհային պատմության կարևոր իրադարձություններ՝ ստեղծելով երևակայական սեփական պատումը:

Ներկայանալով որպես պոստմոդերն հեղինակ՝ Բարնսը ակնհայտ օգտագործել է ստեղծագործական բարդ խաղ, պարոդիա, հեզնական, հակազաղափարական դիրքորոշումներ և համատեքստային ձևերով տվել «կտրուկ աճ» տեքստի ներսում ինքնագիտակցության աստիճանը ներկայացնելու համար: Հեղինակն իր հայեցողությամբ ստեղծագործության մեջ մոդելավորում է աշխարհակարգը, տեղափոխում ու ընդլայնում է ժամանակն ու տարածությունը: Էլիզաբեթ Ֆինչը, ինչպես Նիլն է նկարագրում, խորապես հավատում էր, որ հունական և հռոմեական պատմությունն ու մշակույթը դեռևս ունեն անժխտելի ազդեցություն ներկայի վրա:

Հին հունական և հռոմեական աստվածները լույսի և ուրախության աստվածներ էին: Մարդիկ հասկացան, որ գոյություն ունի միայն մեկ կյանք, ուստի պեղք է լույս և ուրախություն գտնել երկրի վրա՝ նախքան մոռացության մաքնվելը: Իր հերթին, այս նոր քրիստոնյաները հնազանդվեցին խավարի, փառապանքի և ստրկության Աստծուն, ով հայտարարեց, որ լույսն ու ուրախությունը գոյություն ունեն միայն մահից հետո, Իր սրբեծած երկնքում, որի ճանապարհը լցված է տիրությամբ, մեղքերով և վախով: <...>:

Իհարկե,- շարունակեց Է.Ֆ.-ն,- պեղք է խուսափել ինքնախղճահարությունից: Արդյո՞ք խելամիտ է ասել, որ <...> դարեր անց մենք առաջընթաց ունենք (Barnes, 2022, p.64):

Բարնսի նպատակն է Էլիզաբեթ Ֆինչի միջոցով հասցնել ընթերցողին այն գաղափարը, որ պատմությունը վստահելի չէ: Ֆինչը կոչ է անում ուսանողներին չվստահել պատմական նկարագրություններին երեք արտահայտություններով՝

«Զգուշացե՛ք երազելուց -պատասխանեց Էլիզաբեթ Ֆինչը: - Եվ, ի դեպ, զգուշ եղեք այն ամենից, ինչին ձգտում է մեծամասնությունը: <...>:

-Պարտադրված միամուսնությունը/մոնոգամիան մտրավորապես նույնն է, ինչ հարկադրված երջանկությունը:

-Կամավոր մոնոգամիան կարող է ընդունելի թվալ: Ռոմանտիկ մոնոգամիան կարող է ցանկալի թվալ:<...> Միշտ անհրաժեշտ է փարբերակել փոխադարձ կիրքը և ընդհանուր մոնոմանիան» (Barnes, 2022, p. 31):

Պոստմոդերնիզմի տեսաբան Ժակ Դերիդայի պես, Բարնսը գլխավոր խնդիր է համարում ընթերցողին մշակութային տեքստերի ամբողջությունը հասցնել իմաստային անորոշ տեսքով (Деррида, 2006, с. 30): Անորոշության մեջ է դրվում ողջ գաղափարը երևակայության և

իրականության վերաբերյալ: Սրա հիման վրա տեղի է ունենում պատմականության մերժումը, պատմության դեկոնստրուկցիան, որը կարելի է անվանել պոստմոդերն համակարգի հիմնական հատկանիշներից մեկը:

Հեղինակը, մեջբերելով քրիստոնեության մասին հետևյալ գաղափարը, անորոշություն է փոխանցում ընթերցողին և վերափոխում պատմությունը:

Հուլիանոս Ուրացողը Հռոմի վերջին հեթանոս կայսրն էր, որը փորձեց հետ բերել բազմաստվածությունը, նախքան քրիստոնեությունը կկործաներ ամեն ինչ: Իսկ երկրորդը՝ ոչ այնքան հայտնի Հուլիանոս Էկլանումացին էր: <...>: Եկեղեցին, ինչպես հիշում եք, պահանջում էր (և պահանջում է առ այսօր) կատարել մկրտության ծեսը, որպեսզի երեխան մաքրվի սկզբնական, ականա ժառանգած մեղքից: Ջուլիան Էկլանումացին չէր հավատում, որ Աստված նախատեսել է այդ ամենը: Բայց, ավաղ, նրան երբեք չհաջողվեց գերազանցել Սուրբ Օգոստինոսին, որը պնդում էր սերնդեսերունդ փոխանցվող հավերժական նզովքի գաղափարը: <...> Ջգացեք այս վարդապետական փարսաձայնության հիմնարարությունը և պարկերացրեք, թե ինչպիսի տեսք կունենար աշխարհը, եթե այդ ժամանակ Օգոստինոսը չհաղթեր (Barnes, 2022, p. 50):

Բարնսը Էլիզաբեթ Ֆինչին ներկայացնում է որպես անորոշության, ապականոնացման և դեկոնստրուկցիայի գաղափարները առաջ քաշող խոսնակ, որը թերհավատորեն է մոտենում պատմական փաստերին:

19-րդ դարի ֆրանսիացի ականավոր պատմաբան և մրաօղ էռնեստ Ռենանն ասել է. «Մոռացումը, կամ ավելի ճիշտ՝ պատմական սխալը, ազգի գոյության հիմնական գործոններից մեկն է»:

Բայց, խնդրում եմ, ուշադրություն դարձրեք այն բանի վրա, ինչ նա չի ասել: Նա չի ասել. «Ազգի ստեղծման հիմնական գործոններից մեկը մոռացկոտությունն է, ավելի ճիշտ՝ պատմական սխալը»: Սա արդարացի դիտողություն է թվում, <...> Ռենաննը պնդում է, որ պատմական սխալը ազգի գոյության հիմնական գործոններից մեկն է: <...>: Այն համոզմունքը, որ կրոնը, որում մենք ծնվել կամ ապրում ենք ընտրությամբ, միակ ճշմարիտ հավատքն է հարյուրավոր հեթանոսական և հավատարաց աղանդների մեջ (Barnes, 2022, p. 67):

Վեպում Բարնսը օգտագործում է «անվստահելի պատմող» հնարը: Հեղինակը Նիլին համարում է «անավարտ ծրագրերի արքա» (Barnes, 2022, p. 96)՝ երկու անգամ ամուսնալուծված, երբեք մի գործը ավարտին չհասցրած այս անվստահելի անձնավորությունը սկսում է ուսումնասիրել Էլիզաբեթից ժառանգած նոթատետրը և, մեջբերելով շատ ու շատ

նշումներ, «խաղում» է սյուժեի հետ՝ ստեղծելով պատմական փաստերի անվստահելիություն:

Մի բաժակ գինու շուրջ ես սկսեցի ուսումնասիրել նրա թղթերը:

Ինքնախղճահարության դարաշրջանում լինել ստոյիկ նշանակում է դատապարտել քեզ անհասարակականության կամ ավելի վատ՝ անզգայունության:

Ամեն անձնական բան քաղաքական է. սա եղել է օրվա խորհուրդը փասնամյակներ շարունակ: Փոքր պարզաբանում. ավելի շուր, ամեն անձնական բան պարմական է: <...> , (Barnes, 2022, p. 92):

Նիլը Ֆինչի գրառումների հիման վրա էսսե է գրում, որի միջոցով հյուսում է հին աշխարհի հակասությունները մեր սեփական գաղափարներին: Կերտելով մտորումներ ստոիցիզմի և ռոմանտիզմի, միաստվածության և բազմաստվածության վերաբերյալ՝ Բարնսը զուգահեռներ է տանում Ֆինչի գաղափարների միջև՝ ցույց տալով, թե ինչպես կարող է գեղարվեստական գրականությունը ընթերցողին տանել մեծ գաղափարները մերժելու երկար և զգացմունքային ճանապարհորդության:

«Աշխարհը վատն է, քանի որ Աստված մենակ է այն ստեղծել: Եթե Նա խորհրդակցեր երկու-երեք ընկերների հետ, <...> աշխարհը կատարյալ կլիներ» (Barnes, 2022, p. 112):

Հեղինակը, իր խոսքը էսսեի միջոցով փոխանցելով, գաղափար է տալիս բառերի իմաստային հատկությունների և իր իրական մտադրությունների մասին պոստմոդերնիստական փիլիսոփայության սկզբունքներով: Գրառումները խառնված են և շարժվում են անցյալի երևակայական և ներկայի իրական պատկերների միջև: Հեղինակը փորձում է հնարավորինս պահպանել պատմության և պատումի ժամանակների նույնականացման պատրանքը՝ ներկայացնելով անցյալի երևակայական ժամանակը պատումի մեջ՝ իբրև իրականի:

Պատմաբանների նախընտրած ավանդական ժամանակագրական դասավորության փոխարեն տեքստը ընթանում է զուգահեռներով և հակադրություններով: Բարնսը կապում է մի տեքստը մյուս տեքստի հետ՝ ստեղծելով ինտերտեքստի փայլուն օրինակ և օգտագործում պատմողական բազմազանություն:

<...> փաստ փարի Ջուլիանը հանրության առաջ իրեն քրիստոնյա է ձևացրել: Ի՞նչ էր դա՞՞՞ կեղծավորություն՞ն, բազմաստվածություն՞ն, թե՞ պարզ խոհեմություն: Իսկապես, նրա զորքերի մեծ մասը քրիստոնյաներ էին, որոնք կարող էին ոչ միայն ուրանալ հեթանոս գլխավոր հրամանավարին, այլև մտադիր էին խլել նրա կյանքը (Barnes, 2022, p. 130):

«Էլիզաբեթ Ֆինչը» հեղինակի ցանկացած այլ երկի նման գրված է կտրուկ մտքային անցումներով: Ինտերտեքստուալությունը թույլ է տալիս Բարնսին միացնել վեպի տարասեռ տարրերը և գաղափարները, որտեղ ընթերցողը հնարավորություն ունի ինքնուրույն գտնել ճշմարտությունը: Լ. Պերրոն Մուազեսը, ամբողջացրեց Յուլյա Կրիստևայի և Ռուլան Բարտի ինտերտեքստի գաղափարի ձևակերպումները և գտավ, որ կարդալու գործողության ընթացքում բոլոր երեք կողմերը՝ հեղինակը, տեքստը և ընթերցողը, փոխակերպվում են գրելու խաղի համար միասնական անվերջ դաշտ (Перрон-Myazec, 2004, с. 164):

Տեքստում նոր իրականության պատկերումը ինտերտեքստով հնարավորություն է տալիս հեղինակին ստեղծել իմաստային ներուժի բազմաթիվ այլ հնարավոր իրացումներ:

«Դու հաղթեցիր, գունապ Գալիլեացի»: Որտեղի՞ց է այս «գունապ»-ը, ինչո՞ւ: Արդյո՞ք սա այն պատճառով է, որ արևմտյան արվեստը գրեթե իր ողջ գոյության ընթացքում Հիսուսին պատկերել է գունապ դեմքով, <...>: Թե՞ Նազովրեցին գունապ է այն պատճառով, որ նա արդեն մահացած է (Barnes, 2022, p. 158):

Նա «ասաց», որ իրեն պարտության է մատնել *Գալիլեացին*, թեև պարսկական բանակի շարքերում քրիստոնյաներ չեն եղել, և նրա մահվան միակ փաստագրված պատճառը օտար նիզակն էր: Հավանաբար *Ջուլիանը այս խոսքերն ասում է, քանի որ իրականում նա սպանվում է քրիստոնյայի ձեռքից* (Barnes, 2022, p. 161):

Ինտերտեքստային իմաստավերլուծությունը հնարավորության է տալիս հեղինակին պատմական իրապատումը ներկայացնել որպես վերացական գաղափար: Բարնսը տեքստը տեքստի միջոցով ակնարկում է, որ պոստմոդեռն պատմությունը բանակցում է անցյալի սարսափելի կրկնվող պատահականությունների հետ: Հեղինակը վերարտադրում է պատմության երևակայական կողմը: Գեղարվեստական պատումային երկերի հիմնական գիծն այն է, որ դրանցում պատկերված իրականությունը երևակայական, մտացածին կամ հորինվածք է: Գեղարվեստական հորինվածքը «խաբեություն» է և ենթադրում է մի նոր՝ գեղարվեստական իրականության վերստեղծում: Բարնսը թույլ է տալիս ընթերցողին ազատ համադրել երևակայությունը ներտեքստային փաստերի և արտաքին աշխարհի բազմաթիվ նման իրողությունների հետ:

- *Մահացածները չեն նախադի քեզ սխալ լինելու համար: Սա ողջերի իրավասությունն է: Բայց նրանք կարող են սրել: Դրա համար ես ավելի շարժվախում եմ մահացածներին: Եվ, ի լրումն սրան, ինչու՞ ենք կարծում, որ մեր հավաքական հիշողությունը՝ «պատմությունը», ավելի քիչ*

կենթարկվի աղավաղման, քան մեր անձնական հիշողությունը (Barnes, 2022, p. 48): Բազում մեջբերումներով, հղումներով, երկար ակնարկներով այս վեպը հնարավոր է դիտարկել նաև «պոստմոդեռնիստական խաղ» հասկացության ներքո: Այս խաղերն իրենց հերթին փոխազդեցության մեջ մտնելով միմյանց հետ՝ վեպի ներսում ստեղծում են մի շարք ծածկագրեր, որոնք վերծանելու համար կոհմենք Յոհան Հայզինգայի «Homo ludens» աշխատությանը (Հայզինգա, 2007, էջ 12-17):

Ինչպես արդեն նշվեց, Հայզինգան պնդում էր, որ խաղի և իրական կյանքի միջև պետք է լինի հստակ տարանջատում: «Խաղը «սովորական» կամ «իրական» կյանքը չէ: Խաղը դրանից դուրս ելնելն է, հատուկ նպատակ ունեցող ժամանակավոր գործողության ոլորտ» (Հայզինգա, 2007, էջ 17):

Ջ. Բարնսի վեպում խաղի կիրառման նպատակը մարդկային էության, մարդկային քաղաքակրթության անցյալի, ներկայի և ապագայի գաղափարների վերաբերյալ հարցերի պատասխանների որոնումն է:

Բարնսը խառնում է գլուխները՝ ներկայացնելով պատմության վերաբերյալ իր սեփական դեկոնստրուկտիվ միտումները, որտեղ ճանապարհը հենց ինքն է՝ Էլիզաբեթ Ֆինչը: Խաղը սկսվում է հենց այն ժամանակ, երբ ընթերցողը այլևս չի կարողանում տարանջատել տեքստի երևակայական կամ իրական լինելը:

Վոլտերը նշում է, որ «Ուրացող» անունը ապացույց չի թողել, որ Ջուլիանն անկեղծ քրիստոնեական հավատքից ուրացել և բազմաստվածությունն է ընտրել, նրա «քրիստոնեությունը» կենսական ծածկույթ էր, ուստի նա չէր կարող հավատարմաց լինել: Եվ հիմա՝ տասնչորս դար զրպարտչական մեղադրանքներից ու հորինվածքներից հեյրո, վերջապես եկել է առողջ վերլուծության ժամանակը: Իսկական Ջուլիանը, հեռու լինելով իր հակառակորդների հրեշավոր կերպարից, հեղուկ էր «արդարության, չափավորության և խոհեմության» կանոններին (Barnes, 2022, p. 178):

Բարնսը հետևողականորեն մշակում է իր տեքստը՝ խաղի միջոցով շփոթեցնելով ընթերցողին և թույլ չտալով կռահել Ջուլիան Ուրացողի կրոնական դավանանքը: Ստեղծագործությանը բնորոշ խաղը՝ երևակայականի և իրապատումի, երագի և իրականության միջև, միտում ունի կասկածի ենթարկել պատմական իրողությունները:

Խաղը սկսվում է ինչպես շարադրանքից, այնպես էլ հերոսի անվան ընտրությունից: Բարնսը շատ ընտրողական է իրադարձություններին անդրադառնալիս, և պատահական չէ, որ Ջուլիան Բարնսը Հուլիանոս/Ջուլիան Ուրացողին է ընտրել որպես էսսեի գլխավոր հերոս, որտեղ նպատակային ենք համարում ընդգծել թե՛

հերոսի անունը, թե՛ մականունը: *Նրա ամբողջական անունը Ֆլավիոս Կլավդիոս Ջուլիան էր, և <...> նա այսուհետ կկոչվի Հուլիանոս/ Ջուլիան Ուրացող* (Barnes, 2022, p. 124):

Բարնսը պատմության հանդեպ պարադոքսալ մեջբերումներով խաղում է ընթերցողի հետ և կարողանում է ապացուցել, որ պոստմոդերնիստական վեպի սահմանները կարող են դուրս գալ ցանկացած սահմաններից:

Նախ՝ առանձնացնում է հեղինակների՝ Մոնտեն, Հիտլեր, Իբսեն, Ամիանուս, Սուլինբերն, որոնք մեջբերում են իրենց սեփական կարծիքը Ջուլիան Ուրացողի մասին, ապա՝ ձևավորվում է պատումի վերաբերմունքը հերոսի նկատմամբ՝ առաջարկելով իր կարծիքը: Բարնսը, ընտրելով բազմաթիվ հայտնի գրողների և փիլիսոփաների մեջբերումները Ջուլիան Ուրացողի մասին, վեպը դարձնում առանձին խաղերի շարք: Ահա թե ինչպես է Ջուլիանը հայտնվում Ամմիանուսի նկարագրության մեջ.

Նրա արտաքինը հեղեղալի էր. միջին հասակ, գլխի մազերը շապ բարակ և փափուկ, հասար մորուք՝ սեպածև կտրված, շապ հաճելի աչքեր, սուր միտք, գեղեցիկ կոր հոնքեր, <...> (Barnes, 2022, p. 40):

Միշել դե Մոնտենը (1533–1592) ժամանակակից դարաշրջանի առաջին անկախ մտածողն էր, ով խոսեց Ուրացողի մասին իր «Խղճի ազատության մասին» էսսեում: «Նա իսկապես մեծ և հազվագյուտ մարդ էր,- գրում է Մոնտենը,- նրա ժամանակակիցները, նույնիսկ իր համակրոնականների մեջ, ծիծաղում էին նրա վրա՝ պնդելով, որ եթե նա կարողանար հաղթել պարթևներին, նա կկործաներ բոլոր ցլերին, որոնք հայտնաբերվել են աշխարհում՝ շարունակաբար զոհաբերելով նրանց իրենց աստվածներին» (Barnes, 2022, p. 167-168):

Ընտրելով Հուլիանոս Ուրացողի կերպարը՝ Բարնսը հմտորեն նկարագրում է հին աշխարհի, հելլենիստական ծեսերի և քրիստոնեական ոտնձույթունները՝ ստեղծելով բարդ և հակասական կերպար, որը հաճախ նկարագրվում է որպես «*Ֆանասիկոս*»:

Իսաղը հեղինակի համար լուծումների ձույլ ամբողջություն է, որը ընթերցողին տալիս է հոգեբանական, երևակայական, ստեղծագործական ունակության դրսևորման և զարգացման հնարավորություն: Բարնսի տեքստը առանձնանում է մանրամասնություններով, հերոսների արտաքինի նկարագրությամբ, աներևակայելի փորձություններով հազեցած զարգացումներով և երևակայական տեսարանների ընդգծված հազեցվածությամբ: Մի կողմից՝ ընթերցողին ներկայացվում են Ջուլիան Ուրացողի մասին պատմական ճանաչված պատմություններ, մյուս կողմից՝ իր սեփականը:

Նրա մասին կարծիքներ մեջբերելու գաղափարը խաղային միտում է, որը ընթերցողին ներշնչում է Ջուլիան Ուրացողի անձնավորության երկակի բնույթի մասին:

Իբսենի «Կեսարը և Գալիլեացին» ստեղծագործությունն է, որը հեռու է իրական պատմությունից, այն ծածկված է տասնիններորդ դարի հրապարակախոսների հասարակական շղարշով: Դրանք ներառում են՝ անձնական ինքնահրացման ցանկությունը, կամքի հիմնարար նշանակությունը և քրիստոնեության անհամապետելիությունը «կյանքի ուրախության» հետ (Barnes, 2022, p. 186):

Երևակայականը իրապատումից չտարանջատելու այս խաղը պոստմոդեռնիստական բնորոշ առանձնահատկություն է և հետագա գործողությունների համար դառնում է հետաքրքիր ընթացք ապահովող միջոց:

Այսպես, Բարնսի «Էլիզաբեթ Ֆինչ» վեպի «իրական» հերոսը՝ Հուլիանոս/Ջուլիան Ուրացողը, հորինվածք է այն պարզ պատճառով, որ նա գործում է գրողի վերակերտած իրականության մեջ:

Իրականում այդ «իրատարծություններից» ոչ մեկը տեղի չի ունեցել: Ինչպես Ջուլիանը չի արտասանել իր հայտնի մահամերձ ելույթը, որը հորինվել է միայն հետագա տարիներին: <...> (Barnes, 2022, p. 192):

Որքան էլ նա ձգտի պահպանել պատմական դեպքերի և դեմքերի հավաստիությունը, բավական է նման մի նախադասություն. «Նա վախենում էր, որ մարգարեությունը կարող է կեղծ լինել, <...> Եվ մի օր մի գինվոր, ով Ջուլիանին բարձրացնում էր ձիու վրա՝ աջ ձեռքը դնելով ուրբի տակ, սայթաքեց ու ընկավ գետնին: <...>, բայց Ջուլիանն այս միջադեպում տեսավ ոչ թե մարդկային հսկողություն, այլ աստվածների կամք, ըստ որի՝ նա, ով իրեն բարձրացրեց, ինքը ցածրացավ» (Barnes, 2022, p. 153), որպեսզի երևա պատկերվող իրականության երևակայական կամ հորինված լինելը: Պարզ է, որ գրողը չի կարող ճշգրիտ տեղեկություն ունենալ որևէ մեկի վախերի կամ մտորումների մասին: Տեքստը այստեղ հորինածք կամ երևակայական է՝ լի իրականության բաղադրիչներով: Ջուլիան Բարնսը իր հարցազրույցների շարքում զարգացնում է այն միտքը, որ հնագույն առասպելների, պատմությունների նաև այսօրվա գրականության գործառույթը մարդկային գործունեությանը քառտիկ որոշակի ձև և կառուցվածք հաղորդել է: Բարնսի համոզմամբ՝ գրականության երևակայական իրապատումը մեզ համար ընդունելի է իբրև ճշմարտություն, սակայն ընթերցողը պետք է գիտակցի, որ իրեն պատմում են հորինված պատմություն, թեև չպետք է դրանից եզրակացնի, որ գրողը ստում է (Barnes J. in conversation with Joe Donahue): Պատմությունը դառնում է

տեղեկատվության երակ, որտեղ ընթերցողը փորձ է կատարում տարբերել երևակայականը իրապատումից:

Այս բոլոր հնարներով ու տեքստային առանձնահատկություններով՝ հեղինակը վեպը ներկայացնում է պատմություններ ստեղծելու և դրանք մեկ սյուժետային գծով միավորելու հմտությունը:

Եզրակացություն

Ջուլիան Բարնսի «Էլիզաբեթ Ֆինչը» վեպն իր յուրօրինակ կառուցվածքով հանդես է գալիս որպես իրականության արտահայտման առավել բարդ և հակասական սինթեզ, որը հնարավոր է դառնում տեքստային տարրերի յուրօրինակ համակցումների, հեղինակ-տեքստ, տեքստ-ընթերցող փոխհարաբերությունների և ժանրային երկիմաստությունների օգտագործման շնորհիվ:

Ջուլիան Բարնսի երկը կարող է դիտարկվել որպես ներսյուժետային խաղ, որը դեկոնստրուկցիայի է ենթարկում պատմական իրադարձությունները՝ ինտերտեքստի միջոցով ընթերցողին ներկայացնելով նոր իրականություն: Ինտերտեքստային իմաստավերլուծությունը հնարավորության է տալիս հեղինակին պատմական փաստերը ներկայացնել սեփական երևակայական, վերացական գաղափարի ներքո: Բարնսը «տեքստը տեքստի մեջ» հնարի միջոցով կրկին ակնարկում է, որ պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ երևակայություն: Այսպիսով, հեղինակը խաղում է ընթերցողի երևակայության հետ՝ առաջարկելով իրապատումի իր տեսակետը, իսկ խաղերն իրենց հերթին փոխազդեցության մեջ են միմյանց հետ և վեպի ներսում ստեղծում են մի շարք ծածկագրեր, որտեղ պատկերված իրականությունը երևակայական, մտացածին կամ հորինված է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Barnes, J. (2022). Elizabeth Finch. Jonathan Cape. 192 p.
2. Balter, A. Review about Elizabeth Finch. // New York journal of books. <https://www.nyjournalofbooks.com/book-review/elizabeth-finch-novel> (Accessed 20.02.2024).
3. Barnes, J. ELIZABETH FINCH in conversation with WAMC Radio's Joe Donahue. <https://www.youtube.com/watch?v=YdHYtz2thhw&t=1687s&abchannel=OblongBooks> (Accessed 20.02.2024).

4. Barnes, J. Elizabeth Finch 2022. <https://www.goodreads.com/book/show/59900690-elizabeth-finch> (Accessed 22.12.2023).
5. Descartes, R. (1984). First Meditation. In: The Philosophical Writings of Descartes. Cambridge: Cambridge University Press. (p.12-15).
6. Baudrillard, J. (1985). "The Masses: The Implosion of Social in the Media". p. 85.
7. Деррида Ж. (2006). Призраки Маркса. Москва. «Esse homo». 249 с. Derrida Zh. (2006). Prizraki Marksa. Moskva. «Esse homo». 249 s. (in Russian)
8. Перрон-Муазес Л. (2004). Западное литературоведение 20-го века, Энциклопедия, М., 225 с. Perron-Muazes L. (2004). Zapadnoe literaturovedenie 20-go veka, Jenciklopedija, M., 225 s. (in Russian)
9. Հայզինգ Յ. (2007), «Homo Ludens», Եր., «Սարգիս Խաչենց» հրատ., էջ 12-17: Hayzinga Y. (2007), «Homo Ludens», Er., «Sargis Xachenc» hrat., e'j 12-17: (in Armenian)

ԱՐԵՎԱՏ ԽԱՇԱՏՐՅԱՆ - ՎՅԱԻՄՈԴԵՅՏՎԻԵ ՎՈՕԲՐԱՋԱԵՄՈԳՈ Ի ԴԵՅՏՎԻՏԵԼՅՈԳՈ Վ ՐՈՄԱՆԵ ԴՋՈՒԼԻԱՆԱ ԲԱՐՆՏԱ “ՋԼԻԶԱԲԵՏ ՖԻՆՇ”

Կլյուչևյե սլո՜վա: ռեալնոստ՜, Վոօբրա՜ճեմե, իՅրա, Նոօքրե՜ճեմեմոստ՜, իլլյուզիա, Վյմյսե՜լ

Վ ստա՜յե ռասսա՜տրի՜վալոսյա օսօբեննօստ յրօ՜ճալեմյա Վօօբրա՜ճաեմօգօ ի ռեալնօգօ Վ Րօմա՜նԵ ԴՋուլիանա Բարնսա “Ջլիզաբե՜տ Ֆինչ”. Րօմա՜ն “Ջլիզաբե՜տ Ֆինչ”, իա՜րա՜կտերիզույօժիլոսյա ս՜Վօեյ Յունիկալնօյ ստրուկտուրօյ, յրօ՜ճալեմյա սօբօյ Տլօժնոստ ի յրօ՜ճի՜ճօրօչի՜ճոստ արժի՜տե՜կոնիկոստիկա Վյրա՜ճալեմյա ճեյ՜տ՜վի՜տելնօստի. Ջտօ ՆԵ Վ յօսլե՜ճնոստ օժԵրե՜ճ Վյա՜ճա՜նօ սօ սօբեյֆիկօյ Ֆունկցիօնիրօ՜ճալոսյա տե՜ճտօ՜ճ Վեմենտօ Րօմա՜նա.

Րօմա՜ն իմօլիցիւրօւե՜լ Վնոստրիսյօժե՜տնոստ իՅրա, ճեկօնստրուիւրօւոստ իստօրի՜ճեկոստե սօբյի՜տյա ի յրօ՜ճալեմյաժոստ ի՜ճա՜տելոստ Նօ՜ճոստ ռեալնօստ յօսլե՜ճնօստ ինտերտե՜ճտ. ինտերտե՜ճտալնօյ սեմա՜նտի՜ճեկօստի ա՜նալիզ ճա՜տ Վօզմօժնօստ ավտօրս յօ՜ճա՜ճալե իստօրի՜ճեկօստե ֆա՜կտյա Վ ս՜Վե՜տ սօբստ՜ճեմնօյ իժեօլօգի՜ճեկօստե ստա՜նօ՜ճօ՜ճ.

AREVHAT KHACHATRYAN - INTERACTION OF THE IMAGINARY AND THE REAL IN “ELIZABETH FINCH” BY JULIAN BARNES

Keywords: *reality, imagination, play, uncertainty, illusions, fiction*

The article analyzes the interplay between the imaginary and the real in Julian Barnes's novel Elizabeth Finch.

Through its unique structure, Elizabeth Finch serves as a complex and contradictory synthesis of reality and imagination, achieved through the innovative use of textual elements, the dynamics of author-text and text-reader relationships, and the genre ambiguity.

The novel reinterprets historical events, constructing a new reality through intertextuality. An intertextual semantic analysis allows the author to present historical facts from his own ideological perspective.

Ներկայացվել է՝ 18.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 21.11.2024 թ.

**ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ԱՆԱԻԴԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Համառոտագիր

Մեր օրերում բազմաթիվ մանկական գրքեր են թարգմանվում, և որոշ թարգմանական խնդիրների քննության անհրաժեշտություն է առաջանում: Իսկ մանկական գրականությունն ունի իր առանձնահատկությունները, որոնք թարգմանության գործընթացում առաջ են բերում դժվարություններ կամ հատուկ ուշադրություն են պահանջում: Հոդվածում ուսումնասիրել ենք խոսուն անունների թարգմանության, տեքստի հուզականության, գեղարվեստականության և կոմիզմի փոխանցման որոշ սկզբունքներ: Քննությունը կատարվել է ըստ Ալան Միլնի «Վիննի Փու» (A. A. Miln «Winni-The-Pooh and All, All, All») հեքիաթի հայերեն և ռուսերեն թարգմանությունների:

Թարգմանությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ստեղծագործությունը թագմանելիս, մեր կարծիքով, նախընտրելի է պահպանել գեղարվեստականությունը՝ զոհելով հարազատությունը, քանի որ երեխաները այդպիսի թարգմանությունները ավելի լավ են ընկալում:

Հիմնաբառեր՝ Ալան Միլն, թարգմանություն, խոսուն անուններ, հուզականություն, հեքիաթ, կոմիզմ, գեղարվեստականություն, համարժեքություն:

Ներածություն

Մերը դեպի գրականությունը սկսվում է մանկությունից, իսկ դա նշանակում է, որ սերը դեպի ընթերցանությունը սկսվում է մանկական գրականությունից: Վերջինս գեղարվեստական գրականության մի մասն է, բայց ունի իր խնդիրները և լարանը, որովհետև ուղղված է երեխաների հետաքրքրությունները բավարարելուն և համապատասխանում է նրանց հոգեբանությանը: Մանուկներին հասցեագրված գրքերը, բացի իրենց հիմնական՝ դաստիարակչական և կրթական գործառույթներից, այլ խնդիրներ էլ են լուծում: Դրանք նպաստում են պատասխանատվության և ապրումակցման ձևավորմանը, սովորեցնում են հաղթահարել

դժվարությունները և անհաջողությունները, այսինքն՝ նախապատրաստում են հասուն կյանքի: Մանկական գրականությունը նաև գեղագիտական գործառույթ ունի: Այն դաստիարակում և զարգացնում է գեղեցիկը ընկալելու կարողություն, օգնում է նաև, որ մանուկները լավ տիրապետեն մայրենի լեզվին, զգան բառի գեղեցկությունը և արտահայտչականությունը: Այս ամենի հետ մեկտեղ կարևոր է նշել նաև այն փաստը, որ ստեղծագործությունները շատ հաճախ հաճույքի աղբյուր են երեխայի համար և սեր են արթնացնում դեպի ընթերցանությունը (Бартель, 2002):

Չնայած մեր օրերում ինֆորմացիայի աղբյուրները շատ են, բայց երեխաների համար ամենալավ աղբյուրը, իհարկե, մանկական գրականությունն է:

Սովորաբար մանկական գրականության շարքին են դասվում այն գործերը, որոնք, հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները, բավարարում են նրանց հետաքրքրությունները: Բայց երբեմն այս գրականության շարքերն են համալրում այնպիսի ստեղծագործություններ, որոնք նախապես գրված չեն եղել մանուկների համար, միայն հետագայում են նրանց միջավայրում արձագանք գտել, ինչպես՝ Դանիել Դեֆոյի «Ռոբիզոն Կրուզոն», Ջոնաթան Սվիֆտի «Գուլիվերի ճամփորդությունը» և այլն (Арзамасцева 2012, с. 19-20):

Ի. Ն. Արզամասցևան առանձնացնում է մանկական գրականության երեք տեսակ.

1. Երեխաների համար գրված,
2. Մեծահասակների համար գրված, որ կարդում են երեխաները,
3. Երեխաների կողմից գրված:

Հենց առաջին տիպի գրականությունն էլ կոչվում է մանկական (նույն տեղում):

Մանկական ստեղծագործություններում շատ կարևոր դեր ունի դիպաշարը. այն պետք է լինի գրավիչ, արագընթաց և երջանիկ ավարտով: Իսկ ստեղծագործության հերոսները պետք է հոգեհարազատ լինեն երեխային և հետաքրքրություն առաջացնեն:

Հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները՝ մանկական գրականությունը ընդունված է բաժանել հետևյալ խմբերի՝

1. նախադպրոցական,
2. կրտսեր դպրոցական,
3. միջին դպրոցական,
4. ավագ դպրոցական (Арзамасцева 2012, с. 40) :

Թարգմանիչը պարտավոր է հաշվի առնել, թե վերը նշված խմբերից որին է հասցեագրված ստեղծագործությունը, որպեսզի համապատասխան թարգմանական սկզբունք ընտրի: Օրինակ՝ պատանիները կարող են հեշտությամբ տարբերակել օտար մշակույթի տարրերը և նրանց մասին տեղեկություններ ստանալ ուրիշ աղբյուրներից: Իսկ ավելի փոքրերի համար պետք է հնարավորիս հասկանալի փոխանցել այդ յուրահատկությունները, փոխանցել այնպես, որ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները թարգմանվածքի մեջ լինեն:

Մանկական թարգմանական գրականությունը մեծ ազդեցություն ունի ժողովրդի մշակույթի վրա: Ժամանակակից հաղորդակցումը ստիպում է, որ երեխան մտնի բազմամշակութային տարբեր կապերի մեջ: Իսկ այդ գործընթացը օգնում են իրագործել նաև մանկական գեղարվեստական գրականության թարգմանիչները: Թարգմանական գրքերի միջոցով երեխաները ծանոթանում են այլ երկրների և ժողովուրդների պատմությանը, մշակույթին, սովորում են հանդուրժող լինել, սիրել և գնահատել ուրիշներին: Բացի վերը նշվածներից՝ մանկական գեղարվեստական գրականության միջոցով ձևավորվում և ամրապնդվում են հասարակության բարոյական և լեզվական նորմերը: Այսինքն՝ մանկական թարգմանական գրականությունը հասարակության արժեհամակարգի կազմավորման գործոններից մեկն է (Карпухина, 2015, с. 248): Անցյալ դարում ռուսական մանկական թարգմանական գրականության տարածման հարցում նկատվում էր մի պարադոքս՝ շատ արձակագիրներ և բանաստեղծներ (Կ. Չուկովսկի, Ս. Մարշակ, Բ. Ջախոդեր, Ն. Դեմուրովա և այլք) սկսում են զբաղվել թարգմանությամբ, այդ թվում նաև մանկական գրականության: Բայց, չգիտես ինչու, մանկական գրականությունը նախատեսված էր մասսայական ընթերցողի համար, և հետագոտողները շատ հաճախ այն դասում էին այսպես կոչված *ցածր* գրականության շարքում, ինչպիսիք են դետեկտիվը, սիրավեպերը, գիտական ֆանտաստիկան և այլն: Բայց մանկական ստեղծագործությունները մեր օրերում արդեն մեծ հետաքրքրություն են առաջացնում: Թե՛ արևմտյան, թե՛ ռուսական լեզվաբանական և գրականագիտական աշխատություններում այդ գրքերը և դրանց թարգմանության խնդիրները վաղուց դարձել են ուշադիր քննության առարկա (Карпухина, 2012, с. 18):

Ներկայումս Հայաստանում բազմաթիվ մանկական թարգմանական գրքեր են լույս տեսնում: Միայն 2023 թվականին «Անտարես» հրատարակչությունում թարգմանվել է մոտ տասը մանկական գիրք, իսկ «Չանգակում»՝ տասնյոթ: Նախորդ տարիներին լույս տեսածները ավելի շատ են: Նույնը չի կարելի ասել

թարգմանությունների որակը քննող աշխատանքների մասին: Մանկական գրականության թարգմանության խնդիրները միշտ էլ հուզել են մասնագետներին: Շատ առումներով դրանք ընդհանուր թարգմանական խնդիրներ են, բայց մանկական գրականության թարգմանությունը ունի նաև իր առանձնահատկությունները: Այդ հարցով զբաղվող թարգմանաբանները մի քանի հիմնական դժվարություններ են նշում, որոնցից են գեղարվեստական պատկերի, հուզականության, հատուկ և խոսուն անունների, իրակությունների, բառախաղերի թարգմանությունը: Խնդիրները իրականում ավելի շատ են, բայց մենք կփորձենք քննել դրանցից մի քանիսը: Վերլուծությունները կկատարենք ըստ Ալան Ալեքսանդր Միլնի «Վինի Փու արջուկը» A.A. Miln «Winni-The-Pooch and All, All, All» (Miln, 1992) հեքիաթի հայերեն երկու թարգմանությունների՝ համեմատելով նաև ռուսերեն տարբերակների հետ: Հայերեն առաջին թարգմանությունը լույս է տեսել 1972 թ., վերահրատարակվել 1988-ին: Թարգմանիչը գրող Վահագն Գրիգորյանն է: Թարգմանությունը կատարվել է Բ. Զախոդերի ռուսերեն թարգմանությունից: Դա կարելի է կոստել նաև վերնագրից՝ «Վինի-Թուփը և բոլոր-բոլորը» (Գրիգորյան, 1988): Խորհրդային շրջանում միջնոդ լեզվից՝ ռուսերենից, կատարված թարգմանությունները շատ տարածված էին: 2018թ. բնագրից թարգմանել է բանասեր, լեզվաբան Ալվարդ Զիվանյանը՝ «Վինի Փու արջուկը» վերնագրով: Բնագրից թարգմանելը արդեն գովելի փաստ է: Ռուսերեն թարգմանությունները բազմաթիվ են և բազմազան, թարգմանական տարբեր սկզբունքներով կատարված: Առայսօր ռուսական իրականության մեջ ամենակարդացվողը և տարածվածը մանկագիր, թարգմանիչ Բորիս Զախոդերի ազատ թարգմանությունն է՝ «Вини-Пух и Все-Все-Все» վերնագրով՝ կատարված 1960 թվականին (Заходер, 2003): Անշուշտ, Զախոդերի թարգմանության տարածմանը նպաստեց նաև համանուն մուտֆիլմը, որը նկարահանվել է ըստ նրա թարգմանության և շատ սիրվեց մանուկների կողմից: Մոտ երեսուն տարի Զախոդերի թարգմանությունը եղել է միակը: Հետո միայն լույս է տեսել թարգմանիչ Վիկտոր Վեբերի՝ բնագրին բավականին հարազատ թարգմանությունը (Вебер, 1999): Շատ ինքնատիպ տարբերակ են առաջարկել բանասեր, փիլիսոփա Վադիմ Ռուդնևը և Տատյանա Միխայլովսկայան. թարգմանության հետ ներկայացրել են գիտական մի ուսումնասիրություն՝ հոգեբանական վերլուծությունների ենթարկելով հերոսներին (Руднев, 2020): Մեզ համար հիմնականում քննության նյութ է դարձել Բ. Զախոդերի թարգմանությունը:

Խոսուն անուններ

Մանկական գրականության թարգմանության դժվարություններից մեկը խոսուն անունների փոխանցումն է, որոնք հաճախ են կիրառվում մանկական գրականության մեջ, և որոնք միանգամից որոշակի վերաբերմունք են առաջացնում հերոսի նկատմամբ: Վերջինս առնչվում է նաև հեքիաթի վերնագրին:

Անգլերենում **Winni** անվան և **Pooh** մականվան միջև գործածվում է the նախդիրը (**Winni-The-Pooh**), ինչպես սովորաբար լինում է անձնանունների դեպքում: **Pooh** բառի **h** հնչյունը չի արտասանվում, և այդ անունը հանգավորվում է **who** կամ **do** բառերի հետ, այսինքն՝ արտասանական ներդաշնակություն է ստեղծվում: Ռուսական իրականության մեջ, շնորհիվ թարգմանիչ Ջախոդերի, բավականին բնականոն ձևով մտել է **Пyx** տարբերակը: Հաջողված է նաև այն պատճառով, որովհետև այդ բառի մեջ ակնարկ կա գլխավոր հերոսի փամփիկիկության և թմբիկիկության մասին: Բայց Ջախոդերը այն նաև *հարմարեցնում է բնագրին՝ գործածելով իբրև ձայնարկություն*. «Если ему на нос садилась муха, ему приходилось сдувать ее: «Пyx! Пyx!»» (Заходер, 2003, с. 18):

Ա. Ջիվանյանը թարգմանել է **Վինի Փու**՝ հիմք ունենալով հեղինակի հետևյալ բացատրությունը: Անվան առաջին մասը՝ **Վինին**, նրան է անցնում ժառանգության կարգով Լոնդոնի կենդանաբանական այգում բնակվող Վինի արջի քոթոթից, որին այսպես է կոչել նախկին տերը՝ ի պատիվ հայրենի Վինիփեզ քաղաքի: Անվան երկրորդ մասը՝ **Փուն**, երկու բացատրություն ունի: Այն փոխառնված է Փու կարապի անունից, որը կենդանաբանական այգու բնակիչ է» (Ջիվանյան, 2008, էջ 7): Մյուս փաստարկը ճանճերին քշելիս համանուն ձայնարկության գործածությունն է: Չենք կարծում, թե ճիշտ ընտրություն է: Նախ **Փու** բառը անբարեհունչ է, մանավանդ, երբ հոլովվում է **Փուի, Փուին, Փուից**: Թարգմանիչը պետք է հաշվի առներ մեր լեզվի այս առանձնահատկությունը: Բացի այդ՝ բառն ունի բացասական իմաստ: Էդ. Աղայանի բառարանում հետևյալ կերպ է բացատրված. «Արտահայտում է արհամարհանք՝ նախատինք՝ զգվանք՝ թյու նշանակությամբ»: Իսկ արջուկը հեքիաթի գլխավոր հերոսն է՝ ինքնատիպ, տարօրինակություններով, բայց դրական և սիրված: Վահագն Գրիգորյանը արջուկին անվանել է **Վինի Թուխ**՝ ակնարկելով նրա գույնը: Ճիշտ է, թարգմանիչը շեղվել է բնագրից, բայց **թուխ** բառը ավելի բարեհունչ է: Հեքիաթի հերոսներից մեկի՝ իշուկի անունը բոլոր թարգմանիչները **Իա** են փոխանցել, բացի Ջիվանյանից: Վերջինիս թարգմանությունում այդ հերոսի անունը **Իյոր** է, որովհետև «անգլերենում

նմանակում է կենդանու արձակած ձայնը» (Ջիվանյան, 2008, էջ 7): Բայց հեքիաթը կարդալու են հայ մանուկները և նրանց համար **Իյոր**-ը իշուկի արձակած ձայնը չէ: Ալվարոյ Ջիվանյանը լավ է տիրապետում անգլերենին, և նրա կատարած թարգմանությունը շատ մոտ է բնագրին Թարգմանվածքում չկան բաց թողնված հատվածներ, ազատ թարգմանված մասեր, ինչպես Վ. Գրիգորյանի տարբերակում: Բայց համարժեք թարգմանությունից երբեմն տուժում է հայերենը: Ջիվանյանը տառադարձության սկզբունքին է դիմել նաև երկու անհասկանալի արարածների անունները թարգմանելիս, որոնց բացատրությունը տալիս է տողատակում, ինչպես՝ **հեֆալումփ**՝ փղանման սարսափելի երևակայական էակ, անգլերեն **elephant** բառի մանկական աղավաղած արտասանությունը (Ջիվանյան, 2008, էջ 31) և **վուզել - վիզել**՝ մտացածին էակ, առաջացել է **veasel**՝ աքիս (փոխաբերական իմաստով՝ խաբեբա) և **bamboozle**՝ խաբել, մոլորեցնել, բառերի միացումից (Ջիվանյան, 2008, էջ 42): Վ. Գրիգորյանը **հեֆալումփը** թարգմանել է **փղածի**, իսկ **վուզել - վիզելը** դարձրել է **բորո-բերո** (Գրիգորյան, 1988, էջ 32): Էոնեստ Հովարդ Շեփարդը, ով գրքի առաջին նկարազարդողն էր, **հեֆալումփին** պատկերել է փղի նմանությամբ: Իմիջիայլոց, Շեփարդի նկարազարդումներով է լույս տեսել Ջիվանյանի թարգմանությունը: Զախոդերը ևս նոր բառ է ստեղծել՝ **Слонопотам**:

Մի փոքրիկ երկխոսություն.

«...I saw a **Heffalump** to-day, Piglet. What was it doing? — asked Piglet. Just lumping along — said Christopher Robin». (Miln, 1992, p. 56),

- Знаешь, Пятачок, а я сегодня видел **Слонопотама**...

- «А чего он делал?» — спросил Пятачок. <...>

- «Ну просто слонялся», — сказал Кристофер Робин. (Заходер, 2003, с. 47)

- Խոզու՛կ, այսօր **հեֆալումփ** եմ տեսել:

- Ի՞նչ էր անում, - հարցրեց խոզուկը:

- Իր համար լմփլմփալով գնում էր, - ասաց Քրիստոֆեր Ռոբինը: (Ջիվանյան, 2008, էջ 31)

- Դնչիկ, գիտես, ես այսօր տեսա **Փղածին**:

- Իսկ ի՞նչ էր նա անում, - հարցրեց Դնչիկը:

- Պարապ-սարապ թափառում էր, - ասաց Քրիստոֆեր Ռոբինը: (Գրիգորյան, 1988, էջ 29)

Ինչպես տեսնում ենք, նույն բառերը թարգմանելիս տարբեր սկզբունքներ են կիրառվել՝ տառադարձում և նորաբանություն: Անշուշտ, տառադարձումը նպաստում է էկզոտիզմի և խորհրդավորության փոխանցմանը: Սակայն այս դեպքում, կարծում ենք, ավելի ընդունելի է

դիպվածային նորաբանությունների կիրառությունը, որովհետև վեցից ութ տարեկան երեխայի համար տողատակում նման բացատրություններ կարդալը կամ լսելը բավականին բարդ է և կարող է նրա ուշադրությունը շեղել հեքիաթից: Իսկ այդ տարիքում նրանք դժվար են կենտրոնանում: Այդ մասին Վ. Ն. Կոմիսարովը գրել է. «Որպեսզի լիարժեք թարգմանություն ստացվի, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հեղինակի ոճի առանձնահատկություններին, տեքստի հասցեատիրոջը, ինչպես նաև վերջիններիս կենսափորձին և գիտելիքներին» (Комиссаров, 1990, с. 40-41): Սամուիլ Մարշակը, որը նշանավոր մանկագիր էր և թարգմանիչ, կողմ էր ազատ թարգմանություններին: Նրա համար կարևորը թարգմանությունը երեխայի մայրենի լեզվին մոտեցնելն էր: Եվ այդ պատճառով Մարշակը իր թարգմանություններում շատ հաճախ փոխել է ոչ միայն բանաստեղծության առանձին հատվածներ, այլ նաև որոշ կերպարներ: Օրինակ՝ «Տունը, որը կառուցել էր Ջեկը» հանրահայտ բանաստեղծության հերոսները բնագրում ածիկը, առնետը, կատուն, շունը, կովը, աղջիկը, թափառաշրջիկը, պաստորը և ֆերմերն էին, իսկ Մարշակի թարգմանությունում դրանք դարձել են ցորեն, երաշտահավ, կատու, շուն, կով, պառավ, հովիվ և երկու աքլոր: Այսինքն՝ ռուսական իրականությանը բնորոշ հերոսներ է ընտրել, որոնք ավելի ընկալելի են ռուս երեխաներին (Маршак 1925): Գեղարվեստական գրականության թարգմանության որակը պայմանավորված է նրանով, թե իր առջև ինչ նպատակներ է դնում թարգմանիչը: Օ. Վ. Պետրովան առանձնացնում է գեղարվեստական տեքստերի թարգմանության երեք նպատակ (Сдобников, Петрова, 2006, с. 371) :

1. Ծանոթացնել ընթերցողին գրողի ստեղծագործություններին, որոնք ընթերցողը չի կարողանում կարդալ: Այս դեպքում թարգմանիչը ձգտում է, որ թարգմանության ընթերցողը նույն գեղարվեստական տպավորությունը ստանա, ինչը ստանում է բնագրի ընթերցողը: Նա չի փոխանցում ազգային - մշակութային յուրահատկությունները, որպեսզի թարգմանությունը ընկալվի նույնքան բնական, որքան բնագիրը, որպեսզի կարդացողի ուշադրությունը չշեղվի իրեն անձանոթ իրականությունները հասկանալիս, քանի որ բնագրի ընթերցողը դրանք չի նկատում: Հնարավոր է, որ այս դեպքում ընթերցողը ճիշտ պատկերացում կազմի գրողի ստեղծագործական մեթոդի մասին, բայց հավաստի պատկերացում տվյալ մշակույթի մասին, որի կրողն է հեղինակը, նա ավելի շուտ չի ստանա:
2. Ծանոթացնել ընթերցողին այլ ժողովրդի մշակույթի առանձնահատկություններին, ցույց տալ ինքնատիպությունը: Այս դեպքում թարգմանիչը բոլոր հնարավոր միջոցներով աշխատելու է բացատրել

բնագրի բոլոր իրակությունները, մշակութային բոլոր առանձնահատկությունները, որոնց շրջանակներում ստեղծվել է տեքստը: Այս տեքստերում ինֆորմացիան շատ է, բայց ընթերցողը նույն տպավորությունը չի ստանա, ինչ բնագրի ընթերցողը: Ավելին, դա այն տպավորությունը չէ, ինչ կակնկալեր հեղինակը:

3. Ուղղակի ծանոթացնել ընթերցողին գրքի բովանդակությանը: Կարելի է եզրակացնել, որ գեղարվեստական տեքստերի թարգմանության ժամանակ թարգմանիչը պետք է հաշվի առնի գեղարվեստական տեքստի առանձնահատկությունները և պետք է իր առջև ոչ թե մեկ խնդիր դնի, այլ պետք է համադրի բոլոր հասնելի թարգմանական հնարները՝ որակով թարգմանություն ստանալու համար:

Հուզականություն

Հուզականությունը, ինչպես նշել ենք, բնորոշ է մանկական գրականությանը: Դրա շնորհիվ վերջինս ավելի հետաքրքիր և ընկալելի է դառնում երեխաների համար: Այդ երանգավորումը կարող է լինել թե՛ դրական, թե՛ բացասական: Ուստի՝ թարգմանության ժամանակ շատ կարևոր է ճիշտ փոխանցել այս առանձնահատկությունը ևս: Նման բառապաշարը թարգմանելիս ճիշտ կլինի առաջնորդվել սեփական լեզվի առանձնահատկություններով: Քննենք մեկ օրինակ: Հեքիաթի հերոսը ծառի վրայից ընկնելիս գոչում է **Oh, help!** Այս բառի մեջ խտացված զգացմունքներ կան՝ վախ, անօգնականություն, մոլորվածություն:

- **Oh, help!**, - said Pooh, as he dropped ten feet on the branch below him (Miln, 1992, p. 6):
- **Мама!** - крикнул Пух, пролетев добрых три метра вниз и чуть не задев носом толстую ветку (Заходер 2003, 18):
- **Մայրի՛կ**, - բացականչեց Թուխը, մի երեք մետր ցած ընկնելով և քիթը խփելով մի հաստ ճյուղի (Գրիգորյան, 1988, էջ 19):
- **Վա՛յ, հասե՛ք**, - կանչեց Փուն, և մի տասը ոտնաչափ ընկնելով՝ խփվեց ներքևի ճյուղին (Զիվանյան, 2008, էջ 20):

Հաղորդակցման նույն ազդեցությունը փոխանցելու համար ռուս թարգմանիչը՝ Զախոդերը, ընտրել է ռուսերենին ավելի հատուկ արտահայտություն՝ **Мама**, որպեսզի հաղորդի օգնություն ակնկալող փոքրիկ արջուկի հույզերը: Կարծում ենք, որ նույնքան համոզիչ է Զիվանյանի տարբերակը՝ **Վա՛յ, հասե՛ք**, որով հաջողվել է փոխանցել հերոսի ապրումները: Իսկ Գրիգորյանը, քանի որ ռուսերենից է թարգմանել, ընտրել է **Մայրիկ** տարբերակը:

Հեքիաթի գլուխներից մեկում Վինի արջուկը շատ ուրախ մի երգ է քրթմնջում, որը բաղկացած է միայն ձայնարկություններից: Զիվանյանը

թարգմանել է անգլերենին բնորոշ ձայնարկություններով և այդ պատճառով այն հայերեն բնական չի հնչում, հայ երեխան այն երգել կամ որևէ կերպ վերարտադրել չի կարողանա: Ինչպես՝

Թրա-լա-լա՛, թրա-լա-լա՛,
Թրա-լա-լա՛, թրա-լա-լա՛,
Ռամ-թամ-թիդլ-ամ-թամ,
Թիդլ-ի՛դլ, թիդլ-ի՛դլ,
Թիդլ-ի՛դլ, թիդլ-ի՛դլ:

Ռամ-թամ-թամ-թիդլ-ամ (Ջիվանյան, 2008, էջ 34):

Վ. Գրիգորյանի տարբերակը ավելի ընդունելի է.

Տարա-տարա-տարա-րա՛,
Տրամ-պամ-պամ-տիրա-պամ-պա՛:
Տիրի-տիրի-տիրի-րի՛,

Տրամ-պամ-պամ-տիրի-պիմ-պի՛ (Գրիգորյան, 1988, էջ 30):

Նման հատվածները ռիթմիկ պիտի լինեն, որ երեխայի մոտ որոշակի տրամադրություն ստեղծեն:

Միլնի հեքիաթում, բացի վերը նշված երգերից, կան բանաստեղծական հատվածներ, որոնք *հորինում* է Վինին: Դրանք միտված են անգլիացի ընթերցողի հիշողության մեջ արթնացնելու բրիտանական մանկական պոեզիայից որոշակի պատկերներ՝ բանաստեղծ Էդուարդ Լիրի ոճով (Карпухина, 2015, с. 28): Այսինքն՝ հոգեհարազատ են բնագիրը կարդացող երեխաների համար: Այս հատվածները փոխանցելիս թարգմանիչները տարբեր մոտեցումներ են հանդես բերել: Վ. Ռուդնևը, օրինակ, պոստմոդեռնիստական տարր է մտցնում տեքստ. իր թարգմանած չափածո հատվածները հիշեցնում են Պուշկինի, Ախմատովայի, Վիսոցկու տեքստերը: Դրանով նա երգերը հորինողին՝ Վինի արջուկին օժտում է կոսմոպոլիտիզմով (Руднев, 2020): Վ. Վեբերը նույնիսկ ինքը չի թարգմանել, այլ այդ հատվածները *վստահել է* բանաստեղծուհի Նտալյա Ռեյնին: Վերջինս բնագրին բավականին համարժեք է թարգմանել (Вебер, 1999): Բորիս Ջախոդերը շատ ազատ է վարվել, բառացի թարգմանությունից հեռանալով՝ պահպանել է գեղարվեստականությունը: Անշուշտ, այստեղ մեծ դեր է խաղացել նրա՝ բազմաթիվ մանկական ստեղծագործությունների հեղինակ լինելը: Մեջբերենք քառատողերից մեկը՝ իր թարգմանություններով:

How sweet to be a Cloud Floating in the Blue! Every little cloud Always sings aloud (Miln, 1992, p. 22).

Բառացի այդ թարգմանությունը այսպես կհնչի.

Ինչ հաճելի է լինել ամպ՝ լողալով երկնքում, ամեն փոքրիկ ամպ միշտ երգում է բարձրաձայն:

Я Тучка, Тучка, Тучка, А вовсе не медведь, Ах, как приятно Тучке По небу лететь. (Заходер, 2003, с. 28)

Ինչպես երևում է օրինակից, թարգմանիչը գեղարվեստականության է հասել չափի, հանգի և կրկնությունների միջոցով: Կարծում ենք, բանաստեղծական հատվածների նման ազատ թարգմանությունը ամբողջովին արդարացված է: Ընդհանրապես ազատ թարգմանության մասին Բ. Ջախողերը հետևյալ կարծիքն է հայտնել. «Գոյություն ունի միայն մեկ ճանապարհ անթարգմանելին թարգմանելու համար, և դա ստեղծագործությունը նորովի գրելն է: Գրել այնպես, ինչպես կգրեր ինքը հեղինակը, եթե նա թարգմանվող լեզվով գրեր, տվյալ դեպքում ռուսերեն: Այսպիսով, թարգմանիչը փաստացի դառնում է համահեղինակ: Դա բնավ էլ չի խախտում հեղինակի իրավունքները, ոչ էլ նսեմացնում է նրա փառքը» (Заходер, 2003, с. 7):

Թե՛ Զիվանյանի, թե՛ Գրիգորյանի թարգմանությունները նման գեղարվեստականությամբ օժտված չեն.

Ամեն ամպ, ամեն ամպիկ
Գիտի երգն այս անուշիկ,
Եկեք լող տանք շարունակ

Երկնքում այս կապուտակ (Զիվանյան, 2008, էջ 28):

Ես Ամպիկ եմ, Ամպիկ, Ամպիկ,
Ոչ թե փոքրիկ թուփ արջուկ,
Ա՛խ, ինչ լավ է լինել Ամպիկ

Ու սավառնել երկնքում (Գրիգորյան, 1988, էջ 25):

Կոմիզմ

Մանկական ստեղծագործություններին բնորոշ է կոմիզմը, որի փոխանցումը շատ դժվար է, բայց անհրաժեշտ: Առանձնակի բարդություն է ներկայացնում Խոզուկի պապիկի, ավելի ճիշտ Խոզուկի կողմից հնարված պապիկի անվան թարգմանությունը: Վերջինս կոտրված մի տախտակի վրա գրված կիսաջնջված գրություն է՝ **Trespassers W.**, որը կրճատված ձևն է **Trespassers Will be prosecuted** արտահայտության, որի բառացի թարգմանությունը հետևյալն է. «**Նա, ով կներխուժի այս տարածք, կպատժվի դատական կարգով**»: Միլնը նպատակադրված է այս արտահայտությունը մտցրել իր ստեղծագործության մեջ, որպեսզի երեխաները կարդալիս ծնողներին խնդրեն բացատրել **trespasser** և **trespass** բառերի իմաստները: Վերը նշվածին ռուսերենում համապատասխանում է "**Посторонним вход запрещен**" արտահայտությունը, դրանից ելնելով պապիկի անունը Ջախողերը թարգմանել է **Посторонним В.** կամ **Посторонним Вилли**: Այս դեպքում պատահականությամբ համընկել են որոշ հնչյուններ, և

ստացվել է շատ հաջող թարգմանություն: "**Посторонним вход запрещен**" նախադասության հայերեն համարժեքն է **«Կողնակի անձանց մուտքն արգելվում է»** արտահայտությունը: Քանի որ Վ. Գրիգորյանը ռուսերենից է թարգմանել, ապա կոտրված տախտակի գրությունը դարձել **Կողմնակիանձանց Մ.**, իսկ պապիկի անունը՝ **Կողմնակիանձանց Մաքս**, որն էլ **Մաքսուելլ Կողմնակիանձանց** անվան կրճատ ձևն է:

Ա. Ջիվանյանը, ամենայն հավանականությամբ ծանոթ էր անգլերեն արտահայտության իմաստին և ծագմանը, այդ պատճառով էլ պապիկին տվել է **Ուիլ Օրինազանց** կամ **Ուիլյամ Օրինազանց** անունը: Կոմիզմը փոխանցված է, բայց պատահական գտնված ցուցանակի զավեշտը չի զգացվում:

Մանկական գրականության համար կարևոր են գեղեցիկ նկարագրությունները, գեղարվեստական պատկերները, որոնք նպաստում են երեխայի երևակայության զարգացմանը և գրական ճաշակի ձևավորմանը: Թարգմանիչը պարտավոր է դրանք փոխանցելու համար թարգմանական ճիշտ հնարներ գտնել: Կարիք չկա ավելորդ փոխաբերություններ, մակդիրներ, համեմատություններ մտցնելու. երեխաները դրանք չեն ընկալում: Եվ՝ Գրիգորյանին, և՛ Ջիվանյանին հաջողվել է իրենց թարգմանություններում գեղեցիկ պատկերներ ստեղծել: Համեմատենք մի փոքրիկ հատված.

Ալան Միլն - It was a fine spring morning in the forest as he started out. Little soft clouds played happily in a blue sky, skipping from time to time in front of the sun as if they had come to put it out, and then sliding away suddenly so that the next might have his turn. Through them and between them the sun shone bravely, and a copse which had worn its firs all the year round seemed old and dowdy now beside the new green lace which the beeches had put on so prettily (Miln, 1992, p. 48).

Ալ. Ջիվանյան - Գարնան պայծառ առավոտ էր: Փոքրիկ, փափուկ ամպերն ուրախ խաղում էին երկնքում՝ երբեմն արևից առաջ ընկնելով. ասես եկել էին հանգցնելու այն. ապա դանդաղ մի կողմ էին սահում, որ մյուս ամպերին ճանապահ տան: Ու ամպերով շրջապատված՝ արևը խիզախ շողում էր: Պուրակի եղևնիները կլոր տարին մուշտակները հագներից չէին հանել և հիմա նուրբ ու սիրուն կանաչ ժանյակներ հագած հաճարենիների կողքին խեղճ ու անշուք էին թվում (Ջիվանյան, 2008, էջ 53):

Գրիգորյան - Գարնանային հրաշալի առավոտ էր: Փոքրիկ թափանցիկ ամպիկները ուրախ խաղում էին կապույտ երկնքում: Նրանք մերթ լողում էին դեպի արևը, ասես ուզում էին ծածկել նրան, մերթ էլ շտապ -շտապ

հետ էին փախչում, որպեսզի մյուսներն էլ կարողանային խաղալ ու չարածիճություններ անել: Իսկ արևն ուրախ շողում էր՝ ոչ մի ուշադրություն չդարձնելով նրանց վրա, և սոճին, որ կլոր տարին հագից չէր հանել իր ասեղնավոր զգեստը, հին ու մաշված էր թվում նոր ու կանաչ ժանյակներով զուգված կեչու կողքին (Գրիգորյան, 1988, էջ 49):

Եզրակացություն

Ինչպես ցույց տվեց քննությունը, Ալան Միլնի հեքիաթի թարգմանությունները տարբերվում են իրարից, և պատճառը ոչ միայն առանձին բառերի կամ քերականական ձևերի ընտրությանն է, այլ նաև այն խնդիրների և նպատակների, որոնք իրենց առջև դրել են թարգմանիչները: Իսկ հիմնական խնդիրը հետևյալն է. կա՞մ թարգմանել բնագրին մոտ՝ փոխանցելով ազգային յուրահատկությունները, կա՞մ ավելի ազատ՝ շեշտը դնելով գեղարվեստականության պահպանման վրա: Ինչպես կարելի է դատել առանձին օրինակների քննությունից, մանկական գրականությունը թարգմանելիս ավելի ընդունելի է թարգմանության երկրորդ տեսակը, որովհետև փոքր հասակում մանուկների գիտելիքները սահմանափակ են, իսկ օտար մշակույթի տարրերը կարող են շեղել մանուկների ուշադրությունը ընթերցանությունից: Եվ ամենակարևորը. թարգմանության լեզուն պետք է մոտ լինի երեխայի մայրենի լեզվին:

Թարգմանության որակի վրա անշուշտ ազդում է նաև թարգմանիչների մասնագիտությունը: Վահագն Գրիգորյանը արձակագիր է, բազմաթիվ վեպերի և վիպակների հեղինակ: Նրա թարգմանությունը բնագրին հարազատ չէ, որովհետև ռուսերենից է թարգմանել, բայց գրողի գրիչը զգացվում է: Ալվարո Զիվանյանը լեզվաբան է, անգլերենի մասնագետ, թարգմանիչ և դրանով է բացատրվում բնագիրը ճշգրտությամբ փոխանցելու նրա ձգտումը: Իսկ ինչպես նշել ենք, Բորիս Զախոդերը նախևառաջ մանկական գրող էր, ով ստեղծել էր մանկական բազմաթիվ բանաստեղծություններ, հեքիաթներ և պատմվածքներ, այդ պատճառով նրա Вино-Пух-ը մանկական հեքիաթ է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Աղայան Է. Բ. (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1615 էջ:
Aghayan E'. B. (1976), Ardi hayereni bacatrakan bar'aran, «Hayastan» hratarakchowt'yown, Erevan, 1615 e'j: (In Armenian)
2. Ասմանգովյան Հ. Ա., Հովհաննիսյան Մ.Ի. (1984), Անգլերեն-հայերեն բառարան «Հայաստան» հրատարակչություն, Երևան:
Asmangowlyan H. A., , Hovhannisyan M. I. (1984), Angleren-hayeren bar'aran «Hayastan» hratarakchowt'yown, Erevan: (In Armenian)
3. Միլն Ա.Ա.(2018), Վինի Փու արջուկը, թարգմ. Ալվարդ Զիվանյան, Երևան:
Miln A. A.(2018), Vini P'ow arjowky', t'argm. Alvard Jivanyan, Erevan: (In Armenian)
4. Միլն Ա. Ա. (1988), Վինի-Թուխը և բոլոր-բոլորը, թարգմ. Վահագն Գրիգորյան, Երևան:
Miln A. A. (1988), Vini-T'owxy' & bolor-bolory', t'argm. Vahagn Grigoryan, Erevan: (In Armenian)
5. Арзамасцева И. Н. Детская литература: учебник для студ. высш. пед. учеб. заведений / И. Н. Арзамасцева, С. А. Николаева. - 8-е изд., испр. - М.: Издательский центр «Академия», 2012. - 576 с.
Arzamasceva I. N. Detskaja literatura: uchebnik dlja stud. vyssh. ped. ucheb. zavedenij / I. N. Arzamasceva, S. A. Nikolaeva. - 8-e izd., ispr. - M.: Izdatel'skij centr «Akademija», 2012. - 576 s. (In Russian)
6. Бартель В. В. Текст детского художественного произведения как культурологический портрет эпохи: диссертация ... д-ра культурологии / В. В. Бартель. - Саратов, 2002. - 163 с.
Bartel' V. V. Tekst detskogo hudozhestvennogo proizvedenija kak kul'turologicheskij portret jepohi: dissertacija ... d-ra kul'turologii / V. V. Bartel'. - Saratov, 2002. - 163 s. (In Russian)
7. Вебер В., Милн А. «Винни-Пух» / «Winnie-the-Pooh» = Винни-Пух и его друзья (1999, повесть)
Veber V., Miln A. «Vinni-Puh» / «Winnie-the-Pooh» = Vinni-Puh I ego druz'ja (1999, povelst') (In Russian)
8. Заходер Б. В., Милн. А. А. (2003). Винни-Пух и Все-Все-Все. - М., 285 с.
Zahoder B. V., Miln. A. A. (2003). Vinni-Puh I Vse-Vse-Vse. - M., 285 s. (In Russian)

9. Карпухина В. Н. (2012). Роль детской художественной литературы в институализации общества // Роль иностранных языков в институализации российского общества: Материалы междунар. науч.-практ. конф., Барнаул, 31 мая 2012 г. / Отв. ред. и сост. В. А. Скубневская. Барнаул, с. 17-21.
Karpuhina V. N. (2012). Rol' detskoj hudozhestvennoj literatury v instiutualizacii obshhestva // Rol' inostrannyh jazykov v instiutualizacii rossijskogo obshhestva: Materialy mezhdunar. nauch.-prakt. konf., Barnaul, 31 maja 2012 g. / Отв. red. i sost. V. A. Skubnevskaja. Barnaul, s. 17-21. (In Russian)
10. Карпухина В. Н. (2015). Дискурс детской художественной литературы в процессах институализации общества, Сибирский филологический журнал. № 2,248.
Karpuhina V. N. (2015). Diskurs detskoj hudozhestvennoj literatury v processah instiutualizacii obshhestva, Sibirskij filologicheskij zhurnal. № 2,248. (In Russian)
11. Карпухина В. Н. (2015). Дискурс детской художественной литературы в процессах институализации общества, Сибирский филологический журнал. № 2 © В. Н. Карпухина, 24.
Karpuhina V. N. (2015). Diskurs detskoj hudozhestvennoj literatury v processah instiutualizacii obshhestva, Sibirskij filologicheskij zhurnal. № 2 © V. N. Karpuhina, 24. (In Russian)
12. Комиссаров, В. Н. (1990). Теория перевода (лингвистические А. Николаева. - 3-е изд., перераб. и аспекты): - с. 40-41
Komissarov, V. N. (1990). Teorija perevoda (lingvisticheskie A. Nikolaeva. - 3-e izd., pererab. i aspekty): 1990. - s. 40-41 (In Russian)
13. Маршак Самуил Яковлевич (1925). Дом, который построил Джек: английские детские песенки. Izdatel'stvo" Hudožnik RSFSR.
Marshak Samuil Jakovlevich (1925). Dom, kotoryj postroil Dzhek: anglijskie detskie pesenki. Izdatel'stvo" Howdožnik RSFSR. (In Russian)
14. Руднев В. (2020). Винни-Пух и философия обыденного языка. Учебное пособие, Академический проект.
Rudnev V. (2020). Vinni-Puh i filosofija obydenного jazyka. Uchebное posobie, Akademicheskij proekt. (In Russian)
15. Сдобников В. В., Петрова О. В. (2006). ТЕОРИЯ ПЕРЕВОДА. (Коммуникативно-функциональный подход), Восток-Запад, с. 44.
Sdobnikov V. V., Petrova O. V. (2006). TEORIJа PEREVODA. (Kommunikativno-funkcional'nyj podhod), Vostok-Zapad, s.44(In Russian)
16. Miln A. A. (1926). «Winni-The-Pooh and All, All, All».

АНАИДА МОВСИСЯН - ОБ ОСОБЕННОСТЯХ ПЕРЕВОДА ДЕТСКОЙ ЛИТЕРАТУРЫ

Ключевые слова: Алан Милн, перевод, говорящие имена, эмоциональность, сказка, комизм, художественность, эквивалентность

На сегодняшний день в свет выходит множество переводных произведений детской литературы, что заставляет ученых периодически обращаться к проблемам перевода. Детская литература характеризуется своими особенностями, обуславливающими переводческие трудности и требующими особого внимания. В статье рассматриваются некоторые принципы перевода говорящих имен, передачи эмоциональности, художественности и комизма текста. Анализ основан на армянском и русском переводах сказки Алана Милна “Винни-Пух” / A.A. Miln “Winni-The-Pooh and All, All, All”/.

Сравнительный анализ переводов показывает, что при переводе указанного произведения предпочтительнее сохранить художественность, даже в ущерб точности, поскольку детьми такие переводы воспринимаются лучше.

ANAIDA MOVSISYAN - SOME CHALLENGES OF TRANSLATING CHILDREN'S LITERATURE

Key words: Alan Milne, translation, names, emotionality, fairy tale, comism, artistry, equivalence

Many children's books are being translated today, and there arises a need to address specific challenges in the translation process. Children's literature possesses unique characteristics that can create difficulties or demand particular attention during translation.

This article explores key principles in translating children's literature, including the handling of character names, the conveyance of emotionality, artistry, and humor in the text. The analysis focuses on the Armenian and Russian translations of A.A. Milne's Winnie-the-Pooh and All, All, All.

A comparative analysis of these translations reveals that prioritizing artistry over strict accuracy often results in translations that resonate more effectively with children.

Ներկայացվել է՝ 22.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 15.11.2024 թ.

ԱՆԳԼԵՐԵՆ «ՀԱԳՈՒՍՏ» ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԻ
ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆ ՄՈՒՍԵՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում վեր են հանվում անգլերենի **clothes/հագուստ** բառիմաստային խմբի լեզվամշակության առանձնահատկությունները: Ուսումնասիրությունը նպատակ ունի՝

- վերհանել և վերլուծել անգլերենի **clothes/հագուստ** հոմանիշային շարքը, շարքում ընդգրկված գոյականների իմակային կազմը, հնչյունական և բառակազմական առանձնահատկությունները՝ իմաստաբանական, ստուգաբանական և լեզվամշակության մոտեցումների և մեթոդների համատեղությամբ, ըստ անհրաժեշտության նաև հայերենի զուգադրությամբ,
- դուրս բերել **clothes/հագուստ** բառիմաստային խմբի կենտրոնական բառը՝ նույնացուցիչը, որի միջոցով բառարաններում սահմանվում են բառիմաստային խմբի մնացյալ անդամները, տարանջատել բառիմաստային խմբի միջուկն ու եզրային շերտերը, դրանցում արտացոլված ինքնության ցուցիչները:

Ելնելով ուսումնասիրության նպատակից և լեզվական նյութի բնույթից՝ կիրառվել են *բառարանային համադարած ընտրանքի, լեզվաբանական զննման և նկարագրման, զուգադրական, բաղադրիչային վերլուծության և ազատ զուգորդումների մեթոդները*:

Հիմնաբառեր՝ *հագուստ, բառիմաստային խումբ, միջուկ և եզրային շերտ, իմակ, ինքնություն, լեզվամշակույթ*

Ներածություն

Բառիմաստային հարացույցի հիմնական միավորներից մեկը՝ բառիմաստային խումբը, հաճախ սխալմամբ նույնականացվում է իմաստային դաշտի հետ: Բառիմաստային դաշտը լեզվի բառամթերքի ամենամեծ իմաստային խումբն է և ներառում է բառիմաստային խմբեր,

թեմատիկ խմբեր¹, ինչպես նաև տարբեր խոսքի մասեր: **Բառիմաստային խմբում** միավորվում են մեկ խոսքի մասը ներկայացնող և բառիմաստում² ընդհանուր բաղադրիչներ ունեցող բառերը (Apresyan, 1995, Greimas, 1987): Բառիմաստային խումբը դիտարկվում է որպես ժամանակակից իմաստաբանության առանցքային հասկացություն և բառիմաստային հարացույցի հիմնական միավոր, և դրա ուսումնասիրությունը թույլ է տալիս վերհանել մշակութային շերտերն ու ինքնության ցուցիչները՝ ուսումնասիրվող լեզվամշակույթում:

Բառիմաստային խումբը վերլուծելիս հարկ է վերհանել նրա **կենտրոնական բառը՝ նույնացուցիչը**, որի միջոցով բառարաններում սահմանվում են բառիմաստային խմբի մնացյալ անդամները: Իսկ բառիմաստային խմբի կառուցվածքային առանձնահատկություններն առավել ակնառու են դառնում բառիմաստային խմբի միջուկն ու եզրային շերտերը տարանջատելիս: **Միջուկը** կազմում են այն բառերը, որոնք ձևաբանորեն և իմաստաբանորեն պարզ են, բայց միևնույն ժամանակ առավելագույնս են արտացոլում բառիմաստային խմբում ընդգրկված բառերի իմաստները, իսկ **եզրային շերտում** ընդգրկվում են այն բառերը, որոնցում հնարավորինս վառ են արտահայտված մշակութային առանձնահատկությունները և բառի արտահայտչական իմաստները (Դաֆ, 1998):

Անգլերեն **clothes** գոյականի հոմանիշային շարքը **հագուստ** լեզվական նշանի³ ամենաձավալուն բառիմաստային խումբն է, ուստի դրա ուսումնասիրությամբ կարելի է լավագույնս դուրս բերել բրիտանական լեզվամշակույթում տվյալ նշանի իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: Հիմք ընդունելով անգլերեն բացատրական, հոմանիշների, ինչպես նաև ստուգաբանական բառարանները⁴ վեր են հանվել **clothes** գոյականի հոմանիշային շարքը, հոմանիշների

¹ Թեմատիկ խումբը միավորում է բառերը՝ հիմք ընդունելով առարկաների, հասկացությունների կամ երևույթների արտալեզվական ընդհանրությունները: (Apresyan, 1995) **Հագուստ** թեմատիկ խումբն անգլերենում ներկայացված է ընդարձակ բառապաշարով, քանի որ հագուստի բազմաթիվ պարագաների և դրանց տեսակների անվանումներն անգլերենի բառապաշարի զգալի մասն են:

² Բառիմաստում դրսևորված իմակները գտնվում են որոշակի աստիճանակարգային հարաբերության մեջ: **Իմակը** նշանակության նվազագույն միավորն է, իսկ **իմոյթը**՝ իմակների ամբողջությունը: (Greimas, 1987)

³ Հիմք ենք ընդունել լեզվական նշանի սոսուրյան մեկնաբանումը (Սոսուր, 2008, էջ 32), երբ բառը համընկնում է նշանակիչի հետ, տվյալ դեպքում՝ **հագուստ** բառի հետ, որի նշանակյալը **հագուստ** բառի իմաստն է՝ իր իմակների բազմությամբ:

⁴ Բառարանները ներկայացված են Գրականության ցանկում:

բառարանային սահմանումները, անհրաժեշտության դեպքում՝ զուգադրելով հայերենի հետ:

Clothes/հագուստ հոմանիշային շարքի լեզվամշակութային վերլուծությունը

Անգլերեն **clothes** բառի համար բառարաններից և էլեկտրոնային շտեմարաններից դուրս է բերվել հետևյալ հոմանիշային շարքը՝ **clothing, wear, wearables, weeds, dress, gear, habits, get-up, outfit, costume, threads (slang), wardrobe, ensemble, garments, toilet, duds (infm.), apparel, clobber (slang), attire, garb, togs (infm.), toggery, vestment, glad rags (infm.), raiment (archaic, poetic), vesture, schmutter (slang), rig, rigging, rigout (infm.):**

Նշված հոմանիշային շարքում նկատվում են նույնարմատ բառեր՝ **clothes-clothing, wear-wearables, togs-toggery, vestments-vesture-vestiary, rig-rigging-rigout:** Նույնարմատ **clothes** և **clothing** բառերի հիմքում ընկած **cloth** բառը, սերելով հին անգլերենի **clað, clap** բառից՝ «կտոր, առագաստ, կտորե ծածկոյթ, հյուսվածք կամ թաղիք՝ մեկին ծածկելու համար» նշանակությամբ, ստացել է նաև «հագուստ» իմաստը նախագերմաներենից՝ ***kalithaz** (նաև հին ֆրիզ. **klath** «կտոր» հոլ. **kleed** «հագուստ, զգեստ», գերմ. **kleit, kleid** «հագուստ»): Կիրառվել է հոգնակի թվով՝ **claðas - cloths** և միայն XIX դարում է ստացել **clothes** բառածևը՝ **cloths** ձևից տարբերվելու համար: Ինչ վերաբերում է **clothing** բառին, ապա այն սկզբում եղել է բայական գոյական՝ **clothe** բառից, այն է՝ *հագուստ հագնելը*՝ այս իմաստով մոտենալով **toilet** (*հագուստ հագնելը, պատրաստվելը*) բառին, որն ունի մեկ հավելյալ իմակ՝ *հատուկ պատրաստվելը*: XIII դ. արդեն **clothing** բառը կիրառվում է *հագուստ, հանդերձանք* նշանակությամբ:

Հաջորդը նույնարմատ **wear-wearables** զույգն է, որի նշանակության մեջ շեշտադրված է հագուստը **կրելու** իմակը, այն է՝ ցանկացած բան, որ նախատեսված է կրելու կամ մարմինը ծածկելու համար՝ հին անգլ. **werian** *ծածկել, հագնել, քողարկել* բայից (սկզբնաղբյուրը՝ հին գերմ. **werian**, որը **werian** *կանխել, պաշտպանել* բայի համանունն է, գոթ. **warjan**): Հետագայում այս բառը ստացել է նաև *հատուկ հանդերձ, հատուկ նշանակության հագուստ* իմակը, որի հիմքով էլ ստեղծվել են բազմաթիվ բառեր՝ **underwear, outerwear, neckwear, sportswear, sleepwear, beachwear, nightwear, shapewear, dancewear** և այլն:

Հարկ է նշել, որ անգլերեն **clothes** բառիմաստային խմբում առկայանում է հագուստի **կրոնական նշանակության հագուստ** իմակը: Եկեղեցական աստիճանակարգման ցուցիչ են **vestment** և **vesture**

նույնարմատ բառերը, որոնք **vest** բառի ածանցյալներն են: **Vest** (անթև բաճկոն) բառը մեր ուսումնասիրած բառարաններում ամրագրված չէ որպես **clothes** բառի հոմանիշ, հավանաբար այն պատճառով, որ առավելապես ընկալվում է որպես հագուստի առանձին պարագա: Ենթադրվում է, որ **vestment, vesture, vestiary** և **wear, wearables** հոմանիշները ծագում են միևնույն նախահնդեվրոպական արմատից ***wes-** *հագնել, ծածկել /to clothe/*: Հայերենում եկեղեցական հագուստի անվանումներ են **սքեմ, շուրջառ, փիլոն** բառերը (Մալխասեանց, 1944, էջ 1685, 2047, 2262) :

Անգլերեն **vest** բառի մեկ այլ ածանցյալ **vestiary** բառը Merriam-Webster բառարանը նշում է որպես **clothes** բառի հոմանիշ, սակայն մենք այն չենք դիտարկում այս բառիմաստային խմբում, քանի որ միայն **vestiary** ածականն է արտահայտում **հագուստի վերաբերություն**, մինչդեռ **vestiary** գոյականն ունի *հագուստ պահելու կամ հագնվելու համար նախատեսված սենյակ, զգեստապահարան* նշանակությունը, ինչպես **vestry** բառը:

Անգլերեն **dress** բառը հիմնականում թարգմանվում է հայերեն **զգեստ** բառով. երկուսն էլ ներառված են **հագուստի** հոմանիշների բառարանային սահմանումներում և դրանցով կազմվում են նոր բառեր ու բառակապակցություններ: Երկուսում էլ արտահայտված է *հարուկ հանդերձ, հարուկ նշանակության հագուստ* իմակը, սակայն եթե հայերեն **զգեստ** բառն ունի **տոնական կամ սգո հագուստ** իմակը, ապա անգլերեն **dress** բառի համապատասխան իմակն առավել ընդգրկուն է՝ *covering, adornment, or appearance appropriate or peculiar to a particular time (ծածկույթ, զարդարանք կամ որոշակի ժամանակին համապատասխան կամ բնորոշ տեսք)*, և այստեղ արտահայտված է նաև *ժամանակային վերաբերություն*: Փոխարենն անգլերենում առանձին բառույթով է ներկայացված **սգո հագուստ** իմակը՝ **weeds** (*1.զգեստ, որը կրում են ի նշան սգո (ինչպես այրու հագուստը, 2.սև կրեպե ժապավեն, որը ամրացնում են տղամարդու գլխարկին՝ ի նշան սգո)*), որն ունի նաև սեռային ցուցիչ՝ արտահայտված յուրաքանչյուր սեռի համար նախատեսված սգո հագուստի պարագայով. կնոջ համար՝ **սգո զգեստ**, տղամարդու համար՝ **գլխարկին ամրացվող սև ժապավեն**: Հայերենում ունենք **սևազգեստ, սևավոր** ածականները:

Վերադառնալով անգլերեն **dress** գոյականին՝ նշենք նաև, որ այն չունի հայերեն **զգեստ** գոյականի փոխաբերական իմաստը՝ *այն, որով մի բան պատվում, ծածկվում է, ծածկույթ (քուսականություն, կանաչ, ձյուն և այլն)*, և այդ իմաստն անգլերենում արտահայտվում է **to dress** բայով:

Օրինակ՝ *Beautiful autumn tree branches **dressed in leaves and raindrops** were shining in the sun.* (<https://www.dreamstime.com>)

Անգլերեն **dress** բառն առավելապես ընկալվում է որպես կնոջ հագուստի պարագա: Բացատրական բառարաններում այն ներկայացված է **dress** բառի նշանակության մեջ (*an outer garment (as for **a woman or girl**) usually consisting of a one-piece bodice and skirt-վերնազգեստ (կնոջ կամ աղջկա համար), որը սովորաբար բաղկացած է մարմնի վերևի մասին հագնելու հագուստի պարագայից և կիսաշրջազգեստից*):

Վերոնշյալ իմական արտացոլված է նաև **apparel** բառում, այն է՝ something that clothes or adorns (մի բան, որը ծածկում կամ զարդարում է), օրինակ՝ *the bright **apparel** of spring* (*գարնան պայծառ հագուստը*):

Անգլերեն **clothes** բառիմաստային խմբում նկատելի է բառերի լեզվաճանաչման տարբերակվածություն: Մեծաթիվ են ոչ պաշտոնական բառապաշարին պատկանող բառերը՝ **duds, gear, get-up, glad rags, rigout, togs**, կան նաև բրիտանական սլենգային բառեր՝ **clobber, schmutter, threads** և հնաբանություններ՝ **habits, raiment**:

Այս բառերից մի քանիսին միավորում է *հագուստ և անձնական իրեր* իմակը՝ **gear, duds, clobber**, որոնց հայերեն ոչ պաշտոնական խոսքում կարող է համապատասխանել **շոր-մոր** կրկնավոր բարդությունը, որը հայոց լեզվին բնորոշ կրկնավոր բարդություններում հնչյունափոխության շնորհիվ ընդարձակել է **շոր-ի** բառիմաստը և ձեռք բերել **հավաքականության, բազմակիության** ավելի լայն նշանակություն:

Վերոնշյալ անգլերեն բառերից շատերն ունեն որոշակի հուզարտահայտչական, գնահատողական նշույթավորվածություն՝ **duds, rag, glad rags** (inf.): Կարծում ենք՝ այս խմբում կարելի է ընդգրկել նաև **schmutter** (հագուստ, կտոր) սլենգային բառը, որի բառարանային սահմանման մեջ արտացոլված չէ տվյալ նրբերանգը, սակայն համաձայն ստուգաբանության՝ այն սերում է եբրայերենից՝ **schmatte** (լաթ) և ունի նույն նշանակությունը, ինչ **rag** (լաթ) բառը:

Հետաքրքրական է, որ անգլերեն **clothes** բառի հոմանիշային շարքում առկա է **wardrobe** բառը, իսկ նրա հայերեն համարժեք **զգեստապահարան** բառն ամրագրված չէ հայերենի բառարաններում որպես **հագուստ** բառի հոմանիշ, թեև հայերենում նույնպես կարելի է հանդիպել նրա փոխանվանական կիրառությանը: Օրինակ՝ «*ՁԼՄ-ների ներկայացուցիչները վերլուծում էին Մելանյա Թրամփի **զգեստապահարանը**...*» (<https://www.slaq.am/news/melanya-thramphi-zges-tapaharany>):

Անգլերեն **wardrobe** բառի իմականերից մեկը չի առկայանում հայ լեզվամշակույթում, այն է՝ **3a: the department of a royal household entrusted with the care of wearing apparel, jewels, and personal articles** (արքունիքի բաժին, որին վստահված է հագուստի, զարդերի և անձնական իրերի խնամքը), ինչը, կարծես, միանգամայն օրինաչափ կարելի է համարել՝ հաշվի առնելով բրիտանական աշխարհի պատկերում արքունական ընտանիքի՝ հագուկապը կարևորելու սովորույթը:

Առանձնակի ուշադրության է արժանի **habits** բառը, որն ինչպես *հասարակական դիրքի, մասնագիտության՝ b: a costume characteristic of a calling, rank, or function* (հասարակական դիրքին, մասնագիտությանը կամ գործառույթին բնորոշ հանդերձ), այնպես էլ *ազգային/մշակութային ինքնության ցուցիչ է՝ c: a costume worn for horseback riding* (ծիավարության համար նախատեսված հագուստ): Ու թեև այն հնաբանություն է, այսօր էլ կիրառական է, քանի որ մինչ օրս ձիերն ու ձիարշավը բրիտանական մշակույթի անքակտելի մասն են, ինչը հստակ արտահայտված է լեզվում **horse** բառի բառակազմական և բառակապակցական լայն կիրառմամբ: Ձիարշավը և ձիարշավի համար նախատեսված հագուստը կարևորվում է բրիտանական մշակույթում, քանի որ ինչպես իրենք են ասում՝ **clothes make the rider** (հագուստն է հեծյալին հեծյալ դարձնում): Ու թեև հայերեն բացատրական բառարաններում նույնպես գտանք հեծյալի հագուստն անվանող բառույթը՝ **ասպազգեստ**⁵ (Աղայան, 1976, հ.1, էջ 112), այն գրեթե կիրառական չէ:

Անգլերեն **clothes** բառի հոմանիշների շարքում գերակշռում են պարզ և պարզ ածանցավոր բառերը: Այս բառիմաստային խումբն առանձնանում է ինչպես ներկա, այնպես էլ արտակա հոգնակիությամբ: Հոգնակիություն արտահայտող **-s/-es** վերջավորություն ունեն **32** բառից **10-ը**: Դեռ ավելին, հագուստ բառիմաստային խմբի այնպիսի անդամներ, ինչպիսիք են **threads, duds** և այլն, այս խմբում են ընդգրկվում՝ հոգնակի թիվ ստանալով միայն:

Այսպիսով, անգլերեն **clothes/հագուստ** բառիմաստային խմբում առկա են հետևյալ իմակաները՝ **1. մարդու մերկությունը ծածկելուն ծառայող հագնելիք, 2.վրան միաժամանակ կրելու հագուստների ու հարդարանքի ամբողջություն, կոստյում, հանդերձ, 3.հագնելը,**

⁵ Ըստ Հ. Աճառեանի՝ հայերենում **ասպ** (պարսկ. **ձի** բառից) բառն առանձին չի գործածվել, կա միայն մի քանի բարդ և ածանցավոր ձևերում, ինչպես՝ **ասպազեն, ասպաստան, ասպետ, ասպարեզ, ասպատակ** և այլն: (Աճառեան, 1926, հ.1, էջ 270)

հագուստ կրելը, պատրաստվելը, 4. զգեստների ամբողջություն, հագուստեղեն, 5. նորածնություն, 6. ժամանակաշրջանի, վայրի և դասային վերաբերություն ունեցող հագուստ և հարդարանքի պարագաներ, 7. կերպարային հանդերձանք, դիմակահանդեսի հագուստ, 8. բեմական հագուստ, 9. կրոնավորի հագուստ, ծիսական հագուստ, 10. հագուստի առանձին տարր, պարագա, 11. հագած, հագին ունեցած զգեստը, 12. սզո զգեստ, 13. հագուստի տարբեր հարկանիշներ (իրադրությանը համապատասխան, համահունչ, հարուկ առիթի, չսազող, շքեղ), 14. զգեստապահարան, 15. թագավորական կամ ազնվական տան բաժին, որին վստահված է հագուստ, զարդեր և անձնական իրեր պահպանելու գործը, 16. հագնելաձև, 17. կտոր, ցանց, կտորեղեն, սպիտակեղեն, կտորի պատառ, 18. մաշված շոր, 19. հագուստի կրելի և դիմացկուն լինելը, 20. խանութում վաճառվող հագուստ, 21. հեծյալի հանդերձանք, զրահ (հարկապես ձիերի), 22. փխբ. այն, որով մի բան պատվում, ծածկվում է, ծածկույթ (բուսականություն, կանաչ, ձյուն և այլն):

Այսպիսով, անգլերենում **clothes** բառիմաստային խմբում առկայանում է մոտավորապես 22 իմակ: Իմաստային առումով ամենատարողունակն են **clothes, dress, wear, costume, apparel, wardrobe** բառերը, որոնցից **clothes** բառն առավել չեզոք է: Ներկայացնենք ասվածը հետևյալ գծապատկերով:

Գծապատկեր 1. Անգլերեն **clothes/հագուստ** բառիմաստային խմբի միջուկը, մերձավոր և հեռավոր եզրային շերտերը



Գծապատկեր 1-ում երևում է, որ ուսումնասիրվող բառիմաստային խմբի կենտրոնական միավորը **clothes** բառն է, *մերձավոր եզրային* շերտը կազմում են **clothing, wear, wearables, dress, outfit, costume, wardrobe, garments, apparel, ensemble, attire, vestment, vesture** բառերը, իսկ *հեռավոր եզրային* շերտում **weeds, gear, habits, get-up, threads, toilet, duds, clobber, garb, togs, toggery, rag, glad rags, raiment, schmutter, rig, rigging, rigout** բառերն են:

Անգլերենի **clothes/հագուստ** բառիմաստային խմբի իմաստային վերլուծությունը թույլ է տալիս վերհանել անգլիական **ինքնության** ցուցիչները, որոնք դուրս ենք բերել անգլերեն **clothes/հագուստ** բառիմաստային խմբի իմաստային դաշտում արտացոլված իմաստներից ու դասակարգել՝ ըստ ինքնության տեսակների (Տե՛ս Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. *Անգլերենի clothes/հագուստ բառիմաստային խմբում արտահայտված ինքնության ցուցիչները*

ԱՆԳԼԵՐԵՆ
ազգային/մշակութային ինքնություն
սեռային ինքնություն
կրոնական ինքնություն
մասնագիտություն
բարեկեցություն
հոգեվիճակ
հասարակական դիրք, արքունական պատկանելություն, ազնվականություն
ժամանակաշրջան
վայր
նորաձևություն

Ինչպես երևում է Գծապատկեր 2-ում, անգլերեն **clothes/հագուստ** բառիմաստային խմբում առկայանում են *ինքնության* տարբեր ցուցիչներ՝ **ազգային/մշակութային, սեռային, կրոնական ինքնություն, մասնագիտություն, բարեկեցություն/անբարեկեցություն, բացասական հոգեվիճակ, հասարակական դիրք՝ արքունական պատկանելություն, ազնվականություն, ժամանակաշրջանի, վայրի, նորաձևության** վերաբերություն ունեցող ցուցիչները:

Եզրակացություն

Ուսումնասիրության արդյունքում կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. Բրիտանական աշխարհի լեզվական պատկերում հազուստն առկայանում է **clothes, clothing, wear, wearables, weeds, dress, gear, habits, get-up, outfit, costume, threads, wardrobe, ensemble, garments, toilet, duds, apparel, clobber, attire, garb, togs, toggery, vestment, rag, glad rags, raiment, vesture, schmutter, rig, rigging, rigout (32)** հոմանիշային շարքով:
2. Այս բառիմաստային խմբի **կենտրոնական բառը՝ նույնացուցիչը clothes** բառն է, որի միջոցով բառարաններում սահմանվում են բառիմաստային խմբի մնացյալ անդամները: Իմբում քանակական առումով գերիշխում է *հեռավոր եզրային* շերտը՝ **18** բառ, իսկ *մերձավոր եզրային* շերտը ներկայացված է **13** բառով:
3. Անգլերենի **clothes** բառի հոմանիշների շարքն առանձնանում է պարզ և պարզ ածանցավոր բառերի գերակշռությամբ և ներակա ու արտակա հոգնակիությամբ (32 բառից 10-ը ունեն արտակա հոգնակի թիվ, որոշ անդամներ այս բառիմաստային խմբում ընդգրկվում են հոգնակի թիվ ստանալու արդյունքում):
4. Բառիմաստային խմբում առկայնում է 22 իմակ, որոնք արտացոլում են բրիտանական լեզվամշակույթում **clothes/հագուստ** բառիմաստային խմբի լայն բովանդակային դաշտը և նրանում առկայացող ինքնության ցուցիչները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. Աղայան Էդ. (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, հ. 1-2: Aghayan E'd. (1976), Ardi hayereni bacatrakan bar'aran, Erevan, h. 1-2: (In Armenian)
2. Աճառեան Հ. (1926), Հայերեն արմատական բառարան, Երևանի Համալսարանի հրատ., Երևան, հ. 1-4: Atwar'ean H. (1926), Hayeren armatakan bar'aran, Erevani Hamalsarani hrat., Erevan, h. 1-4: (In Armenian)
3. Ընդհանուր լեզվաբանության դասընթաց (2008) /Ֆ.դը Սոսյուր, Թարգմ., առաջաբ. և ծանոթագր.' Ա. Մուրադյան, Իմբ. Ե. Թադևոսյան, Երևան, 372 էջ:

Y'ndhanowr lezvabanowt'yan dasy'nt'ac (2008) /F.dy' Sosyowr, T'argm., ar'ajab. & c'anot'agr.' A. Mowradyan, Xmb. E. T'ad&osyan, Erevan, 372 e'j: (In Armenian)

4. Մալխասեանց Ս. (1944), Հայերէն բացատրական բառարան. Երեւան: Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն:
Malxaseanc S. (1944), Hayere'n bacatrakan bar'aran. Erewan: Haykakan SSR' Petakan Hratarakchowt'iwn: (In Armenian)
5. Apresyan, Yu.D. (1995). Selected Compositions: In two volumes. Lexical Semantics. Moscow. 472 p.
6. British National Corpus: <https://www.english-corpora.org/bnc>
7. Cambridge Advanced Learner's Dictionary (2005). Cambridge: Cambridge University Press, 1572 p.
8. Collins Dictionary Online: <http://www.collinsdictionaryonline.com>
9. Greimas, A. J. (1987). On Meaning. Selected Writings in Semiotic Theory, Minnesota: University of Minnesota Press, 251 p.
10. <https://www.dreamstime.com> (17/11/2024)
11. <https://www.slaq.am/news/melanya-thramphi-zgestapaharany> (17/11/2024)
12. Macmillan English Dictionary for Advanced Learners (2007). 2nd ed., Macmillan Education, 1748 p.
13. Merriam-Webster Dictionary Online: <https://www.merriam-webster.com>
14. Oxford Advanced Learner's Dictionary of Current English by A. S. Hornby (2006). 7th ed., Oxford: Oxford University Press, 1715 p.
15. Partridge, E. (2006). Origins. A Short Etymological Dictionary of Modern English. London, N.Y.: Routledge Taylor and Francis Group, 4218 p.
16. The Etymological Dictionary of the English Language: <http://www.etymonline.com>
17. Гак В. Г. (1998). Языковые преобразования. - Москва. Языки русской культуры, - 764 с.
Gak V. G., Jazykovye preobrazovanija. -Moskva. Jazyki russkoj kul'tury,- 764 s. (In Russian)

РУЗАН МУСЕЯН - ЛИНГВОКУЛЬТУРОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ЛЕКСИКО-СЕМАНТИЧЕСКОЙ ГРУППЫ “ОДЕЖДА” В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

Ключевые слова: одежда, лексико-семантическая группа, ядро и периферия, сема, идентичность, лингвокультура

Статья посвящена лингвокультурологическому анализу лексико-семантической группы “одежда” в английском языке. Цель статьи - выделить и проанализировать семантические особенности и дифференциальные признаки языкового знака “одежда” и синонимического ряда “одежда”. Соответствующая лексико-семантическая группа рассматривается авторами в качестве основной единицы лексической парадигмы, изучение которой позволит выделить культурные пласты и маркеры идентичности в британской лингвокультуре.

RUZAN MUSEYAN - LINGUO-CULTURAL ANALYSIS OF LEXICO-SEMANTIC GROUP "CLOTHES" IN ENGLISH

Keywords: clothes, lexico-semantic group, core and periphery, seme, identity, linguo-culture

This article focuses on the linguo-cultural analysis of the lexico-semantic group "clothes" in English. Its primary aim is to examine and analyze the semantic features of the linguistic sign "clothes," including its synonymic set and distinguishing characteristics.

The lexico-semantic group is considered a central concept in modern semantics and a fundamental unit within the lexical paradigm. The study of this group provides an insight into cultural layers and identity markers within British linguo-culture, highlighting how language reflects cultural norms, values, and social identity.

Ներկայացվել է՝ 22.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 14.10.2024 թ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԶՈՐԻ - մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

БАРСЕГЯН ЗОРИ - кандидат педагогических наук, ассистент, Национальный политехнический университет Армении

BARSEGHYAN ZORI - Candidate of Sciences (Pedagogy), Assistant, National Polytechnic University of Armenia

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԻԼԻԹ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայագիտության ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ГЕВОРГЯН ЛИЛИТ - кандидат филологических наук, доцент кафедры арменоведения, Государственный университет им. В. Брюсова

GEVORGYAN LILITH - Candidate of Sciences (Philology), Associate Professor, Chair of Armenian Studies, Brusov State University

ԳՅՈՒՋԻՆՅԱՆ ԴԱՎԻԹ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայագիտության ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ГЮРДЖИНЯН ДАВИД - кандидат филологических наук, доцент, кафедра арменоведения, Государственный университет им. В. Брюсова

GYURJINYAN DAVIT - Candidate of Sciences (Philology), Associate Professor, Chair of Armenian Studies, Brusov State University

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԵՎԿԱՏ - հայցորդ, դասախոս, Համաշխարհային գրականության և քաղաքակրթությունների ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ХАЧАТРЯН АРЕВАТ - соискатель, преподаватель, кафедра мировой литературы и цивилизаций, Государственный университет им. В. Брюсова

KNACHATRYAN AREVHAT - Researcher, Lecturer, Chair of World Literature and Civilizations, Brusov State University

ԼԻՆ ՏՈՆ - Իրավագիտության դոկտոր, Դալյանի օտար լեզուների համալսարան, ՉԺՀ

ЛИН ДУН - доктор юридических наук, Даляньский университет иностранных языков, КНР

LING DONG - Doctor of Law, Dalian University of Foreign Languages, China

ԿԵՍԱՐԵՎԱ ՕԼԳԱ - դասախոս, Ռուսաց լեզվի ինստիտուտ, Դալյանի օտար լեզուների համալսարան, ՉԺՀ

КЕСАРЕВА ОЛЬГА - преподаватель, Институт русского языка, Даляньский университет иностранных языков, КНР

KESAREVA OLGA - Lecturer, Institute of Russian Language, Dalian University of Foreign Languages, China

ՃՈՈՒ ՇԻՅԻ - մագիստրատուրայի ուսանող, Ռուսաց լեզվի ինստիտուտ, Դալյանի օտար լեզուների համալսարան, ՉԺՀ

ШИЦИ ЧЖОУ - магистрант, Институт русского языка, Даляньский университет иностранных языков, КНР

SHIQI ZHOU - Master's student Institute of Russian Language, Dalian University of Foreign Languages, China

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԱԻԴԱ - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայոց լեզվի ամբիոն, Երևանի պետական համալսարան

МОВСИСЯН АНАИДА - кандидат филологических наук, доцент, кафедра армянского языка, Ереванский государственный университет

MOVSISYAN ANAIDA - Candidate of Sciences (Philology), Associate Professor, Chair of Armenian Language, Yerevan State University

ՄՈՒՍԵՅԱՆ ՌՈՒԶԱՆ - բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս, անգլերենի ամբիոն, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

МУСЕЯН РУЗАН - кандидат филологических наук, старший преподаватель, кафедра английского языка

MUSEYAN RUZAN - Candidate of Sciences (Philology), Senior Lecturer, Chair of English, Brusov State University

Համակարգչային ձևավորումը՝

Հասնիկ Փիլավջանի

Տպաքանակը՝ 100

«Լինգվա» հրատարակչություն
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ 0002, Երևան, Թումանյան փող. 42
Հեռ.՝ (+374) 10 52 20 20
Էլ. հասցե՝ bsu.sciencedep@gmail.com
<http://www.brusov.am>

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականի 1(70) համարը երաշխավորվել է տպագրության ԲՊՀ գիտական խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 29-ի № 4 նիստի որոշմամբ:

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Բանբեր» գիտական պարբերականում տպագրության համար հողվածներին առաջադրվող պահանջները ներկայացված են ԲՊՀ պաշտոնական կայքում.

https://brusov.am/hy/journal_list/banber_v_bryusovi_anvan_petakan_hamalsarani